ISSN 1829-2003

ՎԱՐԶՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

VARDZK

DUTY OF SOUL

N 15 2021

ԱՐՄԵՆ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ - 80

էջ 1

Սամվել Կարապետյան

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ



էջ 3

Ռաֆֆի Քորթոշյան

ՓՐԿՎԱԾ ՄԱՍՆԻԿՆԵՐ ՀՈՇՈՏՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ

էջ 19

Գրիգորիս եպիսկոպոս Աղվանեանց

ՓՈԽԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃԱԿԻՆ ԳԱՆՁԱԿՈՒ

էջ 26

Աշոտ Հակոբյան

ԳՅԱՎՐԵՆՋԻ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԵՑԽՈՐԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

էջ 44

Շահէն Յովսէփեան

ՇԱՀ ԱԲԱՍ Ա-Ի ՀԱԿԱՕՍՄԱՆԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

էջ 48

Նարեկ Սարգսյան

ՀԱՅԱԶԳԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ ԲԱՔՎԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԴԻՄԱԳԾԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

էջ 53

Էմմա Աբրահամյան

ԹԱՂՈՏ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

էջ 59

ՎԱՐՁ

N 15 2021

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

EDITORIAL BOARD

ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
EMMA ABRAHAMIAN

ՌԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ
RAFFI KORTOSHIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
HASMIK HOVHANNISSIAN

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂՆԵՐ

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ՔՈՐԹՈՇՅԱՆ

Designers
ARMEN GEVORGIAN
LIANA
HOVHANNISSIAN-KORTOSHIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա089223
ՏՐՎԱԾ 13.10.2010

Certificate No. 03Ա089223
Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՌԱՖՖԻ ՔՈՐԹՈՇՅԱՆ

Responsible for this issue
RAFFI KORTOSHIAN

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24/4

Baghramian 24/4 , Yerevan, RA

http://www.armenianarchitecture.am
http://www.raa.am
raayer@sci.am, raatransfer@yahoo.com
ՀՅՈՒ Հայաստան RAA Armenia
010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
© Research on Armenian Architecture

ԱՐՄԵՆ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ - 80

Ի՜նք՝
հաւատքի քարերը
փնտրող-գտնող
եւ չափագրող առաքեալը՝
նե՜ղ լուսամուտէն նե՛ռս ծորող,
խորանին ինկնող
արեւագալի շողը...
Այսօ՛ր,
հո՛ս,
բարձրաձայն լռութեան մէջ
ե՛ս կամ դո՛ւն,
թերեւս ալ ա՛ն՝,
այսինքն՝ մենք,
պճեղ-պճեղ
ստացած ենք իր սէրը, ինչպէս լուսամուտէն
ծորող
խորանին ինկնող
արեւագալի շողը...

Շնորհակալութի՜ւն...
Ագուլիսցի Արմէն...

Անահիտ Սարգիսեան

Ա. Հախնազարյանը ՀՀ Ազգային ժողովի պատվո շքանշանակիր, 2008 թ. հունիսի 10

Հարազատ ժողովրդի արժանավոր զավակներն ու մեծագույն մարդիկ նրանք են, որոնց իղձերի փառապսակը հայրենանվեր գործունեությունն է: Այդպիսի անհատներից է Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (այնուհետ՝ հիմնադրամ) հիմնադիր-նախագահ, ճարտարապետության դոկտոր Արմեն Հախնազարյանը, որին կարելի է դասել անձնվեր նվիրյալների հույլին:

Նրան բնորոշ էին իմացական լույսը, վեհ գաղափարները, սրտի զգայուն թրթիռն ու բարի կամեցողությունը:

Նա, հանուն իր առաքելության, դարձել էր Հայրենիքի կամավոր զինվոր, միտքն ու հոգին ի սպաս դրել նախնյաց հիշատակները «գոնե թղթի վրա» փրկելու և պահպանելու վեհ գործին:

2021 թ. մայիսի 5-ին կբոլորեր ծննդյան 80-ամյակը: Հայրը՝ Ագուլիսի կոտորածներից փրկված Հովհաննես Հախնազարյանը, Թեհրանի հայոց դպրոցների տեսուչն էր, մայրը՝ դաշնակահարուհի Արուսյակ Մելիք-Մարգարյան-Հախնազարյանը:

1959 թ. ավարտելով Թեհրանի Քուշեշ-Դավթյան դպրոցը՝ Հախնազարյանն ուսումը շարունակել է Գերմանիայում: 1969 թ. ավարտել է Ահենի Հռենոս-Վեսֆալիայի բարձրագույն տեխնիկական դպրոցի ճարտարապետության և քաղաքացիական ճարտարագիտության ֆակուլտետի ճարտարապետության, իսկ 1973 թ.՝ քաղաքաշինության բաժինը՝ որպես ճարտարապետության դոկտոր:

Հայ ճարտարապետությամբ սկսել է զբաղվել ուսանողական տարիներից: Դեռևս 1968 թ. ստանալով պարսից թագավորի թույլտվությունը՝ կես տարվա ընթացքում մանրազնին չափագրել է Վասպուրական նահանգի Արտազ գավառի Թադեոս առաքյալի վանքը: Հախնազարյանի ուսումնասիրած գլխավոր հուշարձաններից էին նաև Մաղարդավանքի Սբ. Ստեփանոս Նախավկա և Ծործորի Սբ. Աստվածածին եկեղեցիները, որոնց հետազոտությունների արդյունքներն ամփոփվել են «Արտազի երեք վանքերը» աշխատության մեջ: Ցավոք, այն հրատարակվեց միայն նրա մահվանից երեք տարի անց՝ 2012 թ.:

Ա. Հախնազարյանին նվիրված «Վարձք» հանդեսի կազմը և ՀՃՈՒ գրասենյակում 2007 թ.

1970 թվականը շրջադարձային էր Հախնազարյանի հետագա գործունեության համար. առաջին անգամ մեկնում է բռնազավթված Արևմտյան Հայաստան և անձամբ տեսնելով թուրքական պետության իրագործած մշակութային եղեռնի հետևանքները՝ սկսում է իր առաքելությունը, որին և կոչված էր: Մինչև 1970-ական թթ. վերջերը ծնունդով մոսկեցի նյույորքաբնակ ֆիզիկոս Վազգեն Բարսեղյանի նյութական աջակցությամբ խիստ դժվարին և վտանգավոր, անգամ անիրական թվացող վեց ճամփորդություն է կատարում դեպի Երկիր: Այդ ընթացքում ուսումնասիրում, լուսանկարում է նախնյաց մշակութային արժեքները՝ դրանով իսկ դառնալով գրեթե առաջին հայ հետազոտողը, որը նպատակամղված անում էր գրեթե անհնարին: Ամեն մի դժվարություն հանձն առնելու գերագույն և նվիրական գիտակցությամբ իր նպատակներն իրագործելու ճանապարհին երբեք չընկրկեց անգամ այն ժամանակ, երբ եղեռնագործ պետության համար դարձավ անցանկալի անձ, և արգելվեց նրա մուտքը Թուրքիա: Սակայն նա գտավ ելքը. կազմեց խմբեր և նրանց անհրաժեշտ ցուցումներ տալով՝ առանց իր մասնակցության ուղղորդեց դեպի նպատակակետ՝ Արևմտյան Հայաստան: Այդ խմբերի մեջ ընդգրկեց նաև կնոջը՝ ճարտարապետ Մարգրիթ Բունեմանն-Հախնազարյանին:

1990 թ. Ա. Հախնազարյանն ու Ս. Կարապետյանը որոշում են համագործակցաբար շարունակել իրենց հայրենանվեր աշխատանքը և 2000 թ. փետրվարի 22-ին հիմնադրում են ՀՃՈՒ հ/կ երևանյան գրասենյակը: Վերոնշյալ դաշտային աշխատանքները, սկսած 2004 թ.-ից մինչև Հախնազարյանի կյանքի վերջը, դարձյալ նրա անձնական միջոցներով և Սամվել Կարապետյանի գլխավորությամբ շարունակեցին Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի՝ հայաստանյան մասնաճյուղի արշավախմբի անդամները:

Արմեն Հախնազարյանը՝ որպես ճարտարապետ, մասնակցել է նաև պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձանների վերականգնման աշխատանքներին ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Արցախում, Իրանում, Սիրիայում:

Հախնազարյանի հայրենանվեր գործունեությունն անտես չմնաց. 2008 թ. հունիսի 10-ին պարգևատրվել է ՀՀ Ազգային ժողովի պատվո, 2009 թ. հունվարի 29-ին՝ Հայաստանի Ազգային գրադարանի Հակոբ Մեղապարտի անվան շքանշանով: Նույն թվականին արժանացել է նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվոգրի:

Մինչև կյանքի վերջը՝ 2009 թ. փետրվարի 19-ը, Հախնազարյանը մնաց հայությանը մշտապես ծառայելու առաջնագծում: Նրա անձնվեր գործունեությունը, հրատարակությունները, այսօր արդեն արխիվային նշանակություն ունեցող բացառիկ լուսանկարները և չափագրություններն իրենց արժանի տեղն են գրավում հայկական մշակութային արժեքների գանձարանում: Արմեն Հախնազարյանի ժառանգությունն անգնահատելի է մեզ համար, անունը՝ ոգևորիչ, գործը՝ պարտավորեցնող, հիշատակը՝ պայծառ ու անմոռաց:

Խմբագրակազմ

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Սամվել Կարապետյան

Միջնադարյան Հայաստանի պատմական ամենատարբեր անցքերի ուսումնասիրության համար միանգամայն վավերական և անփոխարինելի սկզբնաղբյուր ծառայող վիմագրական ժառանգությամբ առանձնապես հարուստ հնավայրերից է մեծահռչակ Հոռոմոսի վանքը:

Գլխավորապես Ժ-ԺԳ դարերի ընթացքում կառուցված վանական համալիրի՝ մեկ տասնյակից ավելի շինություններից գրեթե յուրաքանչյուրի որմերին եղել են կամ կան ընդհանուր առմամբ ավելի քան հարյուր միավոր վիմագիր արձանագրություններ: Վերջիններս, ըստ դարաշրջանների, բաշխվում են հետևյալ կերպ.

դար	միավոր
Ժ	2
ԺԱ	7
ԺԲ	8
ԺԳ	60
ԺԴ	5
ԺԵ	2
ԺԷ	3
ԺԸ	3
ԺԹ-Ի	12-ից ավելի

Հարկ է նկատել, որ Ժ-ԺԱ դարերի բոլոր 9 միավոր արձանագրությունն էլ փորագրվել է Բագրատունյաց թագավորության տարիներին (եզրային տարեթվերն են՝ 977-1038 թթ.), իսկ ԺԲ-ԺԳ դարերով թվագրվածների առյուծի բաժինն էլ ավանդվել է Զաքարյան իշխանապետության ժամանակաշրջանից: Ասվածը հուշում է բնական այն իրավիճակը, որ մշակույթի այլ ոլորտների նման հայ վիմագրության ծաղկման ժամանակաշրջանն էլ ուղղակիորեն կապվել է երկրում ազգային իշխանությունների գոյության հետ:

Առավելապես նվիրատվական, ապա նաև շինարարական բովանդակությամբ առկա վիմագրերի մեծագույն մասը փորագիր է (միայն մեկ դեպքում՝ նաև ելնդագիր) կամ ներկագիր (օգտագործված են սև և կարմիր գույները):

Հոռոմոսի վիմագրական ժառանգության ընդօրինակման և հրապարակման հույժ կարևոր գործը՝ ի դեմս Հ. Շահխաթունյանցի[1], հայագետների ուշադրությանն է արժանացել՝ սկսած 1830-ական թվականներից: Երախտաշատ գիտնականն առաջին անգամ վանքից ընդօրինակել և 1842 թ. հրատարակել է 4 միավոր արձանագրություն: Այնուհետև 1848 թ. տեղում առավել ծավալուն աշխատանք է կատարում Կարսի առաջնորդ և միևնույն ժամանակ վանքի վանահայր Կարապետ վարդապետը, որի ընդօրինակած 21 միավոր վիմագրերը լույս են տեսնում հաջորդ իսկ տարում[2]:

Զանց առնելով արդեն հրատարակվածները՝ 1851 թ. տեղում կատարած ուսումնասիրությունների հիման վրա 1855 թ. ևս 3 միավոր վիմագիր է հրապարակում Աբել վարդապետ Մխիթարյանցը[3]: 1850-ական թթ. սկզբներին Հոռոմոս կատարած այցելությունից հետո 8 միավոր (դրանցից 2-ը՝ առաջին անգամ) վիմագիր էլ 1858 թ. հրապարակում է Սարգիս արք. Ջալալյանցը[4], որի ընթերցումները, սակայն, աչքի են ընկնում մեծաթիվ անճշտություններով:

Դեռևս 1840-ական թվականներին բնագավառին առնչվող աննախադեպ ծավալուն հետազոտությունների արդյունքները 1864 թ. լույս է ընծայում մեծավաստակ գիտնական հայր Ներսես Սարգսյանը: Նրա ջանքերի շնորհիվ գրեթե անսխալ վերծանություններով գիտական շրջանառության մեջ է դրվում 65 վիմագիր (39-ը՝ առաջին անգամ)[5]:

1870 թ. վանքին նվիրված առանձին ուսումնասիրության մեջ 31 միավոր արձանագրություն է հրապարակում (միայն 1-ը՝ առաջին անգամ) կրկին Աբել արքեպիսկոպոսը[6]:

Ի մի բերելով նախկին հետազոտողների աշխատանքները՝ 1881 թ. հայր Ղևոնդ Ալիշանը հրատարակում է 57 վիմագիր[7]:

Եվս 42 միավոր (2-ը՝ առաջին անգամ) վիմագիր էլ 1903 թ. հրատարակում է Մելքիսեդեկ քահանա Գևորգյանցը[8], իսկ 1904 թ. 2 միավոր (1-ը՝ առաջին անգամ) վիմագրի հրատարակմամբ իր համեստ նպաստն է բերում նաև Հուսիկ եպիսկոպոս Տեր-

1 **Շահխաթունեանց Յ.**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842:

2 **Կարապետ վարդապետ**, Ստորագրութիւն վանօրէից և եկեղեցեաց, որք են ի շրջակայսն Անւոյ ի գաւառս Շիրակվանի կամ Շիրակ աւանի, Հայաստան երկրիս. Յաղագս Խօշայ վանից, «Հայաստան», 1849, № 46, 14 մայիսի, էջ 4; № 6, 6 օգոստոսի, էջ 4; № 10, 5 սեպտեմբերի, էջ 3-4:

3 **Մխիթարեանց Ա.**, Ճանապարհորդութիւն յԱնի, Կ.Պոլիս, 1855 (այսուհետ՝ **Մխիթարեանց Ա.**, համապատասխան էջերով):

4 **Ջալալեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858:

5 **Սարգիսեան Ն.**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864:

6 **Աբէլ արքեպիսկոպոս**, Պատմական տեղեկութիւնք զհաստատութենէ Հոռոմոսին վանաց ի Շիրակ, «Արարատ», 1870, Թ, էջ 220-222; Ժ, էջ 244-248; ԺԱ, էջ 269-272; ԺԲ, էջ 297-302:

7 **Ալիշան Ղ.**, Շիրակ, Վենետիկ, 1881:

8 **Մելքիսեդեկ քհ. Գէորգեանց Շիրակացւոյ**, Համառօտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակայ եւ մայրաքաղաքին Անւոյ (այսուհետև՝ **Գէորգեանց Մ.**), Աղէքսաղրապօլ, 1903:

Հոռոմոսի վանական համալիրը հյուսիս-արևելքից (լուս.՝ հոդվածագրի, 2014 թ.)

Մովսիսյանը[9]: Գրեթե առանց բացառության Ն. Սարգսյանի հրատարակությունից քաղելով՝ 1913 թ. ընտրողաբար 58 միավոր արձանագրություն է հրատարակում նաև Կարապետ Կոստանյանը[10]:

Պայմանավորված Կարսի մարզի բռնազավթմամբ՝ միայն շուրջ վեց տասնամյակ անց Հոռոմոսի վիմագրերին վերստին կարողանում է անդրադառնալ ֆրանսիացի հետազոտող Ժան-Միշել Թիերրին և 1950-ական թվականներից ի վեր տեղում կատարած ուսումնասիրությունների հիման վրա 1980 թ. հրատարակում է 65 միավոր (3-ը՝ առաջին անգամ) վիմագիր[11], իսկ 2002 թ. Անի Բալադյանի հետ միասին գրեթե անփոփոխ կրկնում են նախորդ հրատարակության նյութերը[12]:

2008 թ. Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի գիտական արշավախումբն այցելում է Հոռոմոս և որոշ ուսումնասիրություններ կատարում[13]:

Հոռոմոսի վիմագրերի հրատարակման՝ արդեն գրեթե երկդարյա գործընթացը եզրափակվում է 2015 թ. հրատարակված աշխատությամբ[14]:

Սույն հոդվածաշարով հայալեզու շրջանակների համար վերահրատարակվում է «Horomos Monastery: Art and History» գրքի վիմագրության բաժինը՝ որոշ ճշտումներով և լրացումներով:

Հաղթակամար

ա Արձանագրությունը՝ պայմանականորեն Հաղթակամար անվանված կառույցի որմին.

ՇԾԱ՞ (1102՞), ես՝ Խաչատուր, գրեցի:

Հրատ. **Ալիշան Ղ.**, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 18: Le couvent de Horomos d'après les archives de Toros Toramanian présentées par **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry** avec une contrigution de **Jean-Pierre Mahe**, Paris, 2002, p. 207. Horomos Monastery: Art and History, edited by **Vardanyan E.**, Paris, 2015, p. 480 (այսուհետ՝ գրքի վիմագրական բաժին՝ **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, համապատասխան էջերով):

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել: Հիմք ընդունելով արձանագրության՝ Ղ. Ալիշանի հրապարակումը՝ «Հաղթակամար»-ը համարվել է մինչև 1102 թ. կառուցված շինություն (տե՛ս, օրինակ, **Մաթևոսյան Կ.**, Հոռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, «Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 1, էջ 144-149), մինչդեռ համահորինվածք հայտնի մյուս բոլոր հուշարձանները (Նոր Վարագի, Եղիպատրուշի, Տեղերի վանքերում և այլն) բացառապես վերաբերում են ԺԳ դարասկզբին: Սրանից հետևում է,

9 **Յուսիկ եպս.**, Անցեալ դարերի յիշատակ, «Արարատ», 1904:

10 **Կոստանեան Կ.**, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913:

11 **Thierry J-M.**, Le couvent armenien d'Horomos, Paris, 1980.

12 Le couvent de Horomos d'après les archives de Toros Toramanian présentées par **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry** avec une contrigution de **Jean-Pierre Mahe**, Paris, 2002.

13 Նկատի ունենալով, որ վանքը գտնվում է զինվորական խիստ վերահսկողության գոտում, և մուտքի թույլտվություն ստանալն անհնար էր, խումբը տեղում ստիպված էր աշխատել ծայրահեղ շտապողականությամբ: Դրա հետևանքով էլ մի շարք արձանագրությունների ճշգրիտ տեղն անհայտ է, իսկ որոշների վերծանությունն էլ՝ անավարտ:

14 Horomos Monastery: Art and History, edited by **Vardanyan E.**, Paris, 2015. Գրքի վիմագրական բաժնում (The Horomos Inscriptions: **Samvel Karapetyan** & **Jean-Pierre Mahe**), շնորհիվ ՀՃՈՒ հիմնադրամի նախագահ հուշարձանագետ Ս. Կարապետյանի, առաջին անգամ վանքի արձանագրությունները (17-ը՝ նորահայտ) ներկայացվում են իրական՝ փորագրական, գրչագրական, գեղագրական առանձնահատկություններն արտահայտող գրչանկարներով (խմբագրակազմ):



Արձանագրությունների տեղաբաշխումը Սբ. Հովհաննես եկեղեցում և գավթում (չափ.՝ Ժ.-Մ. Թիերրիի, 1999, վերամշկ.՝ Ա. Հակոբյանի, 2021)

Արձանագրություն գ (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

որ վիմագրի ընթերցման մեջ անճշտություն կա (հավանաբար Չ-ի փոխարեն ընթերցվել է Շ), ըստ որի՝ հետագայի հիշատակագրությունը կարելի է վերագրել ԺԴ դարասկզբին (ՉՇԱ-1302 թ.): Եվ ուրեմն՝ Հոռոմոսի «Հաղթականաբ»-ը բացառություն չի կազմում և այն ևս ոչ թե Բագրատունյաց, այլ Զաքարյան իշխանապետության ժամանակաշրջանի կառույց է:

բ Արձանագրությունը՝ Հաղթականաբին.

Այս է հանգիստ Կիրակոս վարդապետին, որ նահատակեցաւ յանորինաց, յիշեցէք ի Ք(րիստո)ս, թվ(ին) ՉՂԷ (1348):

Հրատ. **Սեբիսեդիկ քհ. Գէորգեանց Շիրակացւոյ** Համառօտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակայ եւ մայրաքաղաքին Անւոյ, Աղէքսանդրապոլ, 1903, էջ 69: **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 480.

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել:

Սբ. Հովհաննես եկեղեցի

գ Արձանագրությունը՝ եկեղեցու ներսում՝ հարավային ավանդատան արևմտյան արտաքին պատին, 17 կիսաեղծ տող.

ՉԼԴ (1285), | շնորհիվ եւ ողորմութ(եամ)ք ա(ստուծո)յ, ես՝ Արամայ Տովլ|է զորդի Քրթին, թոռն Սմբատա, տվի զիմ գնած այգ|ին հէրէնիք էգին, որ Սմբատ իւր ձեռաւքն տնկել | էր, որ իմ հաւրն՝ Քրթին տվել ունայն ...|ին որդին՝ զՀայրապետն, որ իմ հայրն տայ Վարդ|համայ ...ղտրէ ...սերակ...| ... առին յետմենց ջուրն ի յայ|գին կողմ... | ի գդէն ...ետկ ...հէզէ ... հնին...ն... ...պա | տաւնին ... զյապնզտա... | ..., որ է յիշատակ մեզ եւ հատոիցին հայր ... Մկրտիչս(՞) եւ ...վնս ... նք կատար|ին մի ... | իմ ...ին զկատարիչքն աւրհնեսցին յա(ստուծո)յ ...|բէնի... [ն]զովեալ եղիցին, ՅԺԸ (319) հայրապետա|ցն եւ զՀուդային առցէ եւ զԿայէնին, ամ(է)ն:

Հրատ. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 413.

Ծանոթ. երբեէ տեղում ավելի երկար աշխատելու հնարավորության դեպքում, կարծում ենք, այս վիմագրի չընթերցված հատվածներն էապես կկրճատվեն:

դ Արձանագրությունը՝ հյուսիսարևելյան որմնասյան վրա, ներքուստ.

ՉՂԵ (1336), շնորհիւն ա(ստուծո)յ եւ ողորմութեամբ, ես՝ Վարիամ աթապակ, պարոնաց պատրոն որդի Իւանի, թոռն մեծին Շահնշայի որդի ամիրսպասալար Զաքարիայի, վասն արեւշատութեան իմոյ հայրազատ եղբարց կենդանեաց եւ հանգուցելոց պարոն Շայինշի Աղբուղին եւ Արտայշիրին Զազին եւ սիրեցել եղբարցս՝ Պիմին, Աղբուղին, Ավագ Սարգսի Իմնայի Պանուսի մեծի եւ փոքու վասն յուսում իմոյ առ Ք(րիստո)ս, տվի ս(ուր)ք Յովանէս ոխմ յիշատակ հոգոյ իմոյ, զոր յառաջն մեր նախնիքն եւ էլ պարոնայքն տվել էին եւ գրով հաստատել, ես վերստին հաստատեցի զմերանց... ու զԳանձայհանքն ու զՋողքայ գոմն իրենց հանդայվարաւքն հողով եւ ջրով ու :Դ: (4) կոբարովն արեւելից դեհն մեծ շահրնռէն Մասքարոյ արեւմտից դեհն ջրհորն հիւսոյ դեհն խայչով փարախն հարավոյ դեհն Աբեղին ջրդիրն ոչ ոք կայ հակառակ կամաւոր գրուս ոչ ավագաց, ոչ յազատաց, ոչ ի քրիստոնէից եւ ոչ յայլազգեց. ով որ զմեր հրանս խաբանել ջանայ ամենայն հաւատ նալաթ է մեր մեղացն եւ մեր ազգին առաջի այ պարտական է եւ սպասաւորք սբ Յովանիսի հատուցին ամէն ամի Ժ (10) աւր պատարագ. :Ե: (5) ինձ, :Ե: (5) իմ նախնե(ա)ցն ի տէրութեան Վարիամա... յառաջնորդութեան հաւր Ստեփանոսի:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 158-159: **Ալիշան Ղ.**, էջ 28: **Կոստանեան Կ.**, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 165-

166: **Thierry J-M.**, Le couvent armenien d'Horomos, Paris, 1980, p. 10-11. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 174. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 415.

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել:

ե Արձանագրությունը՝ եկեղեցու ներսում, վնասված 2 տող.

... ի տէրութե(ան) Վարիամ... | [յա]ռաջնորդութե(ան) հաւր Ստէփանոսի...:

Հրատ. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 416.

Ծանոթ. ժամանակը՝ ԺԴ դար:

Սբ. Հովհաննես եկեղեցու գավիթ

զ Արձանագրությունը՝ գավթի արևմտյան ճակատից բացված մուտքի բարավորին, 10 տող.

Ի ՆՃԷ (1038) թուականիս հայ|ոց ետու ես՝ Յովաննէս շահանշահ, որդի Գագ|կա շահանշահի, զիմ այգին, որ ի Կողբ յիմ եկեղեցիս ի | սուրբ Յովաննէս, զոր շինեցի ի վանս{ս} Հռոմոմոսի հանդերձ ժա|մատամբս եւ հարիւր բեռն աղ յամենայն ամի ազատ յամենայն չարէ, | ի հայրապետութեան տ(եառ)ն Պետրոսի եւ յառաջնորդութեան ուխտիս հաւր | Յովաննիսի, արդ եթե ոք զկնի մեր հակառ կա այսմ գրոյս եւ իմ պարգեւացս պարխտական լիցի մեղաց իմոց առաջի ա(ստուծո)յ եւ ՅԺԸ (318) հայրապետացն, որ ի Նիկիա նզովեալ եղի|ցի ի կեանս եւ ի մահ, իսկ որ հաստատուն պահեն զգիր արձանի ընծայիցս, աւրհնեսցին ի Ք(րիստոս)է:

Հրատ. **Շահխաթունեանց**, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 352: **Սարգիսեան Ն.**, էջ 146: **Արէլ արքեպիսկոպոս**, Պատմական տեղեկութիւնք գիաստատութենէ Հռոմոսին վանաց ի Շիրակ, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 270: **Ալիշան Ղ.**, էջ 20: **Գէորգեանց Մ.**, էջ 73: **Կոստանեան Կ.**, էջ 32: **Thierry J-M.**, p. 26. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 176. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 417.

Ծանոթ. Արէլ արքեպիսկոպոսն *արդ եթէ*-ի փոխարեն սխալմամբ ունի՝ *արդեամբ:*

է Արձանագրությունը՝ գավթի հարավային որմին, ներքուստ.

Ի ՈՒԳ (1174) թուիս Հայոց՝ ի հայրապետութեան նահանգիս մերում տ(եառ)ն Բարսղի, ես՝ նուաստս Պետրոս երէց, եւ իմ եղբաւրորդիքս՝ զազատ Յուսիկս եւ Սիմեոն, տուաք զմեր հայրենի այգին, որ ի Փարբի, որ կոչի Խանիկշտէ ի սբ եկեղեցիքս Հռոմկոսի վանացս ի յառաջնորդութեան Խաչատրոյ եւ խնդրեմք ի սպասաւորաց ս(ր)ք(ո)ցս :Դ: (4) աւր պատարագել զՔ(րիստո)ս յամենայն ամի զհոգւոյն գալստեանն զշաբաթն եւ ...նիսի մի անուն... եւ մի աւր իրիցակնոջն ...ի մերոց կամ յաւտարաց...:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 148: **Արէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 299: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Գէորգեանց Մ.**, էջ 81: **Կոստանեան Կ.**, էջ 32: **Thierry J-M.**, p. 29. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 180. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 429.

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել:

ը Արձանագրությունը՝ գավթի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան սյուները միմյանց կապող կամարի արևմտահայաց կոր մակերեսին, 20 տող.

Ի թ(ին) ՈՒԴ (1195), | յառաջին ամն կաթողիկոսութե(ան) | տ(եառ)ն Բարսղի եւ ի տէրութե(ան) վանա|ցս Գրիգորոյ եւ Սմպատա եւ | եղբարց իւրեանց, որոց աւգնա|կան լիցի Ք(րիստո)ս ա(ստուա)ծ: |

Շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ նուաստ | հայրս Պետրոս, ս(ուր)ք ուխտիս | հաստատեցաք, եթե ոք ի ս(ուր)ք | միաբանացս փոխի ի Ք(րիստո)ս պատա|ռագ մատուցուք հաւրն՝ Դ (4) Խ (քառասունք), | երիցոյն՝ Գ (3) Խ, հաբեղային՝ Գ (3) Խ | եւ ամենայն եղբայր մի աւր | պատարագ: Եւ որ չկարէ | Ժ (10) կանոն աղաւթք արասցէ, | եթէ ոք յայս կարգելոցս պա|կասեցուսցէ խղճի եւ մեղաց պարտական է առաջի ա(ստուծո)յ, | աշխարհական, հաբեղա, ի Ք(րիստո)ս | տ(է)ր ողորմեայով, ամէն:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 150: **Արէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 298: **Ալիշան Ղ.**, էջ 22: **Գէորգեանց Մ.**, էջ 79-80: **Կոստանեան Կ.**, էջ 38: **Thierry J-M.**, p. 32. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 185. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 437.

Ծանոթ. 19-րդ տողում՝ *հաբեղա, ի Ք(րիստո)ս*-ի փոխարեն մյուս հրատարակիչներն ունեն *հաբեղայի Բ (2) Խ (քառասունք)* սխալ վերծանությունը:

Արձանագրություններ *ե, զ, ը* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

բ Արձանագրությունը՝ գավթի հարավարևելյան և հարավարևմտյան սյուները միմյանց կապող կամարի արևմտահայաց կոր մակերեսին, 17 տող.

Թ(ին) ՈԽԶ (1197), | ես՝ Խովանդամիր սուլ-
տանս, | վասն իմ արեւոյս եւ իմ որդեացն | ետու վա-
նացս մարգ յԱստեղանի | յայնկոյս գետոյն|:

Ես՝ Սուրհաւս, վասն իմ հոգւոյս | ետու զՃարպ-
կանց մարգն յԱրվաշ | եւ ես թաղեցա ի տեղս, յամե-
նայն մի | պատարագ տացեն ինձ :Գ: (3): |

Ես՝ Սմբատ, ետու զՄարանց մարգի զկէսն եւ ես
թաղեցա ի վանքս, | ի տարին պատարագ ինձ :Ժ: (10): |

Ես՝ Յոհանէս, Թադեոսի որդի, ետու |զջաղացն ի
Գլիձորին, զմիջի ակն | եւ ես թաղեցա ի վանքս,
խնդրեմ | պատարագել զՔ(րիստո)ս ի տաւնի
ս(ուր)ք Գրի|գորին, ԺԵ (15):

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 10, էջ 3: **Սարգիսեան Ն.**, էջ 152: **Ալիշան Ղ.**, էջ 23: **Կոստանեան Կ.**, էջ 61: **Thierry J-M.**, p. 34-35. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 187. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 438.

Հրատ. թվականի տասնավորն է *Խ* (40), այլ ոչ *Կ* (60) և ուրեմն՝ *1197*, ոչ թե *1217*, ինչպես, սկսած Ն. Սարգսյանից, շրջանառվել է մինչև մեր հրատարակությունը:

ժ Նախորդ՝ (վիմագիր *բ*) 1197 թ. արձանագրության տակ՝ հարավարևելյան սյան խոյակի արևմտահայաց նիստին, 4 տող.

Ես՝ մատամբս Յոհանիսիս որդի, ետու Պարտի-
զի Ջոջկաջրին | զՍեղանուցն կէսն, խնդրեմ պա-
տարագել զիս Դ (4) ժամ: |

Ես՝ Պարոնս, թոռն Գոդոյն, ետու ջաղացի կէս ի
Կամրջիձորին | զՄաշկակապն, յանուն իմ պատա-
րագ ի Քրիստոս Զ (6) ժամ:

Հրատ. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 439.

Ծանոթ. ժամանակը՝ ԺԲ դարի վերջ:

ժա Արձանագրությունը՝ գավթի հյուսիսային ճակատին՝ կլոր լուսամուտից արևելք, 16 տող.

Ի ՈՒԽԷ (1198) թիս, ես՝ հայր Մխիթար, սատարու-
թ(եամ)ք Սարգսի | կրաւնաւորի եւ կամակցութ(եամ)ք
ս(ուր)ք միաբանացս զԱկանց | ջուրն, զոր մեր հին
թագաւորացն կարի յոյժ ջանացեալ | եւ ոչ ժամանե-
ցին բերել, ա(ստուծո)յ կամաւքն մեծ ծախիւք եւ աշ-
|խատութ(եամ)ք ածաք զջուրս ի Հռոմոսի վանինս եւ
հաս|տատեցաք յամենայն ամի պատարագել
զՔ(րիստո)ս յանուն աշ|խատաւորաց ջրիս ի տաւնի
տապանակին Գ (3) աւր, | արդ եթե ոք ի մեծաց կամ
ի փոքունց հակառակ կա | ջրիս կամ գրիս զաւձին
զԿայէնին զիսաչահանուա|ցն զանէծսն առցէ եւ հայր,
որ զատ ի վանացս անի|աստանացս այլ ուրեք ջուր
տա ընդ կապանաւք է: | Եղեւ այս ի հայրապետու-
թե(ան) տ(եառ)ն Բարսղի եւ ի տէրութ|թե(ան) վանացս
Քրիստոսասէր պատրոնացս Գրիգոր հեճպին եւ |
Սմպատա եւ եղբարց իւրեանց եւ ի տէրութե(ան) քա-
ղաքիս | եւ բոլոր երկրիս մեծ Հայոց Քրիստոս)ի մեծ
զաւրականացս Զաքարէի եւ Իւան եւ, որոց հովանի
լիցի ս(ուր)ք երրորդութիւն:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 149: **Ալիշան Ղ.**, էջ 21-22: **Կոստանեան Կ.**, էջ 39: **Thierry J-M.**, p. 30. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 182. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 430-431.

ժբ Արձանագրությունը՝ գավթի արևմտյան պատին կից որմնասյուները միմյանց կապող կամարի հյուսիսահայաց կոր մակերեսին, 8 տող.

Ի ՈԾ (1201) թիս ի տէրութ(եա)ն երկրիս Զաքա-
ռիայի, | ես՝ Տիգրան, ծառա ա(ստուծո)յ եւ հաւա-
տարիմ իմ պարոնին՝ Զաքարիահ | միաբանեցա
ս(ուր)ք ուխտիս եւ ետու զիմ զջաղացն, որ ի Կորդո
| շինեալ էի ի Գլիձորին հմնակից է ներքի դեհն Գու-
նիճանց | յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ յանուն
իմ պատարա|գ ի Քրիստոս :ԺԲ: (12) ի տաւնի
ս(ուր)ք մարգարէին Երեմիահ անխափան | մինչեւ ի





Արձանագրություններ *բ, ժ, ժա* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

ծագումն որդոյն ա(ստուծո)յ, կատարիչք գրոյս աւրինեսցին յա(ստուծո)յ:

Հրատ. **Շահխաթունեանց**, էջ 352: **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 46, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 151: **Աբել արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 270: **Ալիշան Ղ.**, էջ 22: **Գէորգեանց Մ.**, էջ 74: **Կոստանեան Կ.**, էջ 44: **Thierry J-M.**, p. 33. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 185. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 440.

ժգ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսարևելյան և հարավարևելյան սյուները միմյանց կապող կամարի հարավահայաց կոր մակերեսին, 12 տող.

ՈԾ (1201), | կամաւն ա(ստուծո)յ ես՝ Խաչեղ|բայրս, եւ իմ որդիս՝ Աւելտիսս, միաբանեցաք ս(ուր)ք | ուխտիս եւ տուաք զմեր | հայրենիքն՝ զՄարանց | մարգիգնա գնս(՞) ի վանքս, սպասաւորք սորա կատարէն ի | տարին :Զ: (6) աւր ժամ :Բ: (2) ինձ, | :Բ: (2) Աւետ(ին), :Ա: (1) Սիստիկ(ին), :Ա: (1) եղ|բարց տինիտեալ...(՞) ...կ, որ է | ...ամէն:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 151: **Աբել արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 298: **Ալիշան Ղ.**, էջ 22-23: **Գէորգեանց Մ.**, էջ 78: **Thierry J-M.**, p. 33. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 186. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 441.

Ծանոթ. Աբել արքեպիսկոպոսն *տինիտեալ... ...կ, որ է*-ի փոխարեն ունի՝ *ի տաւնի Աւետեացն:*

ժդ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսային ճակատի կենտրոնում՝ կլոր լուսամուտի վերին եզրի արձանագրությունից վերև, 8 տող.

Ի ՈԾԵ (1206) թիս, ես՝ Զաքարիայ Շահանշահ, որդիս Սարգսի զաւրապետ | Հայոց եւ Վրաց, քակեցի զջաղացն, որ յականս հակառակ ջրիս շինած էր | եւ վերստին հաստատեցի զջուրս ի վանքս Հոռոմոսի վասն արեւշատութ(ան) ինձ եւ եղբաւր իմոյ՝ Եւանէի ...ծ ի յիշատակ ծնաւղաց մերոց, | արդ եթե ոք հակառակ կայ ջրիս եւ յափշտակել ջանայի վանացս | եւ կամ դարձեալ շինել զջաղացն զաւձին զԿայենին, զՅուդային զխաչահանացն զանէծսն առցէ եւ մի գտցէ մասն եւ ողորմութի(ւն) ի Ք(րիստո)ս)ի ա(ստուծո)յ | հրամանս կատարին աւրհնեսցին ի սբ երրորդութենէն:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 149: **Ալիշան Ղ.**, էջ 22: **Գէորգեանց Մ.**, էջ 90: **Կոստանեան Կ.**, էջ 47: **Thierry J-M.**, p. 31. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 182. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 432.

ժե Արձանագրությունը՝ գավթի հյուսիսային ճակատին՝ կլոր լուսամուտի վերին հատվածում, 6 տող.

Ես՝ Սարգիս կրաւնաւոր, գնեցի հող ի Փարպի եւ | հայր Մխիթար միաբանաւքս այգի արկին եւ ի Խաչիկշտէ մեծ այգին բոլորեցաւ պատարագի Ք(րիստո)ս | ի տաւնի քառասնիցն Բ (2)՝ Ա (1) Սարգսի, Ա (1) Վարդանա: | Կատարիչք գրիս աւրհնին յա(ստուծո)յ ամէն, զՅոլսէս յիշ|եա ի տ(է)ր:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 149-150: **Ալիշան Ղ.**, էջ 22: **Կոստանեան Կ.**, էջ 242: **Thierry J-M.**, p. 31. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 183. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 433.

Ծանոթ. ժամանակը՝ ԺԳ դարի սկզբներ: Մյուս հրատարակիչների մոտ պակասում է *ամէն*-ը:

Արձանագրություններ *ժբ, ժգ, ժդ, ժե* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

ժզ Արձանագրությունը՝ գավթի արևմտյան պատին կից հարավային որմնասյունը և հարավարևմտյան սյունը միմյանց կապող կամարի արևելահայաց կոր մակերեսին, 15 տող.

Կամաւ մարդասիրին ա(ստուծո)յ | ես՝ Վարդաճիժ Վարդե|անց, ապաւինեցա ի ս(ուր)ք ուխ|տս ետու զիմ զանձագին | կուղպակն եւ ի նէրքեւն Տա|կառքի յԱնի ի վերի փողոցին քանէկից է Տիգրան|ա յառաջնորդութե(ան) հաւր | Գրիգորիսի սրբասիրի | պատարագեսցի Ք(րիստո)ս ի տա|ին Դ (4) աւր՝ զԲ (2)-ն ինձ եւ Բ (2) | զիւգակցին իմո տիկ|նոջն: Կատարիչքն աւրհ|նեալ եղիցին ի Ք(րիստոս)է, ի ՈԿԷ (1218) թ(ին), | զԵղբայրոսս յիշեցէք ի Ք(րիստո)ս:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 46, էջ 4: **Ջալալեանց Մ.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1858, էջ 16: **Սարգիսեան Ն.**, էջ 152: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 270: **Ալիշան Ղ.**, էջ 23: **Գէորգեանց Մ.**, էջ 74: **Կոստանեան Կ.**, էջ 61: **Thierry J-M.**, p. 35. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 188. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 443.

ժէ Արձանագրությունը՝ գավթի արևմտյան ճակատի հյուսիսային եզրին, 6 տող.

Ո|ՀԶ (1227), | շնորհիւն Ք(րիստոս)ի, ես՝ Հեճուպ Գրիգոր, եւ Սմբատ եւ Ի|շխանս հաստատեցաք ի մեր սեփհական ուխտս, որ ո՛չ պատ|ռոն եւ ո՛չ ճորտ ի վանքս աղունձ աղան, եթէ ոք զգիրս զայս | պատռոն կամ հայր լուծանէ, նզովի յա(ստուծո)յ եւ յամենայն սրբոց:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 146: **Ալիշան Ղ.**, էջ 20: **Կոստանեան Կ.**, էջ 42-43: **Thierry J-M.**, p. 26. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 176. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 418-419.

Ծանոթ. սկսած Ն. Սարգսյանից՝ մյուս հրատարակիչները թվականն անտեսել են:

ժը Արձանագրությունը՝ գավթի երդիկի ներքո՝ հյուսիսարևելյան և հարավարևելյան սյուները միմյանց կապող կամարի արևմտահայաց ուղիղ պատին, 10 տող.

Ի թ(ին) ՈՀԷ (1228), | կամաւ ամենակալին ա(ստուծո)յ այս մեր գիր յիշատակի է՝ Հեճուպ Գրիգորոյ որդո Հասանա եւ եղբայրորդեաց իմոց եւ իշխանիս որդո Քրդին եւ եղբայրորդեաց իմոց տէրանց ս(ուր)ք ուխտիս վանացս Հոռոմոսի, որ հաստատեցաք արձանագրով պատրոն, | ով լինի այս տեղոյս ի յարանց կամ ի կանանց, ով կաշառաւք հայր դնէ այնպիսին նզովս առցէ զՅուդահն զա(ստուա)ծավաճառին | եւ զԿաենին զեղբայրասպանին եւ հայր և այլ գործաւորք, որ կաշառք տան յայտնի կամ ի ծածուկ յերկնաւոր հաւրէն եւ ՅԺԸ (318) | հայրապետացն եւ յամենայն սրբոց անիծեալ եղիցի յոգի եւ ի մարմին եւ հայր, որ ի վանիցս հաց ծախէ կամ ի վանիցս ի բացս | խորէ, նզովեալ եղիցի մահիվ եւ կենաւք, ով հակառակ կայ այս բանիս ի պատրոնաց կամ ի միաբանիցս կամ ի ջնջել | ջանա զայս գիրս եւ ինքն ջնջեսցի ի դպրութենէ կենացն կատարիչքն աւրհնեալ եղիցին յա(ստուծո)յ, ամէն. արդ էթէ մեծ | եւ էթէ փոքր կարծիս առնու թէ հայր կամ այլ գործաւոր կաշառք է տվել եւ վրէժխնդիր չլինի վերագրելոցս նզովվիցս տէր է, ամէն: զԽոցաղեղ գրիչ յիշեա ի տ(է)ր:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 152-153: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 297-298: **Ալիշան Ղ.**, էջ 23: **Գէորգեանց Մ.**, էջ 78: **Կոստանեան Կ.**, էջ 71-72: **Thierry J-M.**, p. 35-36. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 189. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 444.

Արձանագրություններ ***ժզ, ժէ, ժը*** **(գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)**

ժթ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան սյուները միմյանց կապող կամարի արևմտահայաց ուղիղ պատին, 7 տող.

ՈՀԸ (1229), | շնորհիւն Ք(րիստոս)ի, ես՝ Վասակ, որդի Դաւթի թոռն Կիւրիկեի արքայի տէր Նորբերդի, խոստովանող Ք(րիստո)սի | միաբանեցա սուրբ ուխտիս եւ ետու ի սուրբ Յովանէս ընծայ զիմ գանձագին ձիթահանքն, որ ի վանացս գնեցի վճռամբ եւ ամենայն ամրութեամբ յառաջնորդութեան տ(եառ)ն Բարսղի որդւոյ Ամիր Երկաթայ, եւ փոխարէն ինձ հաւտուցին զտաւն սրբոց Վարդանանց յամէն ամի բոլոր յեկեղեցիս{ս} զպատարագն, որչափ ես կենդանի եմ Վարիամայ եւ Թամարին առնեն եւ յետ վախճանի իմոյ ինձ, արդ կատարիչք գրիս աւրհնին ի Ք(րիստո)է եւ հակառակն որոշի | եւ զանէծս Կայէնի, զՅուդայի եւ զՆեռինն ժառանգէ մարդո որ եւ իցէ եւ մի լիցի թողութիւն յաւիտեան, ամեն:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 153: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 271-272: **Ալիշան Ղ.**, էջ 23: **Գէորգեանց Մ.**, էջ 77-78: **Կոստանեան Կ.**, էջ 72: **Thierry J-M.**, p. 36. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 190. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 446.

ի Արձանագրությունը՝ գավթի արևմտյան ճակատին՝ շքամուտքի հարավային վերին հատվածում, 8 տող.

ՈՁ (1231), | շնորհիւն Ք(րիստոս)ի, ես՝ Ասլանս, որդի Շերանկանն, եւ զիւգակից իմ՝ Ասուշիս, տուաք զմեր գանձագին հայրենիքն զԳոիեցն զկէս դանկն իւր հողովն եւ ջրովն ի ս(ուր)ք Յովանէս յառաջնորդութե(ան)ս տ(է)ր Բարսղի արհիեպիսկոպոսի որդւոյ՝ Ամիր Երկաթա, | եւ սպասաւորք սորա փոխարէնս հատուցի(ն) մեզ ի տարին :Դ: (4) պատարագ կատարել զԲ (2)՝ ինձ՝ Ասլանիս եւ Բ (2)՝ Ասուշահին, եթէ ի մերոց կամ յաւտարաց զյիշատակս մեր խափանէ, նզովի յա(ստուծո)յ, հաստատ պահողքն աւր(հնին) ի Ք(րիստոս)է:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 147: **Ալիշան Ղ.**, էջ 20: **Կոստանեան Կ.**, էջ 74: **Thierry J-M.**, p. 27. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 178. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 424.

իա Արձանագրությունը՝ նույն տեղում (վիմագիր *ի*-ի շարունակությունը), 4 տող.

Ի սոյն ամի, ես՝ Խոսրով, որդի Վարի(ա)մա լաւոեցո, եւ զիւգակից իմ՝ Շուշիկ, | տուաք զմեր գանձագին հայրենիքն զՔարիատին դանկն իւր հողովն եւ ջրովն ի ս(ուր)ք Յովանէս եւ հատուցին մեզ ի տարին :Զ: (6) պատարագ :Բ: (2) ինձ եւ :Բ: (2) Շուշկան | եւ :Բ: (2) Վարի(ա)մա, եթէ որ զարձանս մեր խափանէ, նզովի յա(ստուծո)յ, կատարողքն աւրի(նին) ի Ք(րիստոս)է:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 147: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Կոստանեան Կ.**, էջ 74: **Thierry J-M.**, p. 27. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 178. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 425.

Ծանոթ. *Ի սոյն ամի*, այսինքն՝ *1231 թ.*:

իբ Արձանագրությունը՝ նույն տեղում (վիմագիր *իա*-ի շարունակությունը), 3 տող.

Ի սոյն ամի, ես՝ Կազերս, որդի Մուկատին, եւ մայր իմ՝ Մամիկս, տուաք զմեր երկու | տունն ի ս(ուր)ք Յովանէս եւ առաք պատարագ ի տարին Բ (2) աւր, Ա (1)՝ ինձ եւ մին՝ իմ մաւրն, կատարիչքն աւրհնին ի Ք(րիստոս)է:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 147: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Կոստանեան Կ.**, էջ 74: **Thierry J-M.**, p. 28. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 179. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 426.

Ծանոթ. դարձյալ *Ի սոյն ամի*, այսինքն՝ *1231 թ.*:

իգ Արձանագրությունը՝ նույն տեղում (վիմագիր *իբ*-ի շարունակությունը «Կազեր»-ի արձանագրության երրորդ տողից), 2 տող.

Ես՝ Շուշիկս, զիւգակից Խոսրովու, ետու զիմ տներն ի ս(ուր)ք | Յովանէս եւ առի ինձ պատարագ ի տարին աւր մին կատարիչքն աւրհնին ի Ք(րիստո)ս:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 147: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 298: **Գէորգեանց Մ.**, էջ 80: **Կոստանեան Կ.**, էջ 74: **Thierry J-M.**, p. 28. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 179. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 426.

Ծանոթ. հավանաբար նույնպես՝ 1231 թ.:

իդ Արձանագրությունը՝ նույն տեղում (վիմագիր *իգ*-ի շարունակությունը), 2 տող.

Ես՝ Բարդողիմէոս աբեղա փարբեցի, ետու զիմ գանձագին այգին, որ ի Փարբի է, ի վանացս, ի հիւրատունս, եւ նոքա հատուց ինձ պատարագ ի տարին աւր մի:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 148: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 298: **Գէորգեանց Մ.**, էջ 80: **Կոստանեան Կ.**, էջ 242: **Thierry J-M.**, p. 28. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 179. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 427.

Ծանոթ. թերևս 1231 թ.: Երկրորդ տողը եղել է ներկայումս պոկված և անհետացված քարաշարի վրա:

Արձանագրություններ *ժթ, ի, իա, իբ, իգ, իդ* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

ին Արձանագրությունը՝ նույն տեղում (վիմագիր *իդ*-ի շարունակությունը), 5 տող.

Կամաւն ա(ստուծո)յ ես՝ Քոթիթ ճոնս, եւ կենակից իմ՝ Շահմամս, տուաք Զուի | դանկն իւր հողովն եւ ջրովն ոնց բնական լեալ է ի սբ Յովաննէս եւ ե-(տու) | շինած տներս ի սբ Յովաննէս, եւ սպասաւորք սորա հատուցին մեզ | ի տարին Զ (6) պատարագ, մին՝ ինձ՝ Քոթթին, Բ (2)՝ Շահմամին, մին՝ Վարդանա, Բ (2)՝ Սարէ, թէ որ ի մերոց կամ յալ-(տարաց զգիրս մեր խափանէ) | ելցէ ի կենացն ա(ստուծո)յ, կատարիչքն աւրհնին ի Ք(րիստոս)է:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 148: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 298: **Գէորգեանց Մ.**, էջ 80: **Կոստանեան Կ.**, էջ 242-243: **Thierry J-M.**, p. 28. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 179-180. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 428.

Ծանոթ. թերևս 1231 թ.: Չի պահպանվել, քարերն էլ անհետացվել են:

իզ Արձանագրությունը՝ նույն տեղում (վիմագիր *իե*-ի շարունակությունը), 3 տող.

Ես՝ Իգնատիոս, որդի Աքլեղին, եւ կենակից իմ Մամեր, | տուաք զմեր հայրենիք կէս դանկն ի Մարաց մարգի ի սբ Յովանն|էս, եւ սոքա ետուն մեզ պատարագ ի տարին Բ (2) աւր .Ա. (1) ինձ և .Ա. (1) Մամերոյն, թէ ի մերոց կամ այլ որ զգիրս մեր խափանէ նզովի յա(ստուծո)յ:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 148: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 298: **Գէորգեանց Մ.**, էջ 80: **Կոստանեան Կ.**, էջ 243: **Thierry J-M.**, p. 29. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 180. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 428.

Ծանոթ. թերևս 1231 թ.: Չի պահպանվել, քարերն էլ անհետացվել են:

իէ Արձանագրությունը՝ գավթի երդիկի ներքո՝ հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան սյուները միմյանց կապող կամարի հարավահայաց ուղիղ պատին, 9 տող.

Թու(ին) ՈՁԳ (1234), | շնորհիւն Ք(րիստոս)ի, ես՝ Զմրուխտ Խաթունս, աղախին Ք(րիստոս)ի, յուսալով յողորմութիւնն ա(ստուծո)յ ետու ի ս(ուր)ք ուխտս | ի վանքս Հոռոմոսի ի ս(ուր)ք Յովանէս ակն մին ջաղաց, բոլորն ի Կարմնջին ձորին, որ Աբելեանց կոչի, | զոր այրն իմ՝ ա(ստուա)ծասէրն Սմբատ, յիւր կենդանութեանն ինձ հայրենիք էր տուեալ ես յիմ կենդանութեանս | ս(ուր)ք ուխտիս հայրենիք հաստատեցի յառաջնորդութեան տ(եառ)ն Բարսղի որդւոյ Երկաթայ, եւ սպասաւորք ս(ուր)ք ուխտիս փոխարէն հատուցին մեզ յամենայն ամի պատարագել զՔ(րիստո)ս՝ ԽԵ (45) աւր, ԺԵ (15)՝ ինձ՝ Խաթունիս. ԺԵ (15) առն իմոյ՝ Սմբատայ. Ժ (10). աւր մաւրն՝ Խորիշահի եւ Ե (5) իւր հաւրն՝ Քրդին, արդ եթէ որ ի մեծամեծաց | կամ ի փոքունց զմեր նուէրս հանէ ի սբ ուխտէս կամ ծախելով կամ գրաւական գնելով կամ զմեր յամն պակաս|եցուցանեն :ՅԺԸ: (318) հայրապետացն նզովեալ եղիցի մահով եւ կենաւք, իսկ որ հաստատուն պահեն, աւրհնին յա(ստուծո)յ, ամէն:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 153: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 298: **Ալիշան Ղ.**, էջ 24: **Գէորգեանց Մ.**, էջ 79: **Կոստանեան Կ.**, էջ 46: **Thierry J-M.**, p. 37. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 191. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 448.

Ծանոթ. Աբել արքեպիսկոպոսի և Կարապետ վարդապետի մոտ տարեթիվը սխալմամբ՝ *ՈԾԳ (1204)*:

իը Արձանագրությունը՝ գավթի հարավային որմին ներքուստ՝ կլոր լուսամուտի աջ և ձախ կողմերում և ստորին հատվածում, 14 տող.

ՈՂԵ (1246), | կամաւ բարերարին ա(ստուծո)յ ի թագաւորութե(ան)ս հայոց եւ վրաց | Դաւթի եւ ի սպասալարութե(ան) Շահնշահի որդո մեծին Զաքարի | եւ յառաջնորդութե(ան) տ(եառ)ն Բարսղի արքեպիսկոպոսի որդո Ամիր Երկաթա, | ես՝ Աշոտ Դսեղեցի, որդի Գեաւրգէ թոռն Աշոտոն, միաբանեցա ս(ուր)ք Յովանիսի ի նեղ եւ ի չար | ժամանակիս յետ կործանման տաթարին մինչ էր վանքս ի նեղութեան ետու զամենագով աւետարան | եւ :Դ: (4) եզն, :Գ: (3) կով, :Դ: (4) էշ, :Բ: (2) ձի եւ այլ զինչ ա(ստուա)ծ պատրաստէ ես տ(է)ր Բարսեղ եւ Սարգիս վարդապետս եւ այլ եղ|բարքս ընգալաք զնա իբրեւ զմի ի պատրոնաց մերոց եւ փոխարէն հատուցաք յամէն ամի զկնի նոր կիրակ|էին Ի (20) աւր պատարագեալ զՔ(րիստո)ս յանուն Աշոտոն որչափ կենդանի է իւր ծնողացն յետ ելից յաշխարհէս | Աշոտոն, կատարենք որ հաստատուն պահէն, աւրհնին յա(ստուծո)յ եւ որք խափանեն, նզովք զՅուդային առցէ եւ զԿաէնի, | ՅԺԸ (318) հայրապետացն որոշ|եալ եղիցի մահով եւ կենաւք: |

Ես՝ Կիրա, հետ իմ պարոնին՝ Աշոտոն, միաբանեցա ս(ուր)ք ուխտիս յանուն իմ պատարագի Ք(րիստո)ս| ի տարին աւր մի:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 46, էջ 4: **Ջալալեանց Ս.**, էջ 17: **Սարգիսեան Ն.**, էջ 154: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 271: **Ալիշան Ղ.**, էջ 24: **Գէորգեանց Մ.**, էջ 75: **Կոստանեան Կ.**, էջ 90: **Thierry J-M.**, p. 37-38. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 192. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 450.

Ծանոթ. Աբել արքեպիսկոպոսը չունի վերջին երեք տողերը:

Արձանագրություններ *իէ, իը* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

ի*թ* Արձանագրությունը՝ գավթի արևմտյան ճակատի հյուսիսային եզրին, 10 տող.

Ի թվ(ին) ՈՂԶ (1247), անուամբն ա(ստուծո)յ եւ Շահընշահի ողորմութ(եամ)բն ես՝ Աղաղ|ովլէս, որդի Սմբատա, ետու ի Դրասպարի զԳիշկոյն տունն իւր հողով|ն ոնց Գիշուկն ունեցեալ է Հոռոմի վանիցս ս(ուր)ք Յովանիսի հայրենիք վ(ա)ս(ն) | իմ հաւր հոգոյն Սմբատա, զոր յառաջ միաբան էին լեալ ազատ ի կոռէ... |թաէ եւ յամէն չարէ ոչ իմ, ոչ իմ եղբաւր, ոչ իմ որդո, ոչինչ հաշիւ չկա իշխանութիւն ս(ուր)ք Յովանիսի, սպասաւորքս ունին յառաջնորդութե(ան) տ(է)ր Բարսղի որդո | Ամիր Երկաթա, փոխարէն հատուցին միաբանքս զս(ուր)ք Գրիգորի շաբաթն աւրն յա|մենայն եկեղեցիս պատարագ առնել իմ հաւրն Սմբատա, ով զայս գիրս խափ|անէ նզովի յա(ստուծո)յ եւ ՅԺԸ (318) հայրապետացն, որք հաս(տա)տուն պահեն աւրինին յա(ստուծո)յ եւ | յամենայն սրբոց. ամէն:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 146-147: **Ալիշան Ղ.**, էջ 20: **Կոստանեան Կ.**, էջ 91: **Thierry J-M.**, p. 26-27. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 177. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 420.

Ծանոթ. *Աղաղովլես* անձնանունը սխալմամբ ընթերցվել է *Անագովլես*: Առաջին երեք տողերի վերջնամասերը պակասում են ընկած քարի հետ:

լ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսարևելյան և հարավարևելյան սյուները միմյանց կապող կամարի հյուսիսահայաց կոր մակերեսին, 12 տող.

Ես՝ Սարգիս էրէց, որդի Պ|ետրոսի փարպեցի, ետու զ|իմ գանձագին այգին ի վ|անս Հոռոմոսին յիշա(տա)կ ինձ | եւ ծնողաց իմոց, սպասաւոր|ք սրբոց կատարեն յամեն յ|ամի զտաւն ս(սուր)ք Սարգսին | պատարագել զՔ(րիստո)ս :Բ: (2) ժամ, | :Ա: (1)՝ ինձ եւ :Ա: (1) կենակցի իմոյ՝ | Քէմէի:

Թու(ին) ՉԺԵ (1266), կա|մաւքն ա(ստուծո)յ ես՝ Ալէքս, որդի Ղազա|րա, միաբանեցա ս(ուր)ք ...:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 155-156: **Արէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 298: **Ալիշան Ղ.**, էջ 25: **Գէորգեանց Մ.**, էջ 78-79: **Կոստանեան Կ.**, էջ 110: **Thierry J-M.**, p. 41. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 197. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 459.

Ծանոթ. երկու մասից բաղկացած արձանագրության երկրորդ թվակիր հատվածը թերավարտ է: Ի դեպ, նույն՝ 1266 թ. միևնույն Ալեքը Հոռոմոսի վանքում թողել է ևս մեկ արձանագրություն (տե՛ս վիմագիր *լա*):

լա Արձանագրությունը՝ գավթի հյուսիսային պատին կից արևմտյան որմնասյունը և հյուսիսարևմտյան սյունը միմյանց կապող կամարի հարավահայաց կոր մակերեսին, 17 տող, որից վերջին երկուսը՝ որմնախոյակին.

ՉԺԵ (1266), | կամաւքն ա(աստուծո)յ ես՝ Ալէքս, որդի Ղա|զարա, եւ ամուսին իմ՝ Մլրք(ի)ս(է)թ, | ի միաբանեցաք ս(ուր)ք Յովանէ|սի եւ գնեցի կուղպակ ի | Ծռազուկակին եւ ետու ըն|ծա ի ս(ուր)ք ուխտս եւ սպասաւո|ր|քս փոխարէն հատուցին յա|մէն ամի :ԺԵ: (15) աւր պատարագ, | :Ե: (5) աւր ինձ՝ Ալէքսիս, :Ե: (5) աւր իմ | կենակցին՝ Մլրքսթէն :Գ: (3) Աւետ|իս իրիցո :Ա: (1) Ղազարա՝ իմ հաւր | :Ա: (1) Վարդէտիկնա հետ այսու | յիշատակ իմ որդին է Ամի|ի(՞) պարոնն, յոյս ունիմ ի Ք(րիստո)ս, | որ... ...ան զգրեալս կատար|ի՛չք գրոյս աւրինին ի Ք(րիստոս)է, Մխ(իթար) գրիչ:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 10, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 157-158: **Ալիշան Ղ.**, էջ 26-27: **Կոստանեան Կ.**, էջ 109: **Thierry J-M.**, p. 44. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 201. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 467.

Ծանոթ. Կարապետ վրդ.-ի մոտ սխալմամբ՝ *ՉԾԵ (1306)*:

լբ Արձանագրությունը՝ գավթի արևմտյան պատին կից հյուսիսային որմնասյունը և հյուսիսարևմտյան սյունը միմյանց կապող կամարի արևելահայաց կոր մակերեսին, 15 տող, որոնցից վերջին երկուսը՝ որմնախոյակի վրա.

ՉԺԵ (1266), | շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ Մա|մուկսթի, դուստր Վա|ռի(ա)մա, ետու ի ս(ուր)ք Յովան|նէս ի մեր տապանատունս | զԵղանց մարգ ի Բովանդ|ոյու կարմնջէն ի Վաղաւերու ճ|ամբահն յԱնու Հաղէնի Վաղ|ավիրուն :Բ: (2) Աւերկովն, որ ի տա|ղին Զ (6) աւր պատարագել զՔ(րիստո)ս | :Ա: (1)՝ ինձ, :Ա: (1)՝ Կուրապաղտին :Ա: (1)՝ Ասլիրոցին, :Ա: (1)՝ Արտամշին, :Ա: (1)՝ Վարի|ամշին, | :Ա: (1) Գոհար խաթունին, կատարի՛չք գրիս աւրին|ին ի Ք(րիստոս)է: Սիմէոն գրիչ:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 157: **Ալիշան Ղ.**, էջ 26: **Գէորգեանց Մ.**, էջ 76-77: **Կոստանեան Կ.**, էջ 109, 155: **Thierry J-M.**, p. 43. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 200. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 466.

Ծանոթ. Կոստանյանը նույն արձանագրությունը հրատարակել է մերթ *1266*, մերթ *1308* թ. ներքո: *Բովանդ-ի* փոխարեն մյուս հրատարակիչները, բացի Կարապետ վարդապետից, ունեն՝ *Բովաչոր*: ՉԾԵ (1308) թվականի ներքո է ներկայացրել նաև Արել արքեպիսկոպոսը, իսկ Կարապետ վրդ.՝ ՉԾԵ (1306): Մյուս հրատարակիչների մոտ սխալաշատ են վերծանված հատկապես հատուկ անունները:

Արձանագրություններ *իթ, լ, լա, լբ* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

ԼԳ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսային պատին կից արևմտյան որմնասյունը հյուսիսարևմտյան սյան հետ կապող կամարի հյուսիսահայաց կոր մակերեսին, 14 տող, որից վերջին երեքը՝ որմնախոյակին.

ՉԺԸ (1269), | ողորմութ(եամ)քն ա(ստուծո)յ ես՝ Թա|իկ թագո(ւ)հի, դուստր Շարխապշահին, ետու ի Հոռոմոխի վանքս Զաբէլի ակն, որ ի | Դվնա դռանն զոր իմ որ|դին՝ Հազրպէկն, ի Գարէգ|յոյնէն գրաւկնեց :Է:Ճ: (700) սկ|ի-տակ) ի վերա խա|ղոճ արար, որ եղաւ :Ռ:Շ: (1500) սպ(ի-տակ) եւ | սպասաւորք ս(ուր)ք ուխտիս հայր | Յուսէփ, Սիմէոն փակակալ եւ այլ միաբանքս փոխարէն հատ|ուցին :Բ: (2) աւր պատարագ զհոգոցն Գալուստ(ի)ն, :Ա: (1)՝ Թաիկան(ի)ն :Ա: (1)՝ | Հազ(ա)րպէկին: Կատարիչք գրիս աւրհնին ի Ք(րիստոս)է եւ որ խափանեն դատի(ն) ի Ք(րիստոս)է:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 10, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 158: **Ալիշան Ղ.**, էջ 28: **Կոստանեան Կ.**, էջ 112: **Thierry J-M.**, p. 44. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 201. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 468.

ԼԴ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսային ճակատի արևելյան հատվածում, 6 տող.

[Թվ](ին) ՉԻԲ (1273), | կամաւն ա(ստուծո)յ ես՝ Աբլիասան հեքիմ՝ որդի Զաքարիահ հեքմին, | ապաւինեցաք ս(ուր)ք Յովաննէս ետու ընծ(ա)ս յԱպրնուց ձորին սա|ղնդելէր իմ հայրենս շինեցի Դ (4) դանկն ջաղաց ետու ս(սուր)ք յուխտս փոխարէն | հատուցին Ե (5) աւր պատարագ ի տանի Զաքարիահ. Բ (2)՝ Զաքարի, Ա (1)՝ Շուշկան, | Ա (1)՝ Զալալին, Ա (1)՝ իմ պապին՝ (Ա)բլիասնա: Յետ ելից ինձ առնեն: Գ(ա)բր(ի)էլ գրիչ:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 150: **Ալիշան Ղ.**, էջ 22: **Կոստանեան Կ.**, էջ 116: **Thierry J-M.**, p. 32. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 184. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 434.

Ծանոթ. մյուս հրատարակիչների մոտ բացակայում է *Գ(ա)բր(ի)էլ գրիչ* հատվածը:

ԼԵ Արձանագրությունը՝ գավթի ներսում՝ հյուսիսային որմին, 7 տող.

ՉԻԹ (1280), | կամաւն ա(ստուծո)յ ես՝ Մամքան, դուստր Աբասլաւին՝ | թոռն Տիգրանայ, ետու զիմ հայրենի բաժինք գեղն | զճոխաքագոն ի ս(ուր)ք Յովանէսի, յիշատակ ինձ եւ որդոյ իմոյ՝ Սարգսի, եւ սպասաւորքս հատուցին տարին :Ե: (5) | պատարագ, :Բ: (2)՝ ինձ, :Գ: (3)՝ Սարգսի, եթէ ոք զնուէրքս մեր հանէ, ի | վանացս ՅԺԸ (318) հայրապետաց նզոված է:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Զալալեանց Ս.**, էջ 17: **Սարգիսեան Ն.**, էջ 158: **Արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 271: **Ալիշան Ղ.**, էջ 28: **Գէորգեանց Մ.**, էջ 76: **Կոստանեան Կ.**, էջ 122: **Thierry J-M.**, p. 45. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 202. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 469.

Ծանոթ. *Մամքան՝ դուստր Աբասլաւին*-ի փոխարեն մյուս հրատարակիչներն ունեն՝ *Մասքաս դուստր Ասղաւին*:

ԼԶ Արձանագրությունը՝ գավթի ներսում՝ արևմտյան պատին կից հարավային որմնասյան հյուսիսային նիստին, 10 տող.

Ի թու(ին) :ՉԼ: (1281), ես՝ Մկրտիչ աբեղա, որդի Ռատին, եւ իմ հոգեւոր եղբայրս՝ Գրիգոր ք(ա)հ(ա-նա), շ|ինեցաք վերստին զընծնան|ին յԱրուճ եւ ի Փարպի եւ արկաք նորք, սպասաւորքս հատուցին մեզ ի տարին :Դ: (4) պատարագ :Բ: (2) Ռատին, :Բ: (2) Խոցաղեղին եւ | յետ ելից մերոց մեզ առնեն կատարիչքն աւրհնին ի Ք(րիստոս)է:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 46, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 157: **Արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 270: **Ալիշան Ղ.**, էջ 26: **Գէորգեանց Մ.**, էջ 73-74: **Կոստանեան Կ.**, էջ 101: **Thierry J-M.**, p. 43. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 200. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 465.

Ծանոթ. Կարապետ վարդապետի և նրան հետևած մյուս հեղինակների մոտ թվականը սխալմամբ՝ *ՉԷ (1258)*: Հրատարակիչներն ունեն մանր այլ տարընթերցումներ ևս:

Արձանագրություններ ԼԳ, ԼԴ, ԼԵ, ԼԶ (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

ԼԷ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան սյուներն իրար կապող կամարի հարավահայաց կոր մակերեսին, 16 տող, որից վերջին երկու տողը՝ որմնախոյակին.

Շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ Առիւծ|ս, որդի Ա(ստուա)ծատրո, միաբան|եցա ս(ուր)ք ուխտիս եւ ետու | ի յԱնո բուն փողոցին | զիմ գանձագին կուղպա|կն, որ շինեցի Ներքի դեհն | քանակից է Աւետեացն | :Բ: (2) կուղպակի կտերն, մէ|կն՝ ի վերա կուղպակին է | եւ մէկն իւրենն դիմաց, որ | դաղլայն է ներքեւ վասն{ն} | յիշատակի զուգակցին ի|մոն՝ Համաւորին յանուն | մեր պատարագի Ք(րիստո)ս | :Բ: (2)՝ Ա(ստուա)ծատրո, :Բ: (2)՝ Վահրամա եւ :Բ: (2)՝ կ[ողակց]ին [իմոն], Բ: (2)՝ Համաւ|որին: Կատարիչքն աւրհնեալ եղիցին յա(ստուծո)յ:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 46, էջ 4: **Ջալալեանց Ս.**, էջ 16-17: **Սարգիսեան Ն.**, էջ 155: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 270-271: **Ալիշան Ղ.**, էջ 24-25: **Գէորգեանց Մ.**, էջ 75-76: **Կոստանեան Կ.**, էջ 240-241: **Thierry J-M.**, p. 39. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 194. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 453.

Ծանոթ. Գևորգյանցն *յԱնո բուն փողոցին*-ի փոխարեն սխալմամբ ունի *յանոբոյին փողոցի* ձևը: Ժամանակը՝ ԺԳ դար:

ԼԸ Արձանագրությունը՝ գավթի հարավարևելյան և հարավարևմտյան սյուներն իրար կապող կամարի արևելահայաց կոր մակերեսին, 12 տող.

Շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ տ(է)ր Գրի|գոր, որդի Ապուղամրի արհե|պիսկոպոս, մայրաքաղաքին | Ա-նո ետու ի ս(ուր)ք Յովանէս ընծա | զիւր գեղջէիցն զԱկնաց եւ | զՇաւթաի եւ զԱղբնագեղի | զժողովրդութիւնն յառաջ|նորդութեան Անդրէաս վարդապե|տին ս(ր)քասիր եւ սպասաւորք սո|ղրա առնէն ի տարին :Բ: (2) ժամ Մամուզ, | որ հաստատ պահէ աւրհնեսցի ի տ(եառն)է, | իսկ հակառակն՝ որոշեսցի, ամէն:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 10, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 151: **Ալիշան Ղ.**, էջ 23: **Կոստանեան Կ.**, էջ 143: **Thierry J-M.**, p. 34. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 187. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 442.

Ծանոթ. Ժամանակը՝ ԺԳ դար:

ԼԹ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսարևմտյան և հարավարևմտյան սյուներն իրար կապող կամարի հյուսիսահայաց կոր մակերեսին, 15 տող.

Զաւրութ(եամ)քն ա(ստուծո)յ ես՝ | Շերանիկս, զաւրացա | ի զինուորութե(ան) եւ արդ | անկեալ կամ ի վանքս | առաջի ս(ուր)ք խաչիս Ք(րիստոս)ի, զի | ողորմեսցի ինձ Ք(րիստո)ս ա(ստուա)ծ, | ետու զիմ գանձագին | այգին ի Ծմակին, յանուն | իմ պատարագի Ք(րիստո)ս Զ (6) | ի տաւնի խաչգիւտին: |

Ես՝ Մարիամ, զուգակի|ց Շերանկանն, ետու ի ս(ուր)ք | Յովանէս զԱկնաց կէս դանգն իմ գանձով գնած յա|նուն իմ պատարագի Ք(րիստո)ս :Զ: (6):

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 46, էջ 4: **Ջալալեանց Ս.**, էջ 16: **Սարգիսեան Ն.**, էջ 154-155: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 270: **Ալիշան Ղ.**, էջ 24: **Գէորգեանց Մ.**, էջ 74-75: **Կոստանեան Կ.**, էջ 240: **Thierry J-M.**, p. 39. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 194. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 452.

Ծանոթ. Գևորգյանցն *զԱկնաց կէս*-ի փոխարեն ունի՝ *Ծակնացկես*: Ժամանակը՝ ԺԳ դար:

Խ Արձանագրությունը՝ գավթի հարավային որմին, ներքուստ.

Շնորհիւն Ք(րիստոս)ի ես՝ Գրիգոր, որդի Բախտիարին, ետու ընձա ի ս(ուր)ք Յովանէս :Բ: (2) տուն եւ ի վերեւն :Գ: (3): կողպակ զոր իմ հալալ արդեամք շինել եմ յիշատակ ինձ եւ զաւակի իմոն Աւաք խաթունին եւ սպասաւորքս փոխարէն հատուցին յամենայն ամի :Գ: (3) աւր պատարագ :Ա: (1) ինձ եւ :Բ: (2) Աւաք Խաթունին:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 148-149: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 299: **Ալիշան Ղ.**, էջ 21: **Գէորգեանց Մ.**, էջ 81: **Thierry J-M.**, p. 29-30. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 181. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 430.

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել: Ժամանակը՝ ԺԳ դար:

ԽԱ Արձանագրությունը՝ գավթի արևմտյան ճակատին՝ լուսամուտից հարավ, 14 տող.

Ի ՈԾ (1201) թիս, ես՝ Գրիգոր: | Ի ՈԾ (1201) թիս շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ Գրիգոր, որդի Հասանայ որդւոյ Իշխանին, ետու զիմ գանձա|գին գեւղն զԵրգս ի մեր սեպհական ուխտս ի տիե|զերահոչակ



Արձանագրություններ *ԼԷ, ԼԸ, ԼԹ* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

վանքս վասն արեւշատութեան | որդւոյ իմոյ՝ Ամիր Հասանայ եւ վասն յիշատակի հոգւոյ իմոյ եւ ամուսնոյ իմոյ՝ Խաթունին, | յառաջնորդութե(ան) Մխիթարայ: Պարտական | են սպասաւորք Հռոմոսի վանացս մինչ ի գա|լուստն Ք(րիստոս)ի յամենայն ամի :Ա: (1) :Խ: (քառասունք) պատարագ առնել, | Ի (20) ինձ՝ Գրիգորոյ եւ Ի (20) ամուսնոյ իմոյ՝ Խաթունին, | մարդ մահկանացու, որ զմեր յիշատակս խափանէ | մեղաց մերոց պարտական է առաջի սոսկալի բե|մին Ք(րիստոս)ի: Կատարիչք գրելոցս աւրհնեսցին ի Ք(րիստոս)է:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 151: **Արէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԲ, էջ 298-299: **Ալիշան Ղ.**, էջ 23: **Գէորգեանց Մ.**, էջ 81: **Thierry J-M.**, p. 33-34. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 186. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 441.

Ծանոթ. ամենայն հավանականությամբ, գրիչն առաջին տողի փորագրումն ընդհատել է *շնորհիւն այ* բառերը բաց թողնելու պատճառով, որն արդեն 2-րդ տողում լրացրել է: Սարգսյանն ունի մանր վրիպումներ (օրինակ՝ 11-րդ տողի սկզբում բաց է թողել *Ի (20)* թվականը):

Խբ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսային ճակատին.

Ես՝ Խէտէնեկս, որդի Ալուզի, եւ ամուսին իմ՝ Մարջան, տուաք ի սբ ուխտս զԹէզանո շամբն, որ գետն ի մէջն կու անցանէ, որ իշխանն մեզ էր տուել, տ(է)ր Բարսեղ եւ այլ եղբարս սահմանեցին զտաւն ս(ուր)ք Կարապետին բոլոր յեկեղեցիքս պատարագել զՔ(րիստո)ս, որչափ մեք կենդանի ենք Իշխանին եւ Խորիշահի կատարեն եւ յետ ելից մերոց ի մեր յանուն կատարեն ի տաւնի նաւասարդի, էթէ ոք զմեր նուէրքս ի սբ ուխտէս հանէ եւ կամ զժամն խափանէ դատի յա(ստուծո)յ կատարիչք գրիս աւրհնին ի Ք(րիստոս)է, ամէն, ՈՂԴ (1245):

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 150: **Ալիշան Ղ.**, էջ 22: **Կոստանեան Կ.**, էջ 88: **Thierry J-M.**, p. 31-32. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 183. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 434.

Ծանոթ. վիմագիրը չի պահպանվել:

Խգ Արձանագրությունը՝ գավթի արևելյան պատին կից հյուսիսային որմնասյունը հյուսիսարևելյան սյան հետ կապող կամարի արևմտահայաց կոր մակերեսին, 16 տող.

Ի թ(վին) | ՈՂԹ (1250), | կամաւն ա(ստուծո)յ ես՝ Աւետիս վարդապետ, առաջնորդ ս(ուր)ք ուխտ|ին Սանահնին, ազգաւ ի մայրաքաղաքէս Անո միաբանէցայ ս(ուր)ք ուխ|տիս Հռոմոսի վանաց ս(ուր)ք Յովան|ինսի եւ էտու ընձա յառաջնորդ|ութե(ան) տ(եառ)ն Բարսղի արհէպիսկոպոսի որդոյ՝ Ամիր Էրկաթա փոխարէն հատուցին ինձ տ(է)ր Բարս|եղ եւ այլ միաբանքս կատարե|ն ի տաւնի ս(ուր)ք խաչին :Գ: (3) աւր ժամ :Բ: (2) | աւրն Աւէտիս վարդապետին, | :Ա: (1) Ոտնամուրին: Կատարիչք|ն աւրհնին յա(ստուծո)յ, ամէն:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 17: **Սարգիսեան Ն.**, էջ 154: **Ալիշան Ղ.**, էջ 24: **Կոստանեան Կ.**, էջ 93: **Thierry J-M.**, p. 38-39. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 194. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 451.

Խդ Արձանագրությունը՝ գավթի արևելյան պատին կից որմնասյուները միացնող կամարի հարավահայաց կոր մակերեսին, 15 տող.

Թվիս Չ (1251), | կամաւն ա(ստուծո)յ ես՝ Առիւծս հոգեւորեանց, եւ | ամուսին իմ՝ Սեղա, միաբանեցաք ս(ուր)ք Յովա|նիսի յառաջնորդութե(ան) տ(է)ր Բարսղի, բերի ջ|ուրս, զոր տաքարովս խուպանեալ էր եւ տվի ընձա | զհայրենի զիմ կուղպակն, որ ի Կաւշկակարոց|ին քանակից է Վերի դեհն Տիգրանա Ներքին Սլքե|ղոյն եւ զպահէզն ի Քեղուտի նորից {խ} կանգն|եցի {եւ փո}| եւ փոխարէն հատուցին մեզ սպասաւորք | ս(ուր)ք ուխտիս յամէն ամի ի խաչին ութ աւրացն | :ԺԲ: (12) աւր ժամ. :Դ: (4) աւրն ինձ, :Բ: (2) Սեղաի, :Բ: (2) իմ հաւրն՝ | Սարգսի, :Բ: (2) իմ մաւրն՝ Հռիփսիմի, :Ա: (1) Նուրա|թէ, :Ա: (1) Գրիգորո, էթէ ոք զմեր յիշատակս խ|խափանէ, դատի յայ, եւ որք հաստատ պահեն, աւրհնին ի Ք(րիստոս)է, ամէն:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 156: **Ալիշան Ղ.**, էջ 25: **Կոստանեան Կ.**, էջ 95: **Thierry J-M.**, p. 41. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 198. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 461-462.

Ծանոթ. մեր լուսանկարում չի երևում վիմագրի վերջին տողը, որի պատճառով էլ գրչանկարն ամբողջական չէ:

Արձանագրություններ *խա, խգ, խդ* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

Խե Արձանագրությունը՝ գավթի արևելյան պատին կից հարավային որմնասյունը հարավարևելյան սյան հետ կապող կամարի արևմտահայաց կոր մակերեսին և որմնախոյակին. «Ի վերայ ձախակողման կամարին՝ որ հայի ընդ արևելս», միասին՝ 14 տող.

Չ (1251), | կաման ա(ստուծո)յ ես՝ Յովան|նէս, մականուն՝ Ցխիկ, միաբանեցա ս(ուր)ք ուխտիս յե|տ աւիրման տաքարիս վա|նացս ջաղացանիս ա-ւեր եւ | գրաւական էր: Խ: (40) դահեկան | ետու ե(ւ) զջաղացն թափեցի | եւ այլ ետու զիմ մարտիրո|ղոքն, որ իմ հալալ արդեամբք գրեալ էի եւ փոխարէն հատուցին սպասաւորք | ս(ուր)ք եկեղեցոյս ի տարին :Ե: (5) աւր ժամ Ղազար|ու տանին :Դ: (4) ինձ :Ա: (1) իմ եղբաւրն՝ Խաչատրո: Կա|խարիչք գրիս ա(ւր)հ(ն)ին ի Ք(րիստոս)է, ամէն:

Հրատ. **Ջալալեանց Ս.**, էջ 18: **Սարգիսեան Ն.**, էջ 156: **Ալիշան Ղ.**, էջ 25-26: **Կոստանեան Կ.**, էջ 95: **Thierry J-M.**, p. 42. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 198. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 463.

Խզ Արձանագրությունը՝ գավթի արևելյան պատին կից որմնասյուները միացնող կամարի հյուսիսահայաց կոր մակերեսին, սպիտակ սվաղի շերտի վրա, ներկագիր 14 տող.

Թվ(ին) ՉԲ (1253), | կաման ա(ստուծո)յ ես՝ Յոհաննես, արքաուն որդի Ապրկան, եւ ամուս|ին իմ՝ Մուլուքս, միաբանեցաք Հռոմոսի վանա|ց ս(ուր)ք Յովանիսի եւ տվաք :Բ: (2) տուն իմ գանձագին, որ Ակուրանանց կոչի եւ այլ տվի յամեն տարի որչափ կենդանի եմ | :Ե: (5) դահեկան ձիթագին եւ առաջի տարին տվի :Խ: (40) կա|պիճ ցորեն սերմա եւ առաջնորդ վանացս տ(է)ր Բարսեղ | եւ էլ միաբանքս փոխարէն հատուցին ինձ յամէն ամի | :Ժ: (10) աւր պատարագ զտաւն Խաչգոյտին :Գ: (3) աւր իմ հայրն Ապրկան :Գ: (3) իմ մարն Սթերհէն :Բ: (2) Յովանիսի :Բ: (2) Սմբատա եւ յետ ելանելոյ յաշխարհէս :Ե: (5) աւր ինձ Էհանիսի եւ | :Ե: (5) ամուսնոյ իմոյ {ի} Մուլուքին, որ զյիշատակս մեր հաստատ պահ(է)ն, աւրհնին յայ եւ որ խաբանեն կամ| զտներն ծախեն մեր մեղացն պարտական է, ամէն:

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 157: **Ալիշան Ղ.**, էջ 26: **Կոստանեան Կ.**, էջ 97: **Thierry J-M.**, p. 42-43. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 199. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 464.

Խէ Արձանագրությունը՝ գավթի արևմտյան պատին կից հյուսիսային որմնասյունը հյուսիսարևմտյան սյան հետ կապող կամարի արևմտահայաց կոր մակերեսին, իրար հաջորդող 7 և 5 տող.

Ի յԱրուճ փոքր այգիք են վանացս | եկեղեցպանին՝ Քաւշուտին Լապախտակայն, Հանկանն, Առեւծկանն, | Աղպետեաւցն, Թուխայրեանցն, | խաչեղբաւրն | եւ պատարագ ի Ք(րիստո)ս յանուն սոցա | ի խաչին ութ աւրեքն՝ Ի (20):

Ի ձորին, ի Ծմակին, ազգի գնեցին | վանեցիքս եւ Մարեմտորո Կողբա|ցի ԻԵ (25) դահեկան ետ ի գինու յանու(ն) | նորա պատարագ ի Ք(րիստո)ս, Գ(3), | մեք Հռոմոսի վա(նականքս)...:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Ջալալեանց Ս.**, էջ 18: **Սարգիսեան Ն.**, էջ 155: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 271: **Գէորգեանց Մ.**, էջ 76: **Կոստանեան Կ.**, էջ 241: **Thierry J-M.**, p. 40. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 195. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 455.

Ծանոթ. երկրորդ՝ թերավարտ արձանագրությունը Գեորգյանցի մոտ խիստ աղավաղված է: Ժամանակը՝ ԺԳ դար:

Խը Արձանագրությունը՝ գավթի արևմտյան պատին կից հարավային որմնասյունը հարավարևմտյան սյան հետ կապող կամարի արևմտահայաց կոր մակերեսին և որմնախոյակին, 19 տող, որի վերջին երեք տողը՝ որմնախոյակի վրա.

Հռոմոմոսի վանացս հայրե|նիք, որ ի քաղաքին այս են | Գեորգ ծեր երէց վանացս ետ զիւր | հայրենի տներն մատ ի Կարուց | դուռն ս(ուր)ք Ստեփանոս ընդդէմ եւ այլ | արդիւնք ետ եւ առ զիւր տանին | պատարագն Գ (3): | Գիւտիկ կրաւնաւոր ետ զիւր հա|յրենի տունն ի Քարափանն եւ առ զԽաչգիւտին



Արձանագրություններ *խե, խզ* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

պատարագն Գ (3): | Վարիամ ետ կուղպակ ի Դարբնո | փողոցին մատ ի ս(ուր)ք Գրիգորն եւ պա|տարագ մատչի յանուն նորա՝ Բ (2): | Աբրահամ ետ պարտէզ բերդին | առաջի հայրենիք է անունն եւ Ա (1) | պատարագ Գ (3): | Ես՝ Սարգիս, ետու զիմ հայրենիք տներն ի քաղաքին | Իգաձորին, դրան վանացս ասպնջականոց յա(ն)ունիս պա|տարագեն զՔ(րիստո)ս Գ (3):

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 155: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 271: **Ալիշան Ղ.**, էջ 25: **Գէորգեանց Մ.**, էջ 77: **Կոստանեան Կ.**, էջ 241-242: **Thierry J-M.**, p. 40. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 196. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 457.

Ծանոթ. *Սարգիս* անձնանունը Սարգսյանն ընթերցել է՝ *Սապիս*, իսկ *ի քաղաքին* և *յանունիս* բառերը չեն ընթերցվել: Ժամանակը՝ ԺԳ դար:

Խթ Արձանագրությունը՝ գավթի հյուսիսարևմտյան սյան խոյակի արևմտահայաց նիստին. երեք առանձին արձանագրություն, որոնցից առաջինը՝ երկու, մյուսները՝ մեկական տող.

Ես՝ Արշաւիր Աշնակեցի, ետու զիմ հայրէնի ծաղկոցն | զՈւռուտն, զի յիշեսցէն զիս առաջի զեն-մանն Ք(րիստոս)ի: |

Ես՝ Քաւշուտս, ետու զիմ ծաղկոցի կէսն զԽոս-րովեանցն՝ Ա (1): |

Ես՝ Խաչիկ երէց, միաբանեցա վանացս եւ ետու զծաղկոցին կէ(սն)...:

Հրատ. **Կարապետ վարդապետ**, «Հայաստան», 1849, № 6, էջ 4: **Սարգիսեան Ն.**, էջ 155: **Աբէլ արքեպիսկոպոս**, «Արարատ», 1870, ԺԱ, էջ 271: **Ալիշան Ղ.**, էջ 25: **Գէորգեանց Մ.**, էջ 76: **Կոստանեան Կ.**, էջ 241: **Thierry J-M.**, p. 39, 45. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 456.

Ծանոթ. Աբել արքեպիսկոպոսի մոտ *աշնակեցի*-ի փոխարեն վերծանված է *աղցացի*: Աղավաղված են նաև անձնանունները: Ժամանակը՝ ԺԳ դար:

ծ Արձանագրությունը՝ գավթի արևմտյան պատին կից որմնապյուները միմյանց կապող կամարի հարավահայաց կոր մակերեսին, 11 տող.

...ս ծեր երէց շինեցի զս(ուր)ք եկեղ|եցի ...ի ի նմա Ք(րիստո)ս յանուն միաբա|[նեցա սուրբ ուխտիս եւ ետու] իմ հայրենի տներն եւ զձիթահանքն | ... պա-տարագեսցեն զՔ(րիստո)ս՝ Ժ(10) | ...[ծնողա]ցն եւ Ե (5) իմ եղբաւրն Շնաւորին | ... |:

Ես՝ Շահս, ետու զիմ հայրենիք կուղպակն եւ զսրահն | Ծառավանի Գէորգա ...ս յարեւմտից կուսէ պատարագէս|ցեն զՔ(րիստո)ս Դ (4), Ա (1)՝ ինձ եւ Ա (1) իմ հաւրն՝ Գաբռոյ եւ Ա (1) իմ եղբարց(ն)՝ Կա-ռապետին, Եպրկա: | Ես՝ Խուրթի, ետու զիմ կուղ-պակն ս(ուր)ք Գեորգա ի հարաւո կուսէ | պատա-րագ ի Ք(րիստո)ս յանուն [Խուրթի] ... եւ ընկերին աւրն՝ Ա (1):

Հրատ. **Սարգիսեան Ն.**, էջ 156: **Ալիշան Ղ.**, էջ 25: **Thierry J-M.**, p. 41. **Ani T. Baladian** et **Jean-Michel Thierry**, p. 197. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 460.

Ծանոթ. Սարգսյանի մոտ, ումից օգտվել են մյուս հրատարակիչները, բացակայում են հետևյալ հատվածները. երրորդ տողում՝ *իմ հայր*, 5-րդում՝ *եւ Ե (5) ի*, 7-րդում՝ *ս ետու զ*, 8-րդում՝ *Ծառավան Գէորգա ...ս յարեւ*, 9-րդում՝ *Դ (4), Ա (1)՝ ինձ եւ Ա (1) իմ հաւրն՝ Գաբռոյ եւ Ա (1)*, 10-րդում՝ *Ես Խուրթի ետու զիմ կուղպակն*, 11-րդում՝ *աւրն՝ Ա (1):* Ժամանակը՝ ԺԳ դար: Հարկ է նշել, որ ավելի որակյալ լուսանկարի առկայության կամ տեղում վեր-



Արձանագրություններ *խէ, խը, խթ* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

Արձանագրություն *ծ* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

ծանության համար շատ ժամանակ հատկացնելու հնարավորության դեպքում անընթեռնելի մնացած հատվածները կարող են էապես կրճատվել:

ծա Արձանագրությունը՝ գավթի հարավային ճակատին.

Թվ(ի)ն Հայոց ՌՅԲ (1853) եւ յամի Փրկչին 1853, ողորմութեամբ ա(ստուծո)յ ես՝ Վարդան վարդապետ Օձնեցի, ի հիմանէ շինեցի զառ(ա)ջն(ո)ղղ(ա)ր(ա)ն եւ միաբանից զութն սենեակ, զմի տնտեսատուն իւր համբարանոցաւ յաւուրս առաջնորդութե(ան) իմոյ ի վանս Հռոմոսի, առ(ա)ջն(ո)ղղ(ա)կ(ա)ն արդեամբս Կարսայ ի յիշատակ հոգւոյ իմոյ եւ ազգիս հայոց. արդ՝ աղաչեմ յիշել զիս եւ զազգն իմ հայոց առաջի Ք(րիստո)սի, որոյ միշտ պարտաւոր համարիմ զանձն իմ և խնդրեմ ի յաջորդացդ իմոց շէն պահել զվանս որպէս ցանկայ ազգս հայոց:

Հրատ. **Յուսիկ եպս.**, Անցեալ դարերի յիշատակ, «Արարատ», 1904, էջ 989: **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 411.

Ծանոթ. Հուսիկ եպիսկոպոսը նշել է, որ «Վարդան վարդապետ Օձնեցին է Վարդան արքեպիսկոպոսը, որ իւր ծերութեան վերջին օրերը անց էր կացնում Սանահնում, ուր և վախճանուեց 1897 թուի փետրվարի 28-ին և թաղուեց իւր ծննդավայր Օձուն գիւղում: Հանգուցեալ Վարդան արքեպիսկոպոսը, պաշտօնավարութեան մէջ հանդիսանում է Հռոմոսի վանքի առաջնորդութեան ժամանակ՝ շինարար, իսկ Ալէքսանդրապօլի փոխանորդութեան ժամանակ՝ ուսումնասէր մարդ: Ալէքսանդրապօլի նախկին վիճակային դպրոցը իւր սկզբնաւորութեամբ պարտական է Վարդան արքեպիսկոպոսին»:

11-րդ տողում *ցանկայ*-ի փոխարեն մյուս հրատարակիչն ունի՝ *տուն Աստուծոյ:*

Վիմագիրը չի պահպանվել:

Զանգակատուն

ծբ Արձանագրությունը՝ գավթի տանիքին՝ զանգակատան ութանիստ հիմքի արևելյան ճակատի հյուսիսային եզրին, 3 տող.

Նայեայ ինձ՝ Տիմոթիս, | տ(է)ր ա(ստուա)ծ իմ եւ ողորմե արացես | շատ աշխատեց, ՉԽԸ (1299):

Հրատ. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 483.

ծգ Արձանագրությունը՝ գավթի տանիքին՝ զանգակատան ութանիստ հիմքի արևելյան ճակատին, 2 տող.

Ես՝ տ(է)ր Սամէլս յուշնեցի, | եկի Ղօշավանք, թվ(ին) ՌՃԼԶ (1687):

Հրատ. **Karapetyan S.** & **Mahe J.-P.**, p. 484.

Ծանոթ. այցելուն ներկայիս Արագածոտնի մարզի Ուշի գյուղից է:

Շարունակելի

Արձանագրություններ *ծբ, ծգ* (գրչ.՝ հոդվածագրի, 2015 թ.)

ՓՐԿՎԱԾ ՄԱՄՆԻԿՆԵՐ ՀՈՇՈՏՎԱԾ ՄՇԱԿՈՒՅԹԻՑ

Ռաֆֆի Քորթոշյան

Հայկական հարցի լուծմանն ուղղված թուրքական գործելակերպի անբաժանելի մասը համարվող մշակութային եղեռնը շարունակական բնույթ է կրել ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ Թուրքիայի Հանրապետության օրոք:

Եթե երիտթուրքերն Արևմտյան Հայաստանի բնիկների ֆիզիկական բնաջնջմամբ երկրամասից վերացրին նաև նրանց ոչ նյութական (սովորույթները, բարբառները, տեղանունները, ծեսերը և այլն) ու շարժական (ձեռագիր մատյաններ, եկեղեցական իրեր և այլն) մշակութային արժեքների մեծ մասը, ապա քեմալական Թուրքիան, որպես հայերի դեմ իրագործված ցեղասպանության ծրագրի շարունակություն, կանխամտածված և զանգվածաբար ոչընչացրեց հայկական մշակութային անշարժ ժառանգությունը:

Դեռևս թուրքական հանրապետության ստեղծման առաջին տարիներից գործադրվող հայկական հուշարձանների՝ հատկապես քրիստոնեական շերտի վերացմանն ուղղված պետական ծրագիրն ահագնանում է 1940-1960-ական թթ., երբ թուրքական բանակի անմիջական ներգրավմամբ ահռելի չափերի է հասնում անհետացված հուշարձանների քանակը: Զարմանալի չէ, որ հայոց բնօրրանը սեփականացնելու մոլուցքով տարված թուրքական իշխանություններն իրենց իսկ գոյությամբ պատմական իրականությունը մատնանշող, ինչպես նաև համաշխարհային քաղաքակրթության համար չափազանց արժեքավոր հայկական միջնադարյան ճարտարապետության նշանավոր կառույցների՝ հիմնովին վերացման գործին հանցակից են դարձնում նաև զինվորներին[1]: Նշված թվականներին վերջիններիս մեղսակցությամբ ոչնչացվել են, օրինակ, Շիրակավանի Սբ. Ամենափրկիչ կաթողիկե (897 թ.), Արգինայի կաթողիկե (990 թ.), Բագարանի անանուն (Ժ-ԺԱ դդ.) եկեղեցիները, Բագնայրի, Խծկոնքի և Ընձաքարի վանական համալիրները:

Բազմաթիվ և անհերքելի փաստերը ցույց են տալիս, որ հայկական հուշարձանների ոչնչացման գործընթացը 1970-ական թթ. առ այսօր անշեղորեն շարունակվում է, սակայն կործանիչ ուժն արդեն գերազանցապես ոչ թե բանակն է, այլ պետական քարոզչությամբ և անպատժելիությամբ ոգեշնչված տեղաբնակ գանձախույզը:

Սույն հոդվածաշարի նպատակն է գոնե թղթի վրա փրկել հիմնականում գանձախույզներից տարբեր միջոցներով ձեռք բերված լուսանկարներից մեզ հայտնի դարձած և երբևէ չուսումնասիրված անշարժ և շարժական հուշարձանների պատմական, ինչպես նաև գրչագրական արժեք ներկայացնող արձանագրությունները՝ համոզված լինելով, որ դրանց մեծագույն մասն անխուսափելիորեն արժանանալու է հայկական ոչնչացված բյուրավոր հուշարձանների ճակատագրին:

ա Արձանագրության բեկոր. ըստ գանձախույզի՝ գտնվում է Արճեշ գավառում (ճշգրիտ վայրը չի նշվել): Արձանագրությունից պահպանվել է որպես շինանյութ գործածված կենտրոնական ստորին հատվածը: Ըստ գրչագրական առանձնահատկությունների՝ թվագրում ենք ԺԱ-ԺԲ դարերով:

... ազատութի... / ... ծփանաց կենց... / ...այտեալ տկար....



Արձանագրություն *ա* (գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

բ Տապանաքար. ուղղանկյունաձև, ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ գտնվում է Վարդո գավառի Ներքին Հաջիբեկ (այժմ՝ Աշաղը Հաջիբեյ) գյուղի տարածքում: Ունի ԺԲ-ԺԴ դդ. բնորոշ հայերեն արձանագրություն.

Տ(է)ր ա(ստուա)ծ ողորմե(այ) Ավետեացն:

Ծանոթ. Հաջիբեկ գյուղը գտնվում է Վարդո քաղաքից 6,5 կմ հարավ: 1886 թ. ուներ 16 քուրդ բնակիչ՝ ջիբրանցի ցեղից (**Колюбакин А.**, Материалы для военно-статистическаго обозрения Азиятской Турции, том II, часть II, Тифлис, 1890, с. 290):

1 Վերոնշյալները փաստող գրականությունը տե՛ս **Kouyumjian D.**, The Destruction of Armenian Historical Monuments as a continuation of th Turkish policy of Genocide, A Crime of Silence the Armenian Genocide, Cambridge, 1985: **Թիերրի Ժ.-Մ.**, Հայկական հուշարձանների կրած վնասները Արևելյան Թուրքիայում, «Անի», 1992, № 1: **Մուրադյան Ա.**, Հայաստանի մեկ այլ ողբերգությունը, «Անի», 1992, № 2 (թարգ.՝ «Դը ինդեփենդրն մեգզըզին», 1989, 18 մարտի): **Chorbajian L.**, **Shirinian G.**, Studies in Comparative Genocide, Great Britain, 1999: **Քեշիշյան Մ.**, Հայկական մշակութային եղեռնը Օսմանյան Թուրքիայի տարածքում, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2003, № 7: **Կարապետյան Ս.**, Հայկական հուշարձանների վիճակը Արևմտյան Հայաստանում, «Վարք», 2010, № 2: **Givargizyan A.**, Armenian National-Cultural Genocide. The Century-Long Struggle for Justice, VUKOVAR '91.- ISTINA I/ILI OSPORAVANJE, Zagreb, 2013. **Կարապետյան Ս.**, Եղեռն՝ Եղեռնից հետո, հ. Ա, Երևան, 2015:

գ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ գտնվում է Արճեշ գավառում (վայրը հստակ չի նշվել): Ունի կանոնավոր եզրագիծ և զուսպ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ 6 տող.

զԹորոս սարկաւագ, / տարաժամ / փոխեալ ի / Ք(րիստո)ս, յիշ/եսջիք / թվ(ին) ՉԼԷ (1288):

դ Խաչքարի բեկոր. ըստ գանձախույզի՝ գտնվում է Արճեշ գավառում (վայրը հստակ չի նշվել): Պահպանվել է խաչքարի կենտրոնական աջ հատվածը, որից երևում է, որ այն ունեցել է կանոնավոր եզրագիծ: Ըստ գրչագրական, ոճական և գեղարվեստական առանձնահատկությունների՝ թվագրում ենք ԺԳ-ԺԴ դարերով: Փորագիր արձանագրության պահպանված հատվածն է.

... [խ]աչս ձեռամբ Յ(ա)կ(ո)բ...:



Տապանաքար *բ*, խաչքարեր գ և *դ* (գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

ե Կնիք-մատանի. ըստ գանձախույզի՝ պահվում է Երզնկա քաղաքում, սակայն հայտնաբերման ճշգրիտ վայրն անհայտ է: Արձաթե մատանին եթե կեղծված չէ, ապա թվագրում ենք ԺԳ-ԺԴ դարերով, քանի որ արձանագրությունը շատ նման է Կիլիկիայի թագավոր Սմբատ Ա Հեթումյանի (1277-1310 թթ.) դրամի մակագրությանը, ինչպես նաև մատանու կենտրոնում առկա է թագավորության զինանշանը: Արձանագրությունն է.

Սմբատ ծառայ:

Կնիք-մատանի *ե* (լուս.՝ 2016) և Սմբատ Ա Հեթումյանի մետաղադրամը

զ Խաչքար. ըստ գանձախույզի՝ գտնվում է Բաղեշ գավառում (վայրը հստակ չի նշվել): Տեղահան խաչքարն ունի անկանոն եզրագիծ և ուշագրավ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ 7 տող.

Տ(է)ր / ա(ստուա)ծ / Յ(իսու)ս / Ք(րիստո)ս: / Թվ(ին) ՉԺՉ (1467): Ստ(ե)փ(ա)/նու յիշե-ց(է)ք ի / Ք(րիստո)ս:

Խաչքար *զ* (լուս.՝ 2015 թ.)

է Տապանաքար. ուղղանկյունաձև, ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ գտնվում է Մալաթիա քաղաքի Սբ. Երրորդություն եկեղեցում: Փորագիր արձանագրությունը՝ 7 տող.

Ա(ստուա)ծ ողորմի / Լ(ի)պար(ի)տին հ/ոգուն, որ / հանգեաւ / ի Ք(րիստո)ս, / թվին հ(այո)/ց ՌԾԷ (1608):

Ծանոթ. Սբ. Երրորդություն եկեղեցին կառուցվել է 1880 թ. Մալաթիայի հայաբնակ Վարի թաղում (**Ալպոյաճեան Ա.**, Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961, էջ 531-532): Տապանաքարի գոյությունը հուշում է, որ եկեղեցու տեղում հավանաբար եղել է հայկական գերեզմանոց:



Տապանաքար *է* (գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

ը Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ գտնվում է Մուշ քաղաքում: Ունի գեղազարդ լուծումներ: Քաղաքի եկեղեցիներից մեկի (դժբախտաբար, անունը չի հիշվում) խորանների շինարարական արձանագրությունն է, 6 տող.

Տ(է)ր ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Ք(րիստո)ս: Խաչս կ(ա)նգ(ն)եցաւ եւ ս(ուր)ք խ(ո)ման(ն)երս շի|նեցաւ ձեռամբ Յ(ո)հանին, Ս(ա)հ(ա)կին՝ յ(ի)շ|ատ(ա)կ իրեն և ծնող(ա)ցն կենդ(ա)ն(եա)ց և հանգ(ո)ւ|ցէլոցն ամէնի, թվին ՌՃԽԱ (1692):

Խաչքար ը (լուս.՝ 2018 թ.)

Ծանոթ. 1838 թ.-ից մինչև Մեծ եղեռնը Մուշ քաղաքում հիշվում է առաքելական 5 եկեղեցի, որոնցից մեկը կոչվում էր Սբ. Քառասուն աստիճաններ (**Southgate H.**, Narrative of a Tour Through Armenia, Kurdistan, Persia and Mesopotamia, With an Introduction, and Occasional Observations Upon The Condition of Mohammedanism and Christianity in Those Countries, vol. 1, New-York, 1840, p. 196: Տե՛ս նաև **Ainsworth W. F.**, Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea, and Armenia, vol. II, London, 1842, p. 382-383: **Սարգիսեան Ն.**, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 227: **Աղանեանց Գիւտ ա. ք.**, Դիւան Հայոց պատմութեան. Հարստահարութիւններ Տաճկահայաստանում, գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 79: **Մտրակ**, Մշոյ տագնապը զատկէն մինչեւ պայրամ, «Հնչակ», 1892, № 6, էջ 45: **Տեր-Կարապետյան Գ.** (Մշո Գեղամ), Տարօնի վանքերը: Ուղեւորի յիշատակներ, 2003, էջ 259: Հմմտ. **Cuinet V.**, La Turquie d'Asie, Géographie administrative, Paris, 1891, t. I, p. 577: **Լինչ Հ.**, Հայաստան. ուղեւորութիւն եւ ուսումնասիրութիւններ, թարգմ.՝ Լ. Լարենցի, հ. Բ, Կ.Պոլիս, 1914, էջ 196): 1881 թվականից, ի հավելումն մշտապես նշված 5 եկեղեցու (Սբ. Հարություն, Սբ. Աստվածածին, Սբ. Մարինե, Սբ. Կիրակոս և Սբ. Սարգիս), քաղաքում հիշվում է ևս 2 մատուռ՝ Սբ. Գևորգ և Սբ. Մինաս (**Հին-Մշեցի**, Տաճկական Հայաստան, «Արձագանք», 1882, № 1, 21 փետրվարի, էջ 7: Տե՛ս նաև Զեկուցում Մուշ ուղարկված յանձնաժողովի, «Արարատ», 1916, Է-Ը, էջ 571-572: Հմմտ. **Ծոցիկեան Ս.**, Արեւմտահայ աշխարհ, Նիւ Յորք, 1947, էջ 430): Մեզ չհաջողվեց պարզել, թե նշված կառույցներից որ մեկում է եղել այս խաչքարը, որի մասին որևէ տեղեկություն առկա չէ նաև Գեղամ Տեր-Կարապետյանի և Ն. Մարտիրոսյանի աշխատություններում (**Մարտիրոսեան Ն.**, Նշխարք Տարոնոյ, 1967, էջ 526-527: **Տեր-Կարապետյան Գ.**, նշվ. աշխ., էջ 258-261):

թ Տապանաքար. ըստ գանձախույզի՝ գտնվում է Երզնկայի Բեյբաղ թաղամասում: Այն տարածված է քաղաքի հարավային կողմում և հավանաբար կառուցապատվել է ոչնչացված հայկական գերեզմանոցի տեղում: Փորագիր արձանագրությունը՝ 4 տող.

Տապանս ըռապատ|ցի խ(օ)ճ(ա)յ Մուսէսի|ն, թվ(ի)ն ՌՃԽԵ (1696): | Հայր մէր:

Ծանոթ. Ռապատը հավանաբար Սեբաստիայի նահանգի Ակն գավառում գտնվող Բենկա գյուղն է: 1880 թ. ուներ 874 հայ և 60 թուրք բնակիչ (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, կազմ.՝ **Հակոբյան Թ.**, **Մելիք-Բախշյան Ս.**, **Բարսեղյան Հ.**, Երևան, 1986, էջ 655): Գյուղում 1925 թ. դեռևս բնակվում էր 12 (3-ը՝ ար., 9-ը՝ իգ.) հայ («Հայաստանի կոչնակ», 1926, № 10, 6 մարտի, էջ 441):

Ըստ Եղիա Թորոսյանի (1917 թ. մայիսի 10-ին գտնվում էր Երզնկայում) վկայության՝ քաղաքի հայոց գերեզմանատան բոլոր քարերը 1915-1917 թթ. օսմանյան կառավարության որոշմամբ որպես շինանյութ գործածելու նպատակով տեղահանվել են, սակայն «շնորհիվ ռուսական բանակի, չի հաջողվեցավ և այդ գերեզմանին քարերը մեծ աշխատություններով թուրքերուն թաղեն փոխադրեցին նորեն հայոց գերեզմանատունը» (**Մելքոնյան Հ.**, Հիշողության դաշտ, Երևան, 1987, էջ 291): Երևում է, որ թուրքական հանրապետության հիմնադրումից հետո ավարտին է հասցվել օսմանյան կառավարության սկսած վանդալիզմը:

ժ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Գտնվելու վայրն անհայտ է: Ունի կանոնավոր եզրագիծ և զուսպ հարդարանք: Եռատող արձանագրությունն է.

Թվին ՌՃԽԷ (1698), | Արուս(ին) | յ(ի)շ(եցէք) ի Ք(րիստո)ս:

ժա Պղնձե գավազան. ըստ գանձախույզի՝ հայտնաբերվել է Երզնկա քաղաքի եկեղեցիներից մեկում: Կերտվել է 1723 թ. տեր Հակոբի համար: Արձանագրությունն է.

Տ(է)ր Ակօբի, 1172° (1723):

Ծանոթ. ԺԸ դարում Երզնկա քաղաքում հիշվում է 5 եկեղեցի՝ Սբ. Նշան, Սբ. Երրորդություն, Սբ. Սարգիս, Սբ. Փրկիչ և Սբ. Աստվածածին: Վերջինս ավերվել է 1874 թ. (**Էփրիկեան Մ.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1903-905, էջ 658-662), որից հետո քաղաքում այլևս հիշվում է միայն 4 եկեղեցի («Բիւզանդիոն», 1897, № 239, 12/24 օգոստոսի, էջ 1: Տե՛ս նաև 1903 ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց, Կ.Պոլիս, էջ 328: **Ա-Դօ** /Հովհաննես Տեր-Մարտիրոսյան/, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 221): Հայտնի է նաև, որ 1917 թ. Սբ. Փրկիչ եկեղեցին պայթեցվել է (**Մելիքեան Ա.**, Երէկ եւ այսօր, «Հայաստան», 1917, № 108, 15 սեպտեմբերի, էջ 2: Տե՛ս նաև «Հայաստան», 1917, № 134, 18 հոկտեմբերի, էջ 3): Մյուս երեք եկեղեցիների ավերման ժամանակի մասին տեղեկություններ չունենք: Հավանաբար ոչնչացվել

Տապանաքար թ, խաչքար ժ, պղնձե գավազան ժա (գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

են Ի դարի երկրորդ կեսին, հետևաբար կարծում ենք, որ գավազանը հայտնաբերվել է դրանցից որևէ մեկի ավերման ընթացքում:

ժբ Տապանաքար. ուղղանկյունաձև է: Հայտնաբերվել է 2020 թ. Նազիլլի քաղաքի՝ հայոց յուրացված գերեզմանոցի տեղում կառուցված նախկին ոստիկանական դպրոցի տարածքում քաղաքային այգու հիմնադրման աշխատանքների ժամանակ: Փորագիր արձանագրությունը՝ 2 տող.

Այս է տապան տաշտունեցի տ(է)ր Մօվսէսի որդի Յօսէփին, | թվ(ին) ՌՃՀԷ (1728):

Ծանոթ. Թե ե՞րբ են հայերը հաստատվել քաղաքում, մեզ հայտնի չէ, սակայն հայտնաբերված տապանաքարերից պարզվում է՝ ԺԹ դարի սկզբին այստեղ եղել է կազմակերպված համայնք, որը նաև ունեցել է հոգևոր հովիվ և գերեզմանոց: 1920 թ. հայերը կազմում էին 100 տուն: Ունեին եկեղեցի, որը, սակայն, նշված թվականին հրկիզվել էր («Մշակ», 1920, № 82, 28 օգոստոսի, էջ 2):

Տաշտուն գյուղը գտնվում է ՀՀ-ի Սյունիքի մարզի Մեղրիի շրջանում:

ժգ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ գտնվում է Մուշ քաղաքում (*ը*-ի նույն վայրում): Երկթեք վերնամասով խաչքարն ունի ուշագրավ լուծումներ և հեծյալի պատկերաքանդակ: Արձանագրությունը՝ 9 տող.

Տ(է)ր ա(ստուա)ծ | Յ(իսու)ս Ք(րիստո)ս: | Յովանէսին: | Թվ(ին) ՌՃՁ՞(1731): | Խաչս բարեխօս է առ ա(ստուա)ծ վ(ա)սն | հոգ(ոյն)՞ Յոհանի հարսի Մա-ն|իշակին, հօրն՝ տ(է)ր Մարտ(ի)րոսին, | [մօրն՞]՝ Շաքարին և որդի Յով|անէսին, թվ(ին) ՌՃՁ (1731):

ժդ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ պահվում է Մուշ քաղաքի տներից մեկում: Հավանաբար ագուցված է եղել քաղաքի եկեղեցիներից մեկի որմին: Գեղաքանդակ խաչքարն ունի կանոնավոր եզրագիծ՝ սլաքաձև վերնամասով: Փորագիր արձանագրությունը՝ 6 տող.

Տ(է)ր | ա(ստուա)ծ | Յ(իսու)ս | Ք(րիստո)ս: | Թվ(ին) ՌՃՁԶ (1737): | Խ(ա)չս բարեխօս է առ ա(ստուա)ծ վ(ա)ս(ն) | Կարապետին և ծնօղ(ա)ց՝ մահդեսի | Մարկոսին և Ղումաշին:

Տապանաքար *ժբ*, խաչքարեր *ժգ* և *ժդ* (լուս.՝ 2020 և 2018 թթ.)

ժե Տապանաքար. ամբողջական է, սակայն տեղահան: Հայտնաբերվել է 2020 թ. Նազիլլի քաղաքի՝ հայոց յուրացված գերեզմանոցի տեղում կառուցված նախկին ոստիկանական դպրոցի տարածքում քաղաքային այգու հիմնադրման աշխատանքների ժամանակ: Փորագիր արձանագրությունը՝ 8 տող.

Այս է տապան կար/պէցի տ(է)ր Մա(ր)տիրոսի | կողակից Էպրաք/ին, որ փոխեցաւ ա/ռ ա(ստուա)ծ, թվ(ի)ն ՌՄԺԷ (1768) | փէդրվարի Զ (6)-ին: | Այս հինկ երէխ/աս ըս դուրան:

Ծանոթ. Կարպի (Կարբի) գյուղը գտնվում է ՀՀ-ի Արագածոտնի մարզի Աշտարակի շրջանում:

ժզ Տապանաքար. ամբողջական է, սակայն տեղահան: Գտնվելու վայրն անհայտ է: Ունի կանոնավոր եզրագիծ և ուշագրավ պատկերաքանդակներ: Փորագիր արձանագրությունը՝ 3 տող.

Ա(յ)ս է տապան Ղազարին, որ է որդի մղսի Կար/ապ(ե)տին: | Թվ(ին) ՌՄԺԸ (1769):

ժէ Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ գտնվում է Դատվան գավառում (վայրը հստակ չի նշվել): Ունի անկանոն եզրագիծ և զուսպ հարդարանք: Ուշագրավ է մարդու՝ պարզ խազային պատկերաքանդակը: Փորագիր արձանագրությունն է.

Թվ(ին) ՌՄԻ (1771), Յակոբ(ին):

Տապանաքարեր *ժե*, *ժզ*, խաչքար *ժէ* (գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.)

ժը Պատվանդան (հավանաբար սեղանի խաչի). ըստ գանձախույզի՝ պահվում է Երզնկա քաղաքի տներից մեկում: Արձանագրությունն է.

Մ(ա)հ(տես)ի տ(է)ր / Պապի որդի մ(ա)հ/(տես)ի Արութին, ՌՌՁ (1775-1776 թթ.):

ժթ Կնիք-մատանի. ըստ գանձախույզի՝ հայտնաբերվել է Խրբեկ (այժմ՝ Սյուրյուգյուդեն) գյուղից, որը գտնվում է Մուշ քաղաքից 20 կմ հյուսիս-արևելք: Արծաթե մատանին եղել է հանգուցյալի մատին: Ըստ ոճական առանձնահատկությունների՝ թվագրում ենք ԺԸ դարի առաջին կեսով: Արձանագրությունն է.

Ք(րիստոս)ի ծ(ա)ռ(այ) / Սիմա/ոն:

Ծանոթ. Խրբեկը հիշվում է նաև Խուրաբեկ և Խուրապեկ տարբերակներով: 1880-ական թթ. արդեն զուտ քրդաբնակ էր (**Բդէեան Սարգիս եւ Միսակ**, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962, էջ 87): Պետք չէ շփոթել Մուշից 33 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Խարաբեք (Խարաբեկ, Կարաբեկ, այժմ՝ Կարաբեյ) գյուղի հետ:

ի Խաչքար. ամբողջական է, սակայն տեղահան: Հայտնաբերվել է 2020 թ. Մուշ քաղաքից 17 կմ հյուսիս-արևելք գտնվող Քրդագոմ (այժմ՝ Թաբանլը) գյուղի տներից մեկի հիմքերից հիմնանորոգման աշխատանքների ժամանակ: Հավանաբար որպես շինանյութ է գործածվել Ի դարի կեսերին՝ գյուղի երբեմնի հայոց գերեզմանոցն ավերելու ընթացքում: Վերնամասում երկթեք է, ունի ոչ բարձրարվեստ, բայց ուշագրավ հարդարանք: Փորագիր արձանագրությունը՝ 6 տող.

Կա(ն)գնէցաւ խաչս ի փրկութ(եան) / Պո[ղոս]ի[ն], / թվին ՌՄԿ (1811): / Կանկնէցաւ խա/չս ի փրկութ(եա)ն հոգ/ուն Պողոսին:

Ծանոթ. Քրդագոմը 1878 թ. ուներ 280 շունչ (**Տեկանց Ա.**, Այցելություն ի Հայաստան 1878 թ., Երևան, 1985, էջ 50), 1883 թ.՝ 140 (**Միրախորեան Մ.**, Նկարագրական ուղեւորութիւն ի հայաբնակ գաւառս Արեւելեան Տաճկաստանի, մասն Ա, Կ.Պոլիս, 1885, էջ 49), 1886 թ.՝ 38 տուն (**Колюбакин А.**, նշվ. աշխ., том VIII, часть II, с. 17), իսկ Մեծ եղեռնի նախօրեին՝ 161 տուն՝ 1388 հայ բնակիչ (Համեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրութիւնը, «Վան-Տոսպ», 1916, № 12, 14 փետրուարի, էջ 8):

Պատվանդան *ժը* (լուս.՝ 2016 թ., գրչ.՝ հոդվածագրի, 2021 թ.), կնիք-մատանի *ժթ*, խաչքար *ի* (լուս.՝ 2016 և 2020 թթ.)

իա Տապանաքար. ուղղանկյունաձև է, ամբողջական, սակայն տեղահան: Ըստ գանձախույզի՝ գտնվում է Ստորին Բասենի Խորասան քաղաքից 7 կմ հյուսիս-արևմուտք՝ Իլիմի (այժմ՝ Չայըրդյուզյու) գյուղում: Հավանաբար հափշտակվել է բնակավայրի հայոց ավերված գերեզմանոցից: Փորագիր արձանագրությունը՝ 2 տող.

Այս է տապան Աղէկսանդր/ի կողակից Թավրէզին, թվ(ին) ՌՄԿԵ (1816):

Ծանոթ. Խորասան գյուղաքաղաքը 1880-ական թթ. ուներ 196 (**Колюбакин А.**, նշվ. աշխ., том II, часть II, с. 14), 1890-ական թթ.՝ 100 (**Ալիշան Ղ.**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 33), իսկ 1909 թ.՝ 24 տուն հայ բնակիչ (**Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 180):

իբ Տապանաքար. ըստ գանձախույզի՝ ագուցված է Սեբաստիա քաղաքից 4 կմ հյուսիս-արևելք գտնվող Բրգնիկ (այժմ՝ Չայբոյու) գյուղի տներից մեկի որմին: Հավանաբար հափշտակվել է բնակավայրի հայոց ավերված գերեզմանոցից, ապա գործածվել որպես շինանյութ: Փորագիր արձանագրությունը՝ 8 տող.

Աստ հանգչի մար/մին Ծերուկեան / Յովհաննու բրգնք/ցւոյ հանգուցելո / ի հասակի վաթ/սուն ամաց / հասակի 1861, / ի յունիսի 15:

Ծանոթ. Բրգնիկը 1890-ական թթ. ուներ 1300 հայ կաթողիկե բնակիչ (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., էջ 436):

իգ Տան շինարարական արձանագրություն. ըստ գանձախույզի՝ գտնվում է Օլթի քաղաքից 35 կմ հյուսիս-արևելք՝ Բարիկ (այժմ՝ Օզյուրթ) գյուղում: Փորագրվել է գլխատան փայտե սյան երեսին.

Շինեցաւ / տունը այս / ձեռամբ վար/պետ Մկրտիչ/ին, որ է որդի / Սարգսին, / տ(ա)ճ(կաց) ՌՌՀ-ին (1865-1866 թթ.): / Խաչօն, Պօղոս, / Ավէտիս:

Ծանոթ. Բարիկը 1878 թ. ուներ 40, իսկ 1907 թ.՝ 500 թուրք բնակիչ (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, նշվ. հատոր, էջ 625):

Տապանաքարեր *իա*, *իբ* և արձանագրություն *իգ* (լուս.՝ 2020 և 2015 թթ.)

իդ Տապանաքար. ըստ գանձախույզի՝ գտնվում է Երզնկա քաղաքից 42 կմ հարավ-արևմուտք՝ Զուրուն (այժմ՝ Չայըրյազը) գյուղի հայոց գերեզմանոցում: Փորագիր արձանագրությունը՝ 3 տող.

Թաթոս | Յակոբեան, | 1880:

իե Տապանաքար. ըստ գանձախույզի՝ գտնվում է Զուրուն գյուղի հայոց գերեզմանոցում: Փորագիր արձանագրությունը՝ 6 տող.

Ծ(առայ) Ք(րիստոսի) | Գրիգոր | Տ(է)ր-Պողոս(եան)ին, | 1896, | դեկտ(եմբերի) | 19:

իզ Ջնարակված սալիկ. գանձախույզի ասությամբ պահվում է Քյոթահիա քաղաքի տներից մեկում: Ըստ ոճական առանձնահատկությունների՝ թվագրում ենք ԺԹ դարով: Արձանագրությունն է.

Յարութիւն | Ղազարեան:

Տապանաքարեր *իդ, իե* և ջնարակված սալիկ *իզ*

իէ Տապանաքար. ուղղանկյունաձև է, կամարաձև ավարտով: Ըստ գանձախույզի՝ ընկած է Կամախ քաղաքից 17 կմ հյուսիս-արևելք՝ Կառնի (այժմ՝ Գյոքքայա) գյուղի վարչական տարածքում գտնվող Ավագ վանքում և պատկանում է վանքի վերջին սեփականատիրոջը՝ Գալուստ Բրոխորոնյանին: Փորագիր արձանագրությունը՝ 21 տող.

Մահարձան | Գալուստ տ(էր) Վարդան | Բրոխորոնեանի: | Ծնեալ 1848 և զրաւեալ ի կենաց | 1903 յ(ամի), 17 ամսոյն մարեր: | Գերազանց լերին Սեպուհոյ ծնունդ, | որդի Վարդանայ մեծի ըաբունւոյն | Բրոխորենե(ա)ն ճետզդ: Դու սիրասնունդ, | ազնիւրդ,Գալուստ հիմարդ, խոր ի քուն | ննջես անյարիր ի նսեմըդ դամբան, | թողեալ զընտանիսդ ի լաց յողբական: | Հայրենեացս սէր ընդ ազատութեան, | բորբոքեալ յիս բոց եռանդեան անշէջ, | հան զիս ախոյեան, ընդդէմ ստրկութեան: | Դաւաճան մարին գնդակ եւ սուսեր, | նենգ(ե)ժոտ հնարիւք արկ զիս դիտապատ, | նահատակեալ զիս ազգին իմ ի սէր: | Փըրկիչն Յ(իսու)ս ողորմեա հոգւոյն, | եկելոյ առ քեզ տարմամբ իւր սիրուն, | ընդ նահատակաց ազգ իմ անհամար, | դասելով ըզսա սրբոց քոյ ի պար:

Հրատ. Արձանագրությունն առաջին անգամ թարգմանաբար հրատարակել է Ժան-Միշել Թիերրին: Տե՛ս **Thierry J.-M.**, Monuments Arménniens de Haute-Arménie, Paris, 2005, p. 112.

Ծանոթ. հայտնի է, որ Կառնի գյուղը ծաղկուն շրջանում ունեցել է մինչև 4000 տուն հայ բնակիչ (**Մավի Դօնլի** /Գ. Մգճյան/, Կամախ, «Մշակ», 1895, № 94, 19 օգոստոսի, էջ 2): 1870-ական թթ. ուներ 9 տուն՝ 95 շունչ (**Սրուանձտեանց Գ.**, Թորոս աղբար, մաս Բ, 1884, էջ 493), 1895 թ.՝ 7 տուն (**Մավի Դօնլի**, նույն տեղում), 1890-ականների վերջին՝ 10 տուն (**Էփրիկեան Ս.**, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 267), 1909 թ.՝ 27 տուն՝ 210 շունչ (**Ա-Դօ**, Վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 225), իսկ 1913 թ.՝ 12 տուն հայ բնակիչ (**Երուանդ եպիսկոպոս**, Դարանաղեաց գաւառը, «Սիոն», 1927, № 11, էջ 341: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Բարձր Հայքի վանքերը, Դարանաղեաց վանքերը, «Հանդէս ամսօրեայ», 1948, էջ 528):

Ավագ վանքը, որի պահպանությունը դարեր ի վեր վերապահված է եղել Բրոխորոնյանց բազմանդամ գերդաստանին (**Յակոբեանց Դ.**, Սեպուհ լերան սրբավայրերը, «Արարատ», Է-Ը, 1901, էջ 364: Տե՛ս նաև **Երուանդ եպիսկոպոս**, նշվ. հոդվ., էջ 213: **Ստեփանյան Գ.**, Երզնկայի վանքերը, «Էջմիածին», 1992, Թ-Ժ-ԺԱ, էջ 137), գտնվում է Կամախից ուղիղ գծով 20 կմ հյուսիս-արևելք: Կոչվել է նաև Սբ. Թադևոս Առաքյալի վանք կամ Սբ. Լուսավորիչ անապատ (**Ծովական Ն.**, Աւագ վանք, «Սիոն», 1949, № 8, էջ 219: Տե՛ս նաև **Ոսկեան Հ.**, Բարձր Հայքի վանքերը. Դարանաղեաց վանքերը, «Հանդէս ամսօրեայ», 1948, № 9-12, էջ 529): 1884 թ. վանքի վանահայր և Կամախի թեմի առաջնորդ է հիշվում Հարություն քահանա Բրոխորոնյանը (**Սրուանձտեանց Գ.**, նշվ. աշխ., էջ 58):

Գալուստ Բրոխորոնյանը որդին է վանքի վերջին վանահայր Վարդան վարդապետ (Շուշտակ) Բրոխորոնյանցի: Վերջինս 1896 թ. Կամախի թեմի առաջնորդն էր՝ բանտարկված Երզնկայում (Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան, Երեւան, 2001, էջ 116), իսկ 1901 թ.՝ աքսորված Կ.Պոլիս (**Յակոբեանց Դ.**, նշվ. հոդվ., էջ 364: Տե՛ս նաև **Երուանդ եպիսկոպոս**, նշվ. հոդվ., էջ 213): Հայտնի է, որ 1903 թ. վանքի կառավարիչ Գալուստ Բրոխորոնյանին սպանում է քուրդ ավազակապետ Թեմիր բեկը: Նա երեք «...ընկերներով կերթայ Կառնի գիւղ, ուր կը գտնուէր վանքի պետը՝ Գալուստ Բրոխորոնեան, բոլորովին անտեղեակ իրեն հասած դժբախտութեան: Թէմիր պէկ կերթայ Գալուստ աղայի մօտ, կը խօսակցին, սուրճ կը խմեն ելն: Պէկը կը խնդրէ, որ մինչև Ս. Թորոս եկեղեցին իրեն ընկերանայ, կարևոր գաղտնիքի մը յայտնութեան համար: Գալուստ աղան կը հնազանդի: Երբ բաւական կը հեռանան գիւղէն, պէկը իր երեք ընկերներով սուսերամերկ կը յարձակին Գալուստ աղայի վրայ սուրի հարուածներ տալով այդ ողբացեալ մարդու կեանքին» (Նամակ Երզնկայէն, «Դրօշակ», 1903, № 6, յուլիս, էջ 86):

իը Կնիք. ըստ գանձախույզի՝ պահվում է Երզնկա քաղաքում, սակայն արձանագրությունը վկայում է, որ պատկանել է քաղաքից 13 կմ հարավ-արևելք գտնվող Մոլլագեղի (այժմ՝ Մոլլաքյոյ) հայոց դպրոցին: Արձանագրությունն է.

Կրթասիրաց միութիւն, | 1913 օգոստոս 1, | Եր[զնկ]այի Մօլլա գիւղի:

Ծանոթ. Մոլլագեղը 1895 թ. ուներ 50 (Երզնկան եւ նրա շրջադաշտը, «Մշակ», 1895, № 145, 16 դեկտեմբերի, էջ 1-2), իսկ Մեծ եղեռնի նախօրեին՝ 25 տուն հայ բնակիչ (**Ղևոնդեան Ա.**, Վիճակացոյց Երզնկայի շրջանի հայ գիւղերուն, «Ալիք», 1914, № 8, 28 յունիսի, էջ 3: Հմմտ. «Հայաստան», 1917, № 132, 14 հոկտեմբերի, էջ 3: **Միրմէնեան Գ.**, Երզնկա, Գահիրէ, 1947, էջ 83):

Համաձայն կնիքի արձանագրության՝ դպրոցը 1913 թ. հիմնադրել է Կրթասիրաց միությունը: 1914 թ. գործում էր միահարկ շենքում՝ երկսեռ 20 աշակերտով և 1 ուսուցչով (**Ղևոնդեան Ա.**, նշվ. հոդվ., էջ 3): Կնիքը, ամենայն հավանականությամբ, Մեծ եղեռնի օրերին գողացվել է, քանի որ դպրոցը 1917 թ. արդեն կողոպտված և քանդված էր («Հայաստան», 1917, № 132, 14 հոկտեմբերի, էջ 3):

իթ Տապանաքար. ըստ գանձախույզի՝ գտնվում է Երզնկա քաղաքից մոտ 2 կմ արևմուտք՝ Մթենի (այժմ՝ Գյումյուշթարլա)

գյուղում: Հավանաբար հափշտակվել է բնակավայրի հայոց ավերված գերեզմանոցից: Փորագիր արձանագրությունը՝ 6 տող.

Մահարձան | է | Ռափայել Կա|ռապետեան(ի), | ծնեալ 1845, | մեռաւ 1908:

Ծանոթ. զուտ հայաբնակ Մթնինի 1895 թ. ուներ 120 (**Ղ.**, Երզնկան եւ նրա շրջադաշտը, «Մշակ», 1895, № 145, 16 դեկտեմբերի, էջ 1-2), Ի դարի սկզբին՝ 85 (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 663: Տե՛ս նաև **Ա-Դօ**, նշվ. աշխ., էջ 222), իսկ Մեծ եղեռնի նախօրեին՝ 180 տուն («Հայաստան», 1917, № 126, 7 հոկտեմբերի, էջ 3) կամ 2000 հայ բնակիչ («Հայաստան», 1917, № 134, 18 հոկտեմբերի, էջ 3): 1917 թ. գյուղում դեռևս բնակվում էր 20 («Հայաստան», 1917, № 134, 18 հոկտեմբերի, էջ 3), իսկ 1928 թ.՝ 13 հայ (**Թափառական**, Դէպի կախաղան, Պոսթըն, 1932, էջ 859):

Լ Արձանագրություն. ըստ գանձախույզի՝ պահվում է Մուշ քաղաքում, սակայն պատկանել է քաղաքից 4,5 կմ հարավ-արևելք գտնվող Առաղ գյուղի (այժմ՝ Քեփենեք) հայոց դպրոցին, որն էլ, ամենայն հավանականությամբ, Մեծ եղեռնի օրերին հիմնահատակ ավերվել է: Փորագիր արձանագրությունը՝ 7 տող.

Շնորհօք ա(ստու)ծ(ո)յ | շինեալ վարժար|ան ի օգուտ մանկ|անց և փառք հա|մայն ժողովր|դեան, գիւղիս Ա|ռաղայ, 1914:

Ծանոթ. 1861 թ. ուներ 50 տուն (Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), **Գ. Սրվանձտյանցի** ֆոնդ, բ. 4, գ. 50, թ. 1), 1878 թ.՝ 427 շունչ (**Տկլանց Ա.**, նշվ. աշխ., էջ 49), 1886 թ.՝ 75 տուն (**Колюбакин А.**, նշվ. աշխ., том VIII, часть II, с. 12), 1890-ական թթ.՝ 100 (**Էփրիկեան Ս.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 243), իսկ Մեծ եղեռնի նախօրեին՝ 103 տուն՝ 797 հայ բնակիչ (Համաեւրոպական պատերազմի ընթացքում ամայացած Արեւելեան Հայաստանի գաւառների վիճակագրությունը, «Վան-Տոսպ», 1916, № 12, 14 փետրուարի, էջ 8:

Տապանաքար *իէ*, կնիք *իը*, տապանաքար *իթ*, արձանագրություն *լ* (լուս.՝ 2020 և 2015 թթ.)

Շարունակելի

ՓՈԽԱՆՈՐԴԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃԱԿԻՆ ԳԱՆՁԱԿՈՒ

Գրիգորիս եպիսկոպոս Աղվանեանց

Անգնահատելի կարևորություն ունի հայ եկեղեցական գործիչ, Գանձակի թեմի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոս Աղվանյանցի՝[1] Հյուսիսային Արցախին առնչվող ճամփորդական սույն տեղեկագիրը: Այն գրի է առել 1890-1891 թթ.՝ Գանձակի փոխանորդության ժամանակ շրջագայության ընթացքում հավաքած փաստերի հիման վրա՝ Մակար Բարխուտարյանցի «Արցախ» աշխատության լույսընծայումից դեռևս 5 տարի առաջ: Բաղկացած է երկու մասից: Առաջինը վերաբերում է Գանձակ քաղաքին, իսկ երկրորդը՝ գյուղերին: Պարունակում է պատմական, ազգագրական, վիճակագրական (օգտվել է 1886 թ. մարդահամարի տվյալներից), կրթական, տնտեսական կացությանը և այլ հարցերին առնչվող հարուստ նյութ:

Տեղեկագիր-նոթագրությունը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի Զանազան հեղինակների արխիվում (38, թղթ. 44, վավ. 9, թ. 1-61[2]): Նկատի ունենալով, որ այս վավերագիրը չափազանց արժեքավոր սկզբնաղբյուր է բռնազավթված Հյուսիսային Արցախի պատմությամբ, ազգագրությամբ, նյութական մշակույթի հուշարձաններով հետաքրքրվող անձանց համար, հրատարակում ենք ամբողջությամբ և բնագրին հարազատ, իհարկե, ուղղագրական և կետադրական որոշ ուղղումներով:

Հավելել ենք նյութին առնչվող ծանոթագրություններ, լուսանկարներ և հեղինակի ուղեգնացական երթուղին պատկերող քարտեզ:

Անուշ Համբարձումյան

Ա

Անուն և սահման Գանձակ[3] քաղաքի

Հայոց հին անուն՝ Գանձակ, երեք անգամ փոփոխություն կրելու բախտաւորություն ունեցած է, եթէ բախտաւորություն կհամարուի ազգային քաղցրահնչիւն անունը կորցնելով՝ օտարին խորհրդալուր ու արհեստական անուան տիրանալը: Հայոց ձեռքէն հանող և տիրապետող պարսիկներ Գեանջա կամ Գէնջա յորջորջեր են Գանձակ քաղաքի անունը: Տեղական պարսիկներ սոյն անուանադրութեան պատճառը այսպէս կբացատրեն: Երբեմն պարսից Շահ-Աբաս թագաւոր այս կողմ այցելած ժամանակ հին Գանձակու, որ արդէն երկրաշարժերով քայքայուած էր, օդին ու տեղին չհաւանելով, մանաւանդ նորա տաքութեան համար կամեցեր է քաղաք փոխադրել այժմեան՝ նոր Գանձակու տեղ: Բայց իւր այս մտադրութեան մասին նախ խորհուրդ առնել ցանկացեր է տեղւոյն կառավարիչ պարսիկ խանէն: Ուստի և իւր նոր ընտրած տեղւոյն որպիսութեան համար կհարցնէ. «Նոր քաղաք շինելու համար այստեղ ինչպէ՞ս է»: Խան կպատասխանէ. «Գեանջա եէր տըր», վասն որոյ տեղւոյն հետևապէս և՛ քաղաքի անուն *Գեանջա* մնացեր է: «Գեանջա եէր տըր» բառերը տեղացի պարսիկներ «Լաւ տեղ է» կթարգմանեն: Ի վերջոյ, երբ ռուսաց տիրապետութեամբ նուաճուեր է 1801 թուականին, Ելիսաւէտպոլ անուանուելու պատիւն ունեցեր է:

Գանձակ քաղաք և իւր մօտակայ շրջակայից սահմանագլուխներ կնշանակենք հետևեալ բնական սահմանացոյցներով. արևելքի կողմէն կսահմանաւորէ *Քիւրակչայ* ըսուած գետակ, որ հարաւէն հիւսիս ընթանալով՝ կօժանդակէ Կուր գետին: Սոյն գետակ երեք ժամաւ հեռի է քաղաքէս: Հարաւէն կսահմանաւորեն *Մռաւ, Քափազ (Ալիարակ) և Յարութիւն սար*, որ առաջնոց աղեղնաձև գօտիէն մի փոքր դուրս եկած է դէպի հիւսիս: Սոյն լեռնաշղթայի առջև փոքր շղթայ կկազմէն իբրև առաջնապահ բանակ՝ *Պանտասար, Չովտառ* և *Մլզնաբերդ* (Մածնաբերդ՝ ըստ պատմագրութեան Կիրակոսի Գանձակեցւոյ): Սարերում լեռնաշղթան արևելքէն արևմուտք երկարացած է:

Գանձակէն հեռու են Մռաւն՝ 7 ժամ, Քափազ՝ 5 ժամ, Յարութիւն սար՝ 10 ժամ, իսկ Պանտասար,

1 Ծնվել է 1827 թ. Վան քաղաքում (աշխարհիկ անունը՝ Հակոբ): 1863 թ. կուսակրոնություն է ընդունել Վարագավանքում: 1863-1865 թթ. և 1868-ին Մշո Սբ. Կարապետ վանքի առաջնորդական տեղապահն էր, 1860-72 թթ.՝ Տարոնի, 1872-75 թթ.՝ Վանի, 1876-1887 թթ.՝ Կարսի և Բաթումի հայոց թեմերի առաջնորդը: 1879 թ. արժանացել է եպիսկոպոսության աստիճանի: 1889-1891 թթ. Գանձակի հայոց թեմի առաջնորդն էր: 1893 թ. դեկտեմբերի սկզբին դարձել է արքեպիսկոպոս և նշանակվել Ատրպատականի հայոց թեմի ժամանակավոր առաջնորդ: Վախճանվել է դեկտեմբերի 8-ին՝ նոր պաշտոնատեղին ուղևորվելու ճանապարհին և ամփոփվել Հին Ջուղայի հայոց գերեզմանոցում (մանրամասն տե՛ս «Արարատ», 1893, ԺԲ: Նաև՝ «Արձագանք», 1893, № 144, 10 դեկտեմբերի, էջ 1-2):

2 Շնորհակալություն ենք հայտնում Մատենադարանի տնօրինությանը, որի բարեհաճ թույլտվությամբ Սամվել Կարապետյանը դեռևս 2005 թ. լուսանկարել է այս հույժ կարևոր վավերագիրը:

3 «Գանձակ անուն՝ թերևս մեր նախնիք նորա ունեցած բնական արտադրութեանց պատճառաւ կնքեր են, զի իւր շուրջը ունի զանազան հրահալելի՝ երկաթ, պղնձի, մագնիսի, կապարի, արծաթի և այլն հանքեր, իսկ այժմ գտնուած է կօպալտ և քարածուխ» (ծնթ.՝ հեղինակի):

Չովտառ և Մլզնաբերդ՝ 4-ական ժամ: Սոյն վեց լեռներ յիշեալ երկու շղթայից բարձրագոյն կատարներն են: Սոցա մէջտեղ կանգնած է Յարութիւն անուանեալ սար, որ ամենէն բարձրագոյնն է և որոյ կատարի վերայէն կերևնայ Մասիսն: Յարութիւն կամ Արդիւնասար[4], ի՞նչ է եղեր սորա հին անունը, և նոր Յարութիւն անուն ծագում ի՞նչ պատճառաւ եղած է, ո՞վ է կնքեր, ժողովրդական աւանդութիւն մեզ ոչինչ չպատմեց:

Արևմուտքէն կսահմանաւորեն *Նիզգար սար* և *Շամքոր* գետ, որք հնգական ժամաւ հեռի են քաղաքէս: Նիզգար Մլզնաբերդի բարձք և սրունք կձևանայ, որ հարաւէն ի հիւսիս աստիճանաբար խոնարհուելով՝ մեծ դաշտի մէջ կսպառի: Իսկ Շամքոր գետ, նոյնպէս հարաւէն ի հիւսիս ընթանալով, կօժանդակէ *Կուր* գետին: Եւ հիւսիսային կողմէն կսահմանաւորէ Կուր գետ՝ արևմուտքէն արևելք ընթանալով, որն Գանձակէն հեռու է 6 ժամու ճանապարհաւ:

Գանձակու յաջորդութեան վիճակ, որ 23 հայոց գիւղեր ունի, գրեթէ սոյն գծուած սահմանի մէջ կպարունակեն, բացի *Գետաբէկ*, *Գառնակեր*, *Բարսում*, *Ջագիր* և *Չարդախլու* գիւղերէն, որք Շամքոր գետի ձախ ափին կգտնուեն:

Սոյն գծուած սահմանի մէջ կան շատ պարսկաբնակ գիւղեր, որք առաջ հայաբնակ են եղեր, սորան ապացոյց կարող են լինել իրենց մէջ գտնուած կանգուն և կործանեալ եկեղեցիները, հայկական գերեզմանոցները: Սոյն սահմանի մէջ կան և երկու գիւղեր գերմանացի գաղթականաց: Վերջնոցս մէջ նշանաւոր է Գանձակու հարաւային կողման վրայ՝ մի ժամաւ հեռու գտնուած *Կալօն-Ելէնենտորֆ* անուն գիւղաքաղաք՝ իւր բազմաթիւ երիտասարդ ու կանոնաւոր տնկուած պտղատու ծառատունկերով և մշակուած այգիներով, ընդարձակ դաշտերով, արտերով, օրորոցաձև տներով, ճաշակաւոր շինութիւններով, բարեխառն օդով և առատ ջրով: Վերջինս Գանձակից վեր՝ լերանց ստորոտին մօտ լինելու աղագաւ սաստիկ տաք չի լիներ Գանձակու չափ և ամարայնոց կիամարուի, ուր կգան ոմանք հայեր, և տեղւոյն առևտրականութիւնն էլ իրենց (հայոց) ձեռքն է: Ուրտեղ մշտական հայ բնակիչ կայ՝ 50 տուն՝ 114՝ արական և 40՝ իգական:

Մեր նպատակի սահմանէն մի փոքր դուրս չգալու աղագաւ հետևեալ յօդուած փակագծի մէջ կառնենք:

Գանձակէն դէպ հիւսիս նայող աչքին հանդիպակ լեռ կհանդիսանայ *Կովկասի լեռնաշղթան*, որ ահարկու բարձրութեամբ, ուղղաձիգ պատուարի պէս արևմուտքէն արևելք կերկարի: Իսկ հարաւակողմ նայողի աչքին նոյնպէս հանդիպակ լեռ կհանդիսանայ Մռաւ, Քափազ, Չովտառ և Մլզնաբերդ սարերու շղթան, որ նոյնպէս արևմուտքէն արևելք կերկարի: Իսկ սոյն երկու կողմանց շղթաներու մէջ ընկած է լայնածաւալ և երկարաձիգ դաշտն՝ *Կուր* գետի հայրենական ժառանգութիւն, որոյ մէջտեղէն նազաճեմ ընթացքով և շորոր-մորոր քայլերով, առաջ և ահեակ շրջաններ կազմելով, հայոց գետերի թագաւոր *Երասխի* վրացի թագուհի Կուր գետ՝ իւր երկու ափանց բնութեան ամենաշռայլ օժիտներով, կանաչաթոյր դալարիներու պճնութեամբ, գեղապատշաճ զարդարուած, Ալանաց օրիորդի պէս կզբօսնու՝ իւր երկու կողմանց լեռնագօտիները հմայելու: Իսկ գետի երկու կողմանց լեռնաշղթաներ, երկու ահարկու բանակաց նման իրարու հանդէպ կեցած, կարծես թէ պատերազմի ճակատ կյարդարեն և իրարու վրայ ահեղասաստ յարձակումներ գործելու կպատրաստուին:

Հարաւային բանակի ընդհանուր հրամանատար կհանդիսանայ Արդիւնասարն, իսկ նոյն լեռնաշղթայի Մռաւ, Քափազ, Չովտառ, Մլզնաբերդ գիտես թէ բանակի վեհապանծ հազարապետներ լինեն:

Կպատմեն, թէ Արդիւնասարի գագաթի վերայ նահատակի մի տապան կայ, որ ուխտատեղի է: Նորան կից՝ տապանի ձևով ու մեծութեամբ խոր ընկած բնական աւազան, լիք բարեհամ ջրով, որոյ ջուրն երբէք չի պակասեր: Երաշտ տարին անձրևային լինելու համար Գանձակէն կամ հայոց գիւղերէն քահանայ կերթայ, նոյն ուխտատեղէն մի քար կառնէ, նորա աւազանի ջրով կմկրտէ, իւր հետն առած կվերադառնայ: Աւանդութիւնը կասէ, եթէ քահանայն անկասկած հաւատ ունենայ, որ երբէք ի թիկունս կոյս չդառնայ, եւ ահա ի՞նչ: Յարութիւն սարէն մի ամպ բարձրացած՝ հետզհետէ կծաւալի ու կջանայ քահանային (ընկերանալ, քաղաք) հասնել: Քահանայի վերադարձը մօտեցած ժամանակին տեղական ժողովուրդ, քահանայից զգեստաւորեալ դասով, խաչ ու խաչվառով, խունկ ու մոմով թափօր կազմած, կընդառաջէ քարակիր քահանային: Եւ ահա եկեղեցական դասն ներդաշնակ օրհներգութեամբ սկսեց օրհնաբանել զԱստուած: Թափօր ծանրագնացութեամբ կշարժի յառաջ՝ դէպի Աստուծոյ տաճար: Բարեպաշտ ժողովուրդ մատաղներ կմորթի, աղքատներուն կբաժնեն: Նոքա մինչ այս, մինչ այն, անձրև կսկսէ տեղալ: Հաւատաւոր ժողովրդեան սրտագին օրհնութիւն ու գոհութիւն երկինք ի վեր կբարձրանայ: Կպատահի երբեմն, կասեն, որ աղեղն էլ իւր կամարը կկապէ:

Բ

Գանձակու ներքին նկարագրութիւն

Կուր գետ սոյն դաշտը, մէջտեղէն հատանելով, երկու կիսաբաժին կտրոհէ: Աջ կողման մասի՝ հա-

4 «Շրջակայ գիւղացիք Արդիւնասար կանուանեն, իսկ քաղաքացիք՝ Յարութիւն լեառն: Թերևս գիւղացւոց ըսածն աւելի բնական և իսկական լինի, նորա կարի խոտաւէտ, ջրաւէտ լինելու պատճառաւ կնքեր են այդ անուն, զի բազում գիւղերու անասնոց բուտ* ու ճարակ կմատակարարէ...» (ծնթ.՝ հեղինակի):

*Բուտ՝ ընտանի կենդանիների ձմեռվա ուտելիքի պաշար:

ռաւային դաշտաեզերքի վերայ, դրախտացած կպերճանայ *Գանձակ* քաղաք՝ բնութեան ամենաշռայլ օժիտներով: Ամենաշռայլ կասեմ, զի հազարաւոր ծառաստաններով, բուրաստաններով, այգիներով, փողոցներու չորս գրկաչափ հաստութեամբ բազմաթիւ չինարիներով, առատ տանձ ու խնձորով, նուռ[5] ու թզով, արքայակաղին, հանդերձ ընկուզով, մարդագլխաչափ մեծութեամբ սերկևլով, բազմաբեր նարինջ ու կիտրոնով, զանազանակերպ դամբուլներով, որակ-որակ կեռասներով, կարմրաթշիկ ու անուշիկ դեղձերով մեզ կապացուցանէ դրախտաբնակ Ադամի ու Եւայի երանաւէտ ու ճոխ վիճակը: Գանձակու հացն՝ անխառն, ձկներ՝ համեղ, գինին՝ կոյս, իւղ՝ կոյս, պանիր՝ կոյս, հայ բնակչաց մեծամասին խելքն էլ՝ կոյս, որք տակաւին չեն մտեր «բարւոյ ու չարի գիտութեան ծառի» ճանապարհի մէջ: Այս երկնապարգև առատութիւններ Գանձակու հայոց մեծ ու ճոխ սեղաններու կեանք ու հոգի կուտան, իսկ բազմատեսակ կանաչեղէններ թէ՛ ամառն և թէ՛ ձմեռն, պահք և ուտիք օրեր այդ սեղաններէն անպակաս են:

Իսկ վարունգ ու մեղրապոպ (շամամ) սեխն ու ձմերուկ սայլերու կարաւաններով կլեցուին քաղաք շրջակայ գիւղերէն, աւելի՝ Կուր գետի ափէն: Միով բանիւ, երկիրն այնքա՜ն արգաւանդ է, որ մի դդում 2 փութ ծանրութեան կհասցունէ: Իսկ ցորեն՝ ատոք հասկերով, այնչափ կերկարի, որ նորա ցողունի մէջտեղէն կքաղեն մանգաղով, մնացեալ կէս մասն արտերու մէջ տնկուած կմնայ:

Գանձակու կլիման սաստիկ տաք կանէ ամառնային եղանակի մէջ, թէպէտ ըստ մեծի մասին անվնաս, բայց երեկոյեան տաքութենէ սաստիկ զկնի գիտէ և երբեմն կէս գիշերէն յետոյ ցուրտ անել, այս պատճառաւ բաւական թուով յօդացաւ կրողներ կան քաղաքի մէջ: Տաքութեան առաւելութեան և սառնորակ ջրի պակասութեան առթած անհանգըստութենէ ազատուելու համար բաւական է երկու ամսաչափ ամարանոց գնալ մօտակայ հայ գիւղեր, որ 2-4 ժամ հեռու են քաղաքէս և կգտնուեն լեռներու ծնկանց ու կուրծքերու վրայ, որք ունեն ջինջ օդ, զրզրուն, սառնորակ և բարեհամ (այս մասին որչափ ածականներ գիտնայի, կբարդէի, զի կարժէ) ջրեր, պտղատու ծառաստաններ, պարտէզներ, անտառներ, կենսականի վերաբերեալ գրեթէ ամէն պիտոյքներ և գոհացուցիչ տներ: Պակսած պէտքերն էլ գիւղացիք ամէն օր քաղաքէն կբերեն՝ զբօսասէր և լիուլի վայելող քաղաքացւոց վրայ ծախելու, կարօտի մէջ մաշեցնելով իրանց աչքերը: Իսկ ամարայնոց գնացող քաղաքացի կանանց հագուստի ալեծուփ զարդարանքներ գեղջկուհիներու նախանձը կշարժեն, և պճնասիրութեան ճաշակը, որն թէև բնածիր է իգական սեռին, բայց աւելի ևս կգրգռեն: Գիւղացի կանայք, առ ատելութեան քաղաքացի կանանց բաղդի և վայելման, անէծքներ կտեղան նոցա գլխին. «Սև՛ հագնես, կապուտ հագնես», աւելացնելով և՝ «Գրողը վերէդ»:

Գեանջա-չայի անուանեալ գետակ, որով կջրուեն Գանձակու այգիներ ու արտեր, հարաւէն հիւսիս հիւսելով՝ քաղաքն երկու մասի կբաժնէ՝ Թուրքաց և Հայոց կողմ անուանուած, և կգնայ Կուր գետին օժանդակելու: Ամառ ժամանակ գետակն իսպառ կցամաքի քաղաքամէջ տեղը, զի վերնի կողմը բացուած առուներու ջրերն այգիներու և արտերու պիտոյից կգործածուեն: Հայոց թաղեր՝ գետակի աջ ափին, իսկ թուրքացն ձախ ափի վրայ ընկած են:

Քաղաքամիջի բնակիչք, որ գրեթէ գլխաւորապէս թուրք և հայ տարրերէ (մասնաւորապէս և այլ ազգերէ) կբաղկանան, ընդամէնը 4082 տուն են՝ 24,031 անձինք, որոնցմէ 14,901՝ արական, 9130՝ իգական: Ասոնցմէ 1845 տուն մահմետական՝ 6524 արական, 4615 իգական անձինքներով: 1565 տուն հայ՝ 4837 արական, 4077 իգական անձինքներով: 81 տուն հոգևորական բոլոր ազգաբնակիչներու, 151 տուն ռուս և այլ բնակիչներ և 444 տուն ժամանակաւոր բնակիչներ:

Վաճառատեղին, շուկաներ, խանութներ, հիւրանոցներ, իջևաններ. բոլորն էլ թուրքաց թաղի վերայ կգտնուեն: Նոյնպէս և կառավարչական պաշտօնատներու ծառայողաց բնակութիւններ, երկաթուղիի կայարան, հանդերձ ռուսաց մի եկեղեցիով, թուրքաց թաղի վերայ ընկած են, իսկ հայոց թաղերու մէջ սակաւաթիւ խանութներ և ծառայողաց բնակութիւններ կգտնուին: Բայց առևտրական կալուածներու 2/3 մասն հայոց սեպհականութիւն է: Հայոց թաղերու մէջ սնունդի վերաբերեալ բաւական խանութներ կգտնուին: Հայեր տնային գեղեցիկ կալուածներ ունեն և թուրքաց թաղերու մէջ: Թէ՛ հայոց և թէ՛ թուրքաց թաղերու մէջ համարեա թէ չկայ տուն, որ չունենայ իւր կից այգի, պարտէզ, բուրաստան, ծաղկոց:

Մահմեդականաց կողմի վերայ գտնուեր է թրծեալ աղիւսէ շինած *հին բերդը*՝ իւր խրամատներով և ռուսաց եկեղեցւոյ հարաւակողման հանդէպ, զոր քանդեր և հարթեր է այժմեան տիրող իշխանութիւն և նորա տեղ շիներ արհեստագիտական վարժարան, զօրանոցներ, բանտեր և այլ արքունի պիտոյից վերաբերեալ շէնքեր: Հին բերդի մնացորդից այժմ երևում է միայն նորա մէկ բուրգը, որ, ինչպէս կերևի, նորա պատի ամրութեան ու լայնութեան իբրև մի նմուշ թողնուած է: Եւ պարսից իշխանութեան ժամանակի տիրող խանի կիսաքանդ պալատը տակաւին կմնայ նորա ընդարձակ, բայց կիսով չափ աւերակ այգիին մէջ:

5 «1891 ամի մարտի 2-ին գանձակեցի Մալիեան եղբարց տան բացօդեայ պարտեզի ծառէն մի նուռ կթեցինք, որ 2 1/2 ֆ. քաշից և այդ կթելու հանդիսի վրա 14 տարուայ գինի խմեցինք» (ծնբ.՝ հեղինակի):

Հայեր իրենց կողման վրայ ունեն երկու եկեղեցի՝ *Ս. Յովհաննէս Մայր եկեղեցին*[6] փոքր, *Ս. Լուսաւորիչ եկեղեցին* մեծաշէն[7]: Հայոց կողման արևելակոյս այգեստանեայց մէջ կայ մի ուխտատեղի՝ *Չոլակ* կամ *Ցոլակ* անուն փոքր եկեղեցի[8], ուրտեղ գանձակեցի ուխտաւորներ թէ՛ ամառն և՛ թէ ձմեռն կյաճախեն, մատաղ կընեն և կուրախանան: Ուխտաւորներէն գոյացեալ նուիրադրամներ կծառայեն հայոց վարժարաններուն: Հայեր թուրքաց կողման մէջ ունեն երկու փոքրիկ թաղեր՝ *Երևանցւոց և Նորաշէնցւոց* անուանեալ: Առաջինն կազմուած է Երևանու գաղթականներէն, ընդամէն 30 տուն՝ *Ս. Գէորգ* անուամբ մի փոքրիկ անշուք եկեղեցիով[9]: Երկրորդն ունի ընդամէնը 150 տնաչափ ծուխ և մի հնաշէն անշուք եկեղեցի՝ *Ս. Աստուածածին* անուամբ: Սոյն թաղի վերջ՝ արևմտակողմ, կայ ուխտատեղի փոքր եկեղեցի՝ *Ս. Սարգիս* անուամբ[10], ուր կյաճախեն քաղաքացի ուխտաւորներ, որոնցմէ շատերուն զբօսավայր է, մանաւանդ կառքով շրջող հարուստ ընտանեաց: Սորա արդիւնք կօժանդակէ նոյն թաղի հայոց վարժարանին:

Քաղաքիս չորս եկեղեցիներ ունեն այժմ տասն քահանայ, բայց մեր՝ պաշտօնավարութեամբ ի քաղաքս մտնելու ժամանակ (1889 յուլիս 3), տասն և

Սբ. Յովհաննես և Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկ. (լուս.՝ Ֆ. Բերլեմոնի, 2008 թ.), Չոլակի Սբ. Աստվածածին ուխտ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 թ.)

6 «Սոյն եկեղեցին թէպէտ անշուք է, բայց նշանաւոր է պատմական տեսակէտով, զի անօր մէջ և դուրսը ամփոփուած են Աղուանից Իսրայէլ կաթողիկոսը, Տաթևու վանքի արքեպիսկոպոս Ներսէսը (Դաւիթ Բէգի ժամանակի յայտնի հերոսը), Մէլիք Մէժլումը՝ եկեղեցւոյ խորաններու մէջ, իսկ գաւթի և բակի մէջ ուրիշ շատ շիրիմներէն նշանաւոր են մելիքութեան ժամանակի հերոսների՝ Դալի Մահրասայի (աւագ վարդապետի) և Թիւլի Արզմանի և այլ մի քանի մելիքներու շիրիմներ» (ծնթ.՝ հեղինակի):
Սբ. Հովհաննես եկեղեցին գտնվում է քաղաքի Քիլիսաքյանդ թաղամասում: Կառուցվել է 1633 թ.: ԺԹ դարում կատարվել են նորոգություններ և հավելումներ: 1920 թ. թուրքերը հրետակոծել են. արկերից «...3-ը հարվածել էին գմբեթին, իսկ երկուսը՝ հիմքից բարձր» (եկեղեցու շինարարության ընթացքի և նորոգումների մասին մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, Հյուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 47-50):

7 «Այս եկեղեցին հոյակապ է, կարմիր կոփածոյ քարերէ կառուցուած: Այդ կարմիր քարեր բերուած են 20 վերստ հեռաւորութեան վրայ՝ Սուլուգ գիւղի քարահանքէն» (ծնթ.՝ հեղինակի):
Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին գտնվում էր նույն՝ Քիլիսաքյանդ թաղամասում: Շինարարական աշխատանքները տևել են 16 տարի՝ 1853-1869 թթ. (մանրամասն տե՛ս նշվ. աշխ., էջ 53-56):

8 Չոլակի Սբ. Աստվածածին եկեղեցին գտնվում էր Գանձակից 2 կմ հարավ: Կառուցվել է 1867 թ. Հովհաննես Միրումյանցի ջանքերով (նշվ. աշխ., էջ 57-59):

9 Երևանցոց թաղի Սբ. Գևորգ եկեղեցու հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Վավերագրերում հիշվում է՝ սկսած 1818 թ.-ից: 1985 թ. գոյություն չուներ (նշվ. աշխ., էջ 52-53):

10 Նորաշեն թաղի Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1713 թ.: 1985 թ. գոյություն չուներ: Նույն թաղամասի եզրին գտնվող գերեզմանատան Սբ. Սարգիս եկեղեցի-ուխտատեղին, որին առնչվող հիշատակությունները մեզ հայտնի են՝ սկսած 1881 թ.-ից, խորհրդային տարիներին վերածվել էր Ժողովուրդների բարեկամության պալատի (մանրամասն տե՛ս **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 46-47: **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 51-52, 56-57):

չորս քահանայ ունէինք, որոնցմէ ծերունիներ թաղեցինք, իսկ նոցա տեղ ոչ մին ձեռնադրելու բախտը ունեցանք, մանաւանդ որ կարևորութիւն էլ ունինք: Ձի քաղաքիս մէջ հինգ *ազգային-եկեղեցական* և *երեք քաղաքական վարժարաններ* կան, որոյ համար կրօնուսոյցներու յոյժ կարևորութիւն կայ:

Թուրքաց կողման վրայ կան 11 մէչիտ (աղօթատեղի), մին միայն ունի երկու մինարէ (աղօթքի կոչելու աշտարակ), վեց բաղանիք՝ մեծ և փոքր, երկուքն՝ մահմեդական կանանց յատկացեալն, առհասարակ կեղտոտ և հոտած: Դոցա կենտրոնի կամարի ներքև շինուած է մի մեծ աւազան (լճակ)՝ 1 1/2 արշին խորութեամբ, որոյ մէջ բազմութեամբ կլեցուեն լողանալու: Այլ, ըստ որում, շաբաթներով լճակի տակ ջուրն խնայողութեան համար չեն փոխեր՝ վերստին տաքացնելու վառելափայտի անախորժ ծախքն չկրելու պատճառաւ, ուստի նորա մէջ առողջ և ախտաւոր լողացողներու կեղտն կիջնայ, կթանձրանայ լճակի յատակը, որ լողացողներու շփմամբ և յուզելով՝ ջուրն սաստիկ կպղտորի, աղտաղտին և գարշելի կդառնայ: Յիշեալ բաղանիքներէն երկու-երեքն ունեն առանձնասենեակներ: Մաքրասէրներու համար մի լաւ բան կայ միայն, որ թուրքաց բաղանիքներու ոմանց ջուրեր աղբիւրի են և վճիտ, իսկ հայոց կողման վրայ մի բաղանիք կայ, որ նոյնպէս ունի իւր աղտոտ և հոտած լճակի հետ և առանձնասենեակներ: Հայոց կանայք սովորութիւն չունեն բաղանեաց մէջ լողանալու, թերևս նոցա համար առանձին բաղանիք չլինելու համար, բացի զարգացեալ կանանցից, որք կմաքրուին նոյն միակ բաղանիքի առանձնասենեակներու մէջ: Թէ՛ թուրքաց և թէ՛ հայոց բաղանեաց առանձնասենեակներու մէջ փոքրիկ աւազաններ կան՝ մի մարդ նստելու չափ մեծութեամբ (1 1/2 արշ. քառակուսի մեծութեամբ և 1 արշին խորութեամբ):

Բնակչաց հին սերնդեան երկսեռի կազմուածք պինդ, ինքեանք առողջ և տոկուն[11] են: Մեծ մասամբ միջին հասակից բարձր և ուղղաբերձ, բայց դէմքով ոչ նուրբ գծագրութիւն ունեն: Ձայնեղներ շատ են: Հայեր թիկնաւէտ, հաստավիզ, լայնակուրծք, մսեղ, ծանրագնացք և գունաւոր են: Թուրքեր բարակ, ջլապինդ, դեղնոտ, մանրաչափ, թեթևաշարժ և առհասարակ տգեղ են, թեպետև հայեր էլ գեղեցիկ չեն: Այգեգործական աշխատութիւն, ինչպէս կթուի մեզ, առհասարակ բնակչաց պնդակազմութիւն տուեր է:

Գ

Քաղաքի բնակչաց այգեգործութեան վերաբերմամբ

Քաղաքիս առաջին կարգի հարուստ շատ հայեր, իսկ թուրքաց սակաւ անձինք մեծ և բաւական ճաշակով տներ շինած են՝ երկաթուղին այս կողմը

Գանձակի երկմինարէ մզկիթը, ԺԹ դար

գալու ժամանակէն սկսեալ, երբ յանկարծ սոցա առևտրի բաղտ բացուեր է, և սոցա առատ գինին և այլ բերքեր ի Տփխիս և ի Բագու փոխադրելու միջոցն դիւրացած է, և առատ փող շահեր են: Սոյն յանկարծական բաղտի յաջողութիւն քաջալերեր է զասոնք՝ ոյժ տալ գինիի միջոցաւ աւելի ևս հարստանալու: Եւ այնուհետև հայեր տաքացած գլխով և վառ երևակայութեամբ սկսեր են փոխառութիւն ընելով թուրքաց այգիներու խաղողներ գնել՝ գինի շինելու: Սակայն Տփխիսոյ գինեվաճառ ճարպիկ յաճախորդներ էլ գիտցեր են իրենց առևտրականութեան օյիններ խաղալ սոցա պարզ գլխին հետ: Յաճախորդներ, նախ մի տարի մեծ գին տալով, գինիներ գներ են և յաջորդ տարիներու մէջ լքուցեր: Այնուհետև գանձակեցիներ զիջումն չեն ունեցեր՝ պակաս գնով գինի վաճառելու, առաջի մեծ շահեկանութեան համն իրենց բերնի մէջ մնալու համար: Հետևապէս գինիներ, անվաճառ մնալով, թթուեր են: Յաջորդ տարին նոր գինիները, հին՝ թթուած գինիներու հետ խառնելով, երկուքն ի միասին ծախելու յուսով, երկուքն էլ անպիտանացեր են, ըստ առածին՝ «Հարամն եկեր, հալալն տարեր»: Իսկ իրենց վրայ մնացած փոխառութիւն աճեր և կրկնապատկուեր է, որոյ ծանրութեան տակ այժմ շատեր կտքան, և շատերն էլ, իրենց գրաւ դրած այգիներու վրայ տներնին էլ ծախելով, վրայ կուտան ու չեն ազատուիր: Ուստի և գանձակեցւոց ոմանց գլուխներ կախ ընկած են: Երանի՜ թե այս ընչաքաղցութեան վնաս վերջին փորձ լինէր:

11 «Նոր սերունդ, սոյն երեք ածականներու հակառակ, սկսեր է նոր դար կազմել...» (ծնթ.՝ հեղինակի):

Վերջին տարիներու մէջ գինու գին ընկած լինելով՝ այլևս թուրքաց խաղողներ առնող հայեր չկան, բացի սակաւաթիւ ոմանց, բայց թուրքեր գիտեն իրենց խաղողներ լաւ պահպանել, և զանազան քաղաքներ արտահանութիւն ընել: Առաջին տարին գինւոյ մի բեռն[12], որ 20 փութ կքաշէ, 80-100 մանէթով ծախուեր է, իսկ այժմ հազիւ 45-50 մանէթի:

Արդարասիրութիւն մեզ կստիպէ ասել, թէ գանձակեցի բաւական թուով հայեր իրենց շահած փողերով այգիներու թիւը շատցուցեր են, թէ՛ ծախու առեր հետզհետէ և թէ՛ նորանոր այգիներ տնկեր են՝ խոհական հեռատեսութեամբ գիտնալով, որ պատրաստի դրամոց կեանք անկայուն է: Գիտնալով, որ հողային (այգեգործական, անդաստանական) կալուածն փայտաշէն և երկաթաշէն կալուածներէն աւելի հաստատուն է, որ ո՛չ ժամանակի հնութիւն կարող է փտեցնել և քանդել, և ո՛չ ջրհեղեղն անգամ կարող է ի կորուստ տանել և անհետացնել: Բացի սոցանէ և գիտցեր են անիրաւ մամոնայով բանական այգիներ պատրաստել – ասել կուզեմ, բաւական թուով որդիներ կրթեր են քաղաքական բարձր և միջնակարգ ուսումնարաններու միջոցաւ: Բաւական թուով համալսարանականներ ունին: Քաղաքական գործերու մէջ մեծ ու փոքր պաշտօնավարներ, աստիճանաւորներ և զանազան ծառայութեանց մէջ բանգէտներ, որք գանձակեցւոց անկողոպտելի հարստութիւն և փառք կկազմեն: Բայց մի ինչ թերութիւն կնշմարուի – ազգային ոգւոյ ներշնչման պակասութիւն օտար դաստիարակութեամբ ուսումնաւոր տներու մէջ:

Գանձակ, լինելով երկաթուղու գծի վրայ Տփխիս և Բագու քաղաքներու մէջտեղ, վաճառականութիւն գրեթէ միշտ բանուկ է՝ ուրիշ տեղերու հետ համեմատելով և հետզհետէ ծաղկելու և պտղաբերելու վրայ է, որ ո՛չ սակաւ մխիթարութիւն կառթէ շրջահայեաց ընկերասէրին: Մի ցաւալի կէտ, սոքա, լինելով տէր բազում այգիներու, որ իրենց արտահանութեան և փող շահելու գլխաւոր աղբիւրն է, այգեգործական մասնագէտներ պատրաստելու հոգատարութիւն չունեն, և արդէն իրենց ուսումնաւարտ մի երկու մասնագէտներին էլ գործ չեն յանձներ: Ուստի և այգեգործական արհեստագիտութիւն մանկական հասակի մէջ կգտնուի:

Երկաթուղիէն առաջ քաղաքիս մահմետականներ շատ աղքատ եղեր են, իսկ այնուհետև փողի համն առնելով, սակաւապէտութեամբ ապրելն էլ իրենց սովորական լինելով՝ իրենց սնոդեան վերաբերեալ պիտոյքներն անգամ ծախու հանքեր են՝ փող դիզելու:

Իրենց սկսած այս արդար վաստակով հարստացեր են և թէ՛ սակաւք ի բազմաց անիրաւ միջոցներէ ձեռնթափ եղեր են և թէ՛ այժմ այնչափ

Գանձակի շուկան և երկաթուղին, ԺԹ դար

հարստացեր են, որ սկսեր են հայոց հարստութեան դէմ մրցել: Վարձքով տալու գեղեցիկ տներ շիներ են և կշինեն, կալուածներ կառնեն, իրենց ապագան կապահովեն, մանաւանդ այգիներու թիւ շատցուցեր են: Իսկ հայեր, արդէն շռայլ կեանքի սովորելով, իրենց բացած ծախուց մեծ դարվազաները (մեծ դուռ) այլևս չեն կարող փոքրացնել: Թէպէտ կջանան, բայց... վասն որոյ հայերն թուրքերուն առակ նշաւակի դարձեր են՝ հայերու վերա կնքելով առակ. «Երանի թէ հայու վերջին խելքը մեր գլուխը լինէր»:

Դ

Սովորութիւններու և վարք ու բարքի վերաբերութեամբ

Հայոց հին աւանդութիւններէն մէկն է և Նաւասարդի տօնակատարութիւնը, որ ընդհանրացած մնացեր է այս նահապետական ժողովրդի մէջ[13]: Թէպէտ և պատմութիւնը շատ թեթև հայացքով կյիշատակէ, սակայն ժողովրդեան սրտերու մէջ Նաւասարդը դեռ ունի իւր սրբազան նշանակութիւնն և իւր անջնջելի յիշատակը: Նաւասարդ ասածը լոկ ամսոյ անուն չէ, որ ըստ մեր նոր տօմարի կպատահի օգոստոս ամսոյն, այլ սա յատուկ ազգային մի տօնակատարութիւն է, որ միշտ նոյեմբեր ամսոյ մէջ՝ Յիսնակաց պասի գլխի շաբաթ օր, կտօնէ ժողովուրդ: Յունուարի մէկն այստեղ ազգային նոր

12 «Մի բեռն 50 բաթման (լիտր) է: Բաթման 16 ֆունտ-ուրեմն մի բեռ գինին 20 փութ կընէ» (ծնթ.՝ հեղինակի):

13 «Նավասարդի տօնը կկատարեն նոյնպէս Շուշւայ և Նուխւոյ գաւառներ» (ծնթ.՝ հեղինակի):

տարի չի սեպուիր, սոցա մօտ նշանակութիւն չունի և իրարու տուն չեն շրջեր, այլ Նաւասարդը կիսամարին ազգային նոր տարեգլուխ, ուստի և կուրախանան նոյն օր:

Նաւասարդը Նոյի տապանէն ելնելու տարեդարձն կիսամարեն և այդ փրկութեան օրն՝ իրենց նոր տարի: Նաւասարդ բառը կստուգաբանեն՝ Նաւ-հասարդ կամ Նաւն-ի սարդ, այսինքն՝ նաւն հիմայ հասաւ սարի վրայ: Իսկ այդ օրուան յատկացեալ կերակուրը՝ համեղ կորկոտ (հարիսա) կվայելեն, ամբողջ բնակիչներ՝ թէ՛ հարուստ և թէ՛ աղքատ: Պարծանօք կյիշեն, որ այդ մնացած է Նոյէն, որովհետև երբ նոյն օրը իջեր է Նոյը տապանէն, ցանկացեր է զոհ մատուցանել Աստուծոյ, մատաղ է արել մի սուրբ անասուն՝ խառնելով նորա մսի հետ և ցորեան, ըստ որում, եփած հաց չէ ունեցեր, որուն ցայսօր ժամանակի կորկոտ անուն կուտան: Եւ կասեն. «Ընդունեց Աստուած Նոյի մատաղը և կնքեց նոյն ժամայն իւր հաշտութեան պայմանը՝ ծիածան աղեղը շնորհելովն»:

Սոյն օր գանձակեցիք ընծայաբերութիւններ կանեն, բարեկամը՝ բարեկամին, նշանատուէ՝ նշանածին, և ամբողջ հայ ժողովուրդ, որևիցէ թարմ պտուղ ձեռքերնին, իրարու տուն շրջելով, ուրախակցութիւն կյայտնեն իրարու՝ շնորհաւորելով միմեանց Նաւասարդը որպէս նոր տարի: Նաւասարդի այս տոնախմբութիւնը ընդհանուր է և՛ գիւղերու համար, որ աւելի ճշտութեամբ և ճաշակով կկատարեն, որ բացի տօնական խրախճանութենէ՝ ունի մի սովորութիւն ևս, այն է՝ փեսացուի տան կողմանէ նշանած օրիորդի տան յերդից ընկոյզ կթափին ի վայր և այլն, և այլն: Իսկ քաղաքացիք սկսեր են հետզհետէ թուլացնել, արհամարհելով ազգայինն՝ օտարամոլութեան կյարին: Հէնց քաղաքացիներէն կսկսի միշտ այսպիսի զարտուղութիւններ, որք սկսեր են արդէն առանց ամաչելու օտարին (գերմանական) տօնածառի սովորութիւնը մտցուցել ազգայնոց մէջ՝ սկիզբն առնելով վարժարանական դահլիճներէն, և այն էլ վարժապետներու նախաձեռնութեամբ և աշակերտուհեաց խոտորեցուցմամբ:

Թէ՛ հայոց և թէ՛ թուրքաց խրախճանութեան նուագածուներ առհասարակ թուրքերն են, յոյժ սակաւ բացառութեամբ՝ և հայեր: Տեղական երգեր թուրքերէն են սովորաբար: Որչափ ես հանդիպեր, տեսեր և ստուգեր եմ, հայերէն երգեր այն ժամանակ միայն կյիշեն, երբ սեղանակիցներու կենաց գինի կառաջարկուի: Ըստ պատշաճի կերգեն և՛ շարականներ: Հայերէն երգեր թէև շատունց ի վեր մտած են հայ վարժարանաց մէջ, բայց ուսանողներ շատ սառն են դէպի ազգային երգեր՝ համեմատելով Աղէքսանդրապոլի, Ղարսի, Վանայ, Մշոյ հետ, որք դիւթիչ գիշերներ ոչ միայն տներու մէջ, այլև փողոցներն անգամ կկենդանացնեն իրենց եռանդուն երգասացութեամբ:

Քաղաքիս հայերի մեծ մասն (հասարակ դասակարգ) ամէն կողմանէ նահապետական[14] վիճակի մէջ կգտնուեն, բայց բոլոր բնակիչ հայեր առհասարակ պարկեշտ են (աննշան բացառութեամբ), աստուածասէր, եկեղեցասէր, եկեղեցականասէր, գթած, աղքատասէր, ողորմութիւն տալու համար բարձր աստիճանի վրայ կանգնած: Ասկէ քանի տարի առաջ *Աղքատանոցի ընկերութիւն* ունեցեր են, որ այժմ կործանման վիճակի մէջ կգտնուի: Այդ ձախորդութեան դէմ հոգի ի բռին կմարտնչին՝ վերականգնելու ոչ միայն ձեռքով, այլև գլուխնին անգամ այդ կործանման փլատակի տակ խոթելով՝ վերականգնել կուզեն զայն:

Հայերը առհասարակ ժողովներու մէջ ատենախօսելուն ու կանոնաւոր վիճաբանելուն, կարգով փաստաբանելուն վարժ չեն, ինչպէս կերևի, օրինակ, տուողներ քիչ պատահած են: Ընդհանուրի օգտին համար խմբակներ կազմելու, խորհելու ու գործելու սովորութիւն մտած չէ: Առանձնական կեանք կվարեն: Ցմեռուայ երկար գիշերներ իրարու տուն գնալու, ժամանակ անցկացնելու, գիտցածնին իրարու հաղորդելու, նոր տեղեկութիւններ լսելու սովորութիւն չունեն: Իրիկուններ շուտ կքնանան: Դորա պատճառը, մեր կարծիքով, տներնին իրարմէ հեռու լինել և այգիներու մէջ ունեցած աշխատութիւններն են, իսկ առևտրականաց համար՝ շուկայի հեռաւորութիւնն: Որք վերադարձին վաստակելով շուտ կքնանան:

Ազգային ընդհանրական օգտի վերաբերեալ գործը իրենցմէ ընտրեալ վարչականներուն յանձնելէ զկնի, ձեռնթափ կլինեն նոցա գործունէութեան և գործառնութեանց հաշիւ առնելու: Իգական սեռ որչափ չէ զարգացեր, այնչափ աւելի օրինակելի համեստութիւն ունի: Ինչպէս կերևի, ծնողացէ յորդոց յորդի աւանդական կրօնասիրութեան և աստուածապաշտութեան ուսուցմամբ կպատրաստուի այս շնորհք, որ Հայաստանի բնակչաց յատուկ է: Սոցա հագուստների հին ձև, որ հին սերունդի մեծագոյն մասն կգործածէ, շատ անճաշակ և տձև է: Քաղաքացի կանայք ինչ նիւթ և տարազ կհագնուին, գիւղացի կանայք ամբողջովին նոյն նիւթէն և նոյն տարազով կհագնուին, իհարկէ, նիւթի թանգ ու

14 «Սովորաբար նահապետական կասենք մեր ժամանակի անզարգացեալներու համար հին նահապետական ժամանակն անզարգացեալ համարելով, այնինչ նահապետական անզարգացեալ համարուած ժամանակի եգիպտական ու քաղդէական գիտութիւններ մեք մինչև ցայժմ չունինք, և մեր ամենակարևոր պիտոյից արհեստներէ ու գիտութիւններէ շատերը նահապետական ժամանակէն եկած մեզ հասեր են: Եթէ չտաքցած գլխով մի փոքր մտածելու լինենք նահապետաց գիւտերու վրայ, հրաշալիներ են մեզ համար արդարև: Օրինակ՝ այժմ, առանց ծաղր ու ծանակ լինելու, ո՞վ պիտի համարձակուէր իւր կարծիք յայտնելու, թէ ամէնակեղտոտիչ ճրագուէն, ձէթէն, իւղէն և կենդանեաց հոտած ու փտած մարմնի մասունքներէն մաքրիչ օճառ կարելի է պատրաստել: Հապա ընդհանուր մարդկութեան ուրախութեան պատճառող Հայաստանի գիւտ հայոց գինին և այլն» (ծնթ.՝ հեղինակի):

աժանի տարբերութեամբ: Ներքնաշապիկի վրայէն (սրան տեղացիք հալաւ կասեն) երկար կրկնաշապիկ կամ վերնաշապիկ կհագնեն՝ շիլայէ (կարմիր կտաւ) պատրաստուած, երկար, բայց ո՛չ այնչափ պճղնաւոր: Նորա վրայէն երկթևանի բաճկոն[15], առանց բազուկնին նորա թևերու մէջ անցնելու, որք կախ ընկած կծածանեն այնպէս, որ հեռուէն եկող կին չորս թևանի կերևնայ: Բաճկոն կարճ է, հազիւ ծունկերուն կհասնի: Իսկ գլխի կապոցներու սարգ ու կարգ շա՜տ անճաշակ, անճոռնի, գեղեցկացնելու համար ո՛չ միայն անյարմար է, այլև տգեղացուցիչ: Տեղացիք կպատմեն, թէ այդ տգեղացուցիչ ձևի պատճառն յառաջ եկած է պարսից տիրապետութեան ժամանակի առևանգելու և բռնաբարելու յաճախ-յաճախ սովորութենէն, զի նոցա կրօնք իրաւունք կուտար իւր հետևողներուն հպատակ և անզօր ազգերուն ստացուածոց պատուականագունին ժառանգորդ լինելու:

Կանանց գլխի կապոցի ձև, եթէ կարելի է նկարագրել, այս է. մտքիդ թող ներկայանայ, արգո՛յ ընթերցող, հասարակ շորերէն փաթաթուած երեք հատ գլանաձև, բթաչափ հաստութեամբ մի արշին երկարութեամբ իրարու վրայ հաստատուած երշիկներ, որք ի միասին բազուկի հաստութիւն կկազմեն: Սորա վրայէն կարուած է կլապետոնով ասեղնագործեալ չորս մատնաչափ լայն, հաստ ժապաւէն, վերին՝ դէպի երեսներ բարձրացած եզերքներու վրայ, կարուած են կլօր, ոսկեզօծեալ արծաթեայ կօճակներու շարան: Սոյն պատրաստեալ կապոցը կանայք, իրենց դունչի վրայ առնելով, երկու կողմէն ծնօտ ի վեր կբարձրացնեն, որոց տուտեր կկապեն գլխի վրայ, որ երկաթագիր Օ գրի ձևն կստանայ: Ի վերջոյ, նոյն կապոցի վրայէն, կիսէն ի վայր, մինչև ի դունչ ձիգ կքաշեն սպիտակ շոր, հորիզոնական, գծով բերնի վրայէն ականջէ ականջ հասած ճիշտ լուսնի առաջին քառորդի նմանութեամբ: Լաւ ևս է ասել, կանայք կկապեն հաստ կարճ, սպիտակ մորուք, եւ շորի մէջ տեղ մի գնդասեղ կմխեն, որ խայտ կձգէ սպիտակի մէջը: Կանայք եկեղեցի ու հեռու տեղ գնալու ժամանակ վերև նկարագրած մօրուքն կկապեն, բարձրակրունկ սօլ (մաշիկ) կհագնեն, և գլխի վրա առած կփաթաթուեն երկար, պճղնաւոր, սպիտակ[16] սաւանի մէջ: Կանայք շատ համեստ կշրջեն, «Նամահրամ» թուրքի կնիկներէն աւելի շատ համեստ կպահեն ինքը զինքնին, իսկ դրացեաց տուն և մօտիկ տեղեր հոլանի կերթան:

Ուսում, զարգացում, վաճառականութիւն, կատարելագործեալ արհեստներ, կենցաղագիտութիւն, մաքրասիրութիւն, կոկիկ հագուստ, լաւ ապրուստ և հարստութիւն թուրքերէն կրկնապատիկ աւելի հայոց մէջն է, իսկ ստորին մանրավաճառութիւն, մրգավաճառութիւն, անկոպար արհեստաւորութիւն, չարքաշ կեանք, անսնունդ կերակուր, կեղտոտութիւն, մեղկութիւն թուրքաց մէջն է: Թուրքերու մէջ ինքնաշխատութեան ձգտում չկայ, ինքնօգնութեամբ ապրելու, մարդկային սուրբ կողման շաւղեն մէջ մտնալու մտադրութենէ տակաւին շատ հեռու են: Թուրք մի յատուկ շնորհք միայն ունի, որոյ միջոցաւ մասամբ հայոցմէ գերադասեն, այն է, գիտեն նուրբ մետաքսից փոքր ու մեծ թաշկինակներ գործել, նոցա վրայ նիշեր դաճել, չխունացող ներկ տալ, թաւիշի մահուտի վրայ սեղանի ծածկոցներ և բարձի երեսներ գոյնզգոյն մետաքսով ասեղնագործել գեղեցիկ նկարներով, և այլ սոյնպիսի ասեղնագործութիւններ: Մետաքսի ղանաւուզ գործել և այլ նըրբաթել ոստայնակութիւն գիտեն:

Տեղւոյս հայեր սովորութիւն ունեն ննջեցելոց թաղման և այգ-եօթան օրը բազմաթիւ յուղարկաւորներուն (որոնք որ տունը գնալ կյարգեն) և աղքատաց համար առատ սեղան կազմել-հարուստ և միջին կարգի եղողներուն իրենց տան մէջ, իսկ ստորին դասակարգ՝ ի գերեզմանոց, իւր կարողութեան չափով: Առ այս, մեր մօտակայ անցեալ յաջորդներ կարգադրութիւն ըրած են, որ թաղման օրը մեռելատէրերն իրենց լացուկոծի հետ և սեղան պատրաստելու նեղութիւն չքաշեն, այլ նոյն ծախուց մի մասն տան ազգային-եկեղեցական վարժարանաց պիտոյից համար, իսկ այգ-եօթան օրը ճաշ պատրաստել, ինչպէս որ իրենք կկամենան: Սոյն կարգադրութեան համար քահանաներէն պարտաւորական ստորագրութիւն ստացեր են յաջորդներն-թաղման օր ննջեցեալի տան հոգեճաշ չուտել, այլ միայն հոգւոց ըսել ու դառնալ: Սոյն կարգադրութիւն այժմ կաղն ի կաղ կընթանայ: Ոմանք սաստիկ ջերմեռանդութենէ խղճով կտանջուին՝ յուղարկաւորներուն և աղքատաց հոգեճաշ զտրուելուն և ննջեցեալի սեղաններ ծխատէր քահանայն զօրհնելուն համար, վասնորոյ ոմանք այս կարգադրութեան ցանկէն դուրս կուգան, իսկ սեղան զկազմողներէն շատերն էլ վարժարանաց նպաստ չեն նուիրեր: Առ այս քահանայք միայն օրինապահ մնացեր են: Սոյն կարգադրութեան կաղագնաց լինելու գլխաւոր պատճառն ինձ կթուի, որ հայոց վարժարանաց հոգաբարձութեան անհոգութիւնն է: Զի ուրիշ քաղաքաց հոգաբարձուներ յանուն վարժարանի ստացած 20-50 ր. գումարներ ազգային լրագիրներու միջոցաւ կիրատարակեն ի միամտութիւն նուիրողաց և ի բարենախանձութիւն այլոց: Իսկ տեղւոյս հոգաբարձուներ մի երկու հարիւրով կառնեն՝ առանց հրատարակութեան տալու:

Երբևիցէ ժամանակ յանուն (հոգե)հանգստեան ննջեցելոց հոգեհաց տրուելու օրը սեղանի վերջ «հոգեթաս» բաժակ առաջարկուելու պահուն տան-

15 «Հարուստներու բաճկոնի երես կպատրաստուի մանիշակագոյն և կապոյտ թաւիշէ, քղանցքի եզերքներ սամոյր կկարեն, դրսի շրթնքի վրայ վերահան ըրած, վրան դարձուցած, իսկ աղքատներ՝ հասարակ չիթ կտորէ» (ծնթ.՝ հեղինակի):

16 «Վանայ, Մշոյ, Երևանու, Շուշուայ, Գանձակի և այլ գաւառաց հայոց կանայք առհասարակ սպիտակ սաւանի մէջ փաթաթուած դուրս՝ փողոց կելնեն: Կարելի է կարծել, որ կանանց սպիտակ վերնասաւան ազգային լինի» (ծնթ.՝ հեղինակի):

տիրոջ կողմէն կներկայացուի սեղանապետին (գլխաւոր հոգևորականին) մի թարմ պտուղ-կիտրոն, նարինջ կամ խնձոր հանդերձ մի յատկացեալ բաժակաթասով: Սեղանապետ ողորմաթաս կառաջարկէ բոլոր սեղանակիցներուն՝ հանդերձ բարեմաղթութեամբ առ Աստուած ի նպաստ հոգւոց համայն հին և նոր ննջեցելոց: Ողորմաթաս խմելուն պէս իրեն ներկայացուած պտուղը նախ ինքն հոտոտելով[17] շրջաբերութիւն կուտայ միւս սեղանակիցներուն հոտոտելու և ողորմաթաս խմելու (խմուած բաժակն տանուտէրն միշտ լեցնելով կնորոգէ): Հոտոտելի առարկան և ողորմաթասն իրենց շրջանը աւարտելով՝ կվերադառնան սեղանապետին մօտ, ըստ նախնաւանդ սովորութեան, ապա քահանայական դասն զգեստաւորեալ, խունկ ու մոմով, հոգեհանգիստ կկատարէ տան մէջ:

Հարսանեաց հանդէսներու հին և նոր սովորութիւններ իրարու խառնուած, ռուպ (բէքմէզ) ու մածնի խառնուրդ դարձեր է (առաջնոյն՝ արտաքին տեսք սև, ներքին համն քաղցր, երկրորդինն՝ արտաքինն սպիտակ, ներքինն՝ թթու), երկուքն էլ իրենց իսկական որակութիւն և յատկութիւն կորսընցուցեր են: Մարդ չի կարող ճանաչել, թէ այդ հանդէս ազգայի՞ն է, թէ՞ օտար, զի հանդիսականներ իրենց այլակերպուած նիստ ու կացով, տարբեր վարմունքներով, օտարաձև հագուստով, զանազան լեզուների գործածութեամբ, կերուխումի խառնաշփոթ տեսակներով հայկական ո՛չ մի որոշ կերպ չեն ներկայացներ:

Նշանադրութիւնն նախապէս կկատարուի երկու կողմանց խնամի ազգականներու ներկայութեամբ և քահանայի պահպանիչով:

Պսակի երեկոյին փեսայացուի տանը փեսաւորներ միայն թէյ կխմեն ու կերթան հարսնառութեան, փեսայի հալաւ հետերնին տանելով, որ հարսի հալաւի հետ կօրհնեն քահանայք, նշանօրհնէքէն զկնի՝ բազմութեան մէջ, ուր ներկայ են ձեռք ձեռքի տուած հարս ու փեսայն, որ հանդիսաւոր կերպով, ի ներկայութեան բազմութեան, իրարու հետ կփոխարինեն իրարու հաւանելու և ամուսնակցելու ապացուցանող նշաններ: Բայց փեսաւորներ, քահանայի օրհնութենէ ո՛չ մի բան հասկանալու տրամադիր չեն՝ խառնաշփոթ խօսակցութեան, ծիծաղի քրքիջներու, դուրս ու ներս ելմուտ ընելու, շփման ու ալեծփուելու պատճառաւ: Յետ ծիսակատարութեանն, երկու կողմանց հրաւերեալներ կպատուուին զանազան տեսակ անուշեղէններու, խմորեղէններու, շաքարեղէններու, չոր ու թարմ մրգեղէններու և ոգելից ըմպելիքներու ճոխ սեղանով: Ապա պսակի օրհնութեան համար եկեղեցի

Զրօրհնեքը Գանձակ քաղաքում

կերթան լուսավառութեան թափօրով, առհասարակ հետիոտն, եթէ հարսի տուն չափազանց հեռու չէ, իսկ եթէ ոչ, կառախումբով: Բոլոր հանդիսականներ ձեռքերնին մոմ առած կառաջնորդուեն լապտերներով, մաշալաներով և տհոլ-զուռնայով: Թափօրականաց խառնաշփոթ աղաղակ, անորոշ ձայներու գոռում-գոչում, փոխանակ մարդկօրէն զուարճանալու և ազգային երգեր ասելու, հիւ՜, պիւ՜, շիւ՜, ճիւ՜ ձայներով կատարեալ վայրենութիւն կներկայացնեն լուրջ դիտողին: Մարդու բերան չի բռներ ամէն բանի մէջ այդ համեստ ժողովրդեան այսպիսի անպատուաբեր արարմունք նկարագրել: Իսկ եկեղեցւոյ մէջ թէ քահանայի ի՞նչ օրհնութիւն կկարդայ պսակի՝ այս գլխաւոր սուրբ խորհրդեան համար, որոյ սրբութեան կծառայեն եկեղեցւոյ մնացեալ վեց խորհուրդներ, բնաւ լսող չկայ:

Բաց ի սմանէ, է՛լ կենդանի հաւ բերել, ճուացնել եկեղեցւոյ մէջ, աղմո՜ւկ, ժխո՜ր... Լռէ՜, գրի՛չ, լռէ՜, այդ չափն էլ շատ է և վիրաւորիչ ազգային պատուոյն: Այս համեստ ժողովուրդ այդ ժամուն, գիտես թէ յանկարծ սէթայ սերնդականութենէ ելած կայենականի փոխուած է: Կարսեցւոց և ալէքսանդրապօլցւոց հարսանեաց հանդէսներն էլ այսպէս են, բացի եկեղեցւոյ միջի աղմուկէն: Եւ ահա թափօրն նոր գոռում-գոչումով վերադարձաւ փեսայի տուն, բայց այստեղ ընտանեկան համեստութեամբ պարեց, ուրախացաւ, ընթրեց և ցրուեցաւ:

Երկրորդ օր խնամիների տնէն փեսայի տուն կբերեն սայլերով հարսի օժիտներ: Նոր զոյգի տուն կահաւորելու կատարեալ բաւականութեամբ այնչափ կահ-կարասիներ կլեցուեն փեսայի տունը և այնպիսի շռայլութեամբ, որ այդ պատճառաւ ուրիշներու ամուսնանալն կդժուարացնէ և երկու սեռի չամուսնանալու չարաբաստիկ կեանք կպատճառաւորէ շատերուն՝ ընդդէմ աստուածատեր օրինաց:

Ե

Զարգացման միջոցներու վերաբերութեամբ

Քաղաքիս հայեր ունեն եկեղեցական-ծխական հինգ վարժարաններ: Երկու երկդասեան երկսեռ-

17 «Պտղի հոտոտելու նշանակութիւնը մի բացատրող չգտնուեցաւ, վասն որոյ կդիմենք մեր կարծեաց: Թերևս դրախտական կենաց ծառի պտուղէն զրկուելու համար վերստին արժանանալու նշանաբան համարուած լինի» (ծնթ.՝ հեղինակի):

ները կպահպանուեն ընդ հովանաւորութեամբ *Ս. Յովհաննէս Մայր եկեղեցւոյ*[18], որոց մէջ կան 107 տղաներ և 175 աղջիկներ: Երկու միդասեան երկսեռներ՝ ընդ հովանաւորութեամբ *Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ*[19], որոց մէջ կան 96 տղաներ և 110 աղջիկներ: Եւ մի միդասեան արականաց վարժարան՝ ընդ հովանաւորութեամբ *Ս. Աստուածածին եկեղեցւոյ Նորաշէնու*[20], որոյ մէջ կան 21 աշակերտներ: Հայոց հինգ վարժարանաց աշակերտների թիւն է ընդամէնն 509՝ 224 տղայ և 285 աղջիկ: Կան այստեղ և երկու արականաց մասնաւոր վարժարաններ պետական ուղղութեամբ: Տիրացու Յակովբ Տէր-Յարութիւնեանի վարժարանի մէջ՝ 50, Եղիշէ Իսահակեանցի՝ 87, որոց մէջ կվարժուեն ընդամէնն 137 հայ աշակերտ:

Պետական վարժարաններ[21] չորս են քաղաքիս մէջ.

ա) *Գիմնազիոն*, որոյ բոլոր աշակերտաց թիւն է 192, որոնցմէ 66 տեղական և 37 օտարական հայեր, 60 ռուս, 22 թուրք և այլն: Առաջ կրկնապատիկ էին հայ աշակերտներ՝ մինչև անցեալ տարի...:

բ) *Քաղաքական վարժարան*, որոյ բոլոր աշակերտաց թիւն է 264, որոնցմէ 170 քաղաքացի հայեր են, 37՝ գիւղացի հայեր, մնացեալ 57՝ ռուս, թուրք և այլն:

գ) *Արհեստաւորաց վարժարան*, որոյ բոլոր աշակերտաց թիւն է 116, որոնցմէ 70 հայեր են, գրեթէ բոլորն էլ գիւղացիք՝ բացի երկուքէն, 24 ռուս և 22 թուրք:

դ) *Մասնաւոր իգականաց ռուսաց վարժարան*, որոյ բոլոր աշակերտուհեաց թիւն է 54, որոնցմէ 28 հայ, 18 գանձակեցի, 10 օտարերկրացի հայեր և մնացեալ 26 ռուս:

Ուրեմն քաղաքիս մէջ 509՝ հայոց եկեղեցական ծխական վարժարանաց միջոցաւ, 545՝ տիրող իշխանութեան վարժարանաց միջոցաւ հայ աշակերտներ կվարժուեն, որոց ամէնու թիւն է 1054: Թողումք այն հայ աշակերտները, որք քաղաքէ դուրս այլևայլ հեռաւոր տեղեր կվարժուեն, որոց թիւ գտնել չէր կարելի: Հայեր, իրենց զաւակներ վարժեցնելով աստուածապաշտական, տնտեսագիտական, եկեղեցագիտական և կենցաղագիտական գիտութեանց մէջ, բարի հայ և բարի քրիստոնեայ

Աֆանասյան դպրոցը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 1985 թ.)

կպատրաստեն հայ ազգի գոյութիւնը պահպանելու և տիրող իշխանութեան երկրի բնակավայրերու բարեկիրթ բնակիչներ հասցնելու նպատակաւ: Ինչպէս որ բազում դարերէ ի վեր, իրենց շրջակայ վայրենի և կիրթ կլանող ազգաց բարբարոսական հարուածոց և արգելքների ամէն կերպ չարքաշութեանց դիմանալով, ծառայեր են ընդհանուր մարդկութեան վերազարգացման և կծառային ցայսօր ժամանակի:

Հապա եթէ հայեր իրենց դրացի ազգաց ոմանց նման լինէին ուսումնատեաց, աշխարհի խաղաղութեան վրդովեցուցիչ և ընդհանուր զարգացման միջոցներ ձեռք առնելու ձգտումն չունենային, իրենց մէջէն որչափ դատարկաշրջիկներ, անբարոյականներ, գողեր և ընդհանուրի բարեկեցութեան վնասակար անդամներ պիտի արտադրէին ի վնաս աշխարհի և մանաւորապէս ի դժուարութիւն մեր բարեխնամ տէրութեան կառավարչական գործոց: Անուրանալի է, որ առհասարակ ամէն տեղ, հայեր իրենց վարժարաններու բռնած ուղղութեան և նոցա միջոցաւ աւանդուած դաստիարակութեան շնորհիւ և բարեկրթութեամբ իրենց դրացի ազգերէն գեր ի վերոյ կհանդիսանան, ընտանեկան քօղի սրբութեան, շինարարութեան, հիւրասիրութեան, խաղաղասիրութեան, մարդակազմի պնդութեան և աշխատասիրութեան մէջ:

Թէ տեղական հայ ժողովուրդ ի՞նչ ուղղութեան կհետևի ազգային լրագրաց և պարբերական թերթերի միջոցաւ, և ո՞ր խմբագրի առաջնորդող յօդուածներու յայտնած մտքերու հաւան եղած է և օգտակար կհամարէ զայն իւր զարգացման և մտաւորական պաշարին համար, մեր կարծիքով այդ նորա ստացած այս ու այն լրագրի և պարբերական թերթերի բաժանորդագրութեան որքանութենէն կտեսնուի[22], ուստի այստեղ կնշանակեմք իւրաքանչիւր լրագրի բաժանորդներու թիւը.

18 Սբ. Հովհաննես եկեղեցու Մեսրոպյան արական դպրոցը հիմնադրվել է 1844 թ., իսկ Հռիփսիմյան օրիորդացը՝ 1859 թ. (այս հաստատությունների գործունեության մասին տե՛ս **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 43-45):

19 Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արական և Մարիամյան օրիորդաց դպրոցները հիմնադրվել են միաժամանակ՝ 1889/90 ուստարում: 1909 թ. Եղիսաբեթ և Մկրտիչ Աֆանասյան ամուսինների կողմից կառուցվում է արական դպրոցի նոր շենքը և ստանում Աֆանասյան անունը (նշվ. աշխ., էջ 46-47):

20 Նորաշեն թաղի Սբ. Աստվածածին արական դպրոցը հիմնադրվել է 1867 թ. (նշվ. աշխ., էջ 43-46):

21 Գանձակի մասնավոր և պետական դպրոցների մասին տե՛ս նշվ. աշխ., էջ 47:

22 «Թէպէտև սոյն լրագրաց գաւառական գործակալներէն ոմանց անձնական հաշիւներու պատճառաւ լրագրաց բաժանորդներու թիւը աւելացնելու յորդորներ պակաս չեն» (ծնթ.՝ հեղինակի):

ա) Պաշտօնական *«Արարատ»* ամսագիր, որ բացառութիւն կիամարուի, զի թէև 64 բաժանորդ ունի, սակայն հարկադրեալ: Ստացողներէն 37 քահանայ, 11 դպիր, 15 վարժապետ և մի ոչ հարկադրեալ աշխարհական:

բ) *«Նոր-Դար»*. ունի 58 բաժանորդ,

գ) *«Մշակ»*. 60 բաժանորդ,

դ) «*Աղբիւր»* և *«Տարազ»*. 123,

ե) *«Մուրճ»*. 18,

զ) *«Արձագանք»*. 8:

Ռուսերէն՝ *«Կավկազ»*՝ 30, *«Թիֆլիսկիյ լիստօկ»*՝ 13, *«Նովոյե-օբոզրենիե»*՝ 39:

Իսկ մնացեալ միւս հայ թերթեր, ինչպէս ստուգեցինք, յոյժ սակաւ բաժանորդներ ունենալու համար, ինչպէս կասեն, մի-մի, երկու-երկու, ուստի և դուրս թողուցինք:

Զ

Նորանոր ճգտումների վերաբերութեամբ

Մօտ անցեալէն առաջ քաղաքիս հայ բնակչաց իւրաքանչիւրի տան կից եղեր է այգի: Երբ քաղաքն սկսեր է զարգանալ, հարստանալ և փողոցներ, ըստ մեծի մասին ուղղուիլ, այնուհետև քանի մը գլխաւոր փողոցներու վրա եղած այգիներ հետզհետէ բաժան-բաժան եղած են թէ՛ գերդաստանական բաժանման և թէ՛ տնատեղերու գետնի գինը թանգանալու պատճառաւ: Աղքատներ, իհարկէ, փողի կարօտութիւն ունենալով, սկսեր են իրենց այգիներ մասն-մասն ծախել զանազան մարդկանց վրայ՝ տնաշինութեան համար: Այգետեղեաց մէջ տներ շինուեր են երկու կարգ՝ դէմ առ դէմ, իրենց ունեցած մասնաւոր պարտէզներով, որք դէպի այգետեղւոյն խորք երկարացած են: Այդ նորաշէն պարտեզաւոր տները մի-մի փոքրիկ թաղ կձևացուցեն գլխաւոր փողոցի ուղղութեամբ, իբրև աջ ու ձախ թաղային թեներ: Դոյն փոքրիկ թաղի համար փողոցի վրայ մի անցք կամ մի մեծ դուռ (դարվազայ տեղացւոց լեզուով) թողուցած են, ուրտեղէն աջ ու ահեակ թաղերի բնակիչներ իրենց բնակարան կգնան: Իսկ հարուստներ իրենց այգետեղեաց վրայ նոյն ձևով կալուածներ շիներ են՝ վարձու տալու: Այսպիսի փոքրիկ՝ աջ ու ահեակ բացուած թեներին տեղացիներ մահլա կըսեն: Բայց գլխաւոր փողոցներէն դուրս քաղաքի տնաշինութեանց հին ձևեր տակաւին կմնան: Իւրաքանչիւր տան կից՝ ետևի կողմ, այգի կայ: Քաղաքի մէջ եղած այգիներ ցեխապատով (մօհրա) շրջապատուած են, իսկ սոցա հեռաւոր շուրջ և հետզհետէ տարածուած այգիներ փշացանկով շրջապատուած: Քաղաքի նորաշէն բոլոր տներ թրծեալ աղիւսով շինուած են, քիչերն քարաշէն են: Վերջին կէս տարու մէջ քաղաքն այնպէ՜ս արագութեամբ փոփոխութիւն ստացած է, որ տները, իրենց հին ու նոր, զանազանակերպ շինութեամբ, փողոցներու ուղղութեան վրայ խայտաճամուկ տեսարան կներկայացնեն: Տեսնողն կարծէ, թէ ասոնցմէ ոմանք հնադարեան, միջնադարեան և վերջնադարեան են: Օրինակի համար, սկսեալ գիւղական ստորին կարգի տնէն մինչև գաւառական, նահանգական և մայրաքաղաքական շքեղ տներ, իրարու հետ խառն պարակից են:

Անցեալ դարի վերջի յիսունական թուականների առաջին տասնեակ տարիներու մէջ շինուած տներու պատերը ցեխով են բարձրացուցեր, որք փայտածածկ են և տափարակ տանիքով: Այդպիսի տներ փոքր, ցածր, թզաչափ մեծութեամբ վերևէն բացուած լուսամուտով, խաւար և խոնաւ են գիւղական տներու նման: Երկրորդ տասնեակի մէջ շինուած տների պատեր, թէև որն մօհրայով, որն թրծեալ աղիւսով, բայց կամարածածկ են, որոց պատերու վրայ թրծեալ աղիւսով Նոյեան տապանի նման քաշելով բարձրացուցած կամարաձև ըրած են: Կամարներէն որն գմբէթաձև և որն օրորոցաձև, որոց յատակ կա՛մ հողէ, կա՛մ աղիւսապատ են: Նոյնպէս և վերևէն կամ կողքէն փոքր լուսամուտներով: Պատերու վրայ կան խորշեր, պատուհաններ, դարակներ՝ մթերքներ դնելու[23]:

Երրորդ տասնամեակի մէջ տներու շինութիւններ ընդարձակուած են, սենեկաց թիւ աւելացուցած, պատերու վրայ բաւական մեծութեամբ լուսամուտներ բացուած են ներսի կողմէն բակի վրայ: Թէև փայտայարկ և տափարակ տանիքով, բայց ներսէն բաւական կոկիկ, ոմանց ծածկի գերաններ բաց, ոմանց ձեղուն և յատակ տախտակամած ներկած կամ առանց ներկի, կահաւորած են հասարակ աթոռներով, սեղանով, լամպով և այլ կահ-կարասիքներով: Ոմանց ննջարանաց մէջ չորս ոտնեայ հասարակ թախտեր կան, որոյ վրայ քանի մը հոգի կպառկեն, իսկ ոմանց ննջարաններու մէջ զատզատ հասարակ մահճակալներ դրուած են: Տներէն ոմանք կրկնայարկ են:

Չորրորդ տասնամեակի մէջ տներ կրկնայարկ եղած են ըստ գերմանացւոց ճարտարապետութեան, ծածք օրորոցաձև (թէրևս հետևեր են գաղթական գերմանացւոց) և կղմինդրով պատած, ներսի ու դրսի կողմէն մեծ-մեծ լուսամուտներով, որք երկաթեայ վարդակապատ ունեն: Վերջիններս, իհարկէ, աւելի շքեղ և կանոնաւոր կարասիներով են, պատեր պաստառուած, փայլուն զարդերով աւելի, քան իր նախորդ տասնամեակինն:

Հինգերորդ տասնամեակի տներ եվրոպականացած են: Շինուած են նորանոր ճարտարապետութեամբ, կրկին մեծութեամբ դռներով ու լուսամուտներով, առանց վանդակապատի, մեծ դահլիճով, բա-

23 «Այս կերպ տներու գլխաւորն տակաւին կմնայ և կպահպանուի իբրև դիւանատուն (կանցելերիա) գիմնազիոնի քաղաքիս, որ խանսկի անուն կկրէ, զի ռուսաց տիրապետութենէ առաջ իշխող պարսից խանի տունն է եղեր, ուր իջևաներ է յիսունական թուականին ռուսաց թագաժառանգ, հանգուցեալ երջանկայիշատակ Աղէքսանդր Երկրորդ կայսր, երբ այցելեր է ի քաղաքս» (ծնթ.՝ հեղինակի):

զում սենեակներով, յօրինուածոյ ձեղունով, յատակն նկարէն տախտակամածով, պատշգամբներով, իսկ ծածկ՝ թիթեղապատ: Պատեր ծածկուած են գեղեցիկ և թանկագին պաստառներով, սենեակները փայլուն ու քնքոյշ կարասիներով, թանկագին նիւթերով կահաւորուած են, ծածկոցներով և վարագոյրներով զարդարուած, եվրոպական գորգերի փռուածքով, շքեղ լամպերով ու բազմաճրագ ջահերով:

Առաջին և միջին հարուստներու տներու ներքև սրբատաշ քարերով շինուած են սրահի մեծութեամբ ներքնատները՝ գինին զով պահելու, որոյ մէջ ծայրէ ի ծայր լիքն են խցաչափ մեծութեամբ տակառներ: Նկարագրածս ամէն հին և միջին կարգի տներ իրենց ձևով ու կարասիքներով այժմ շատ կան և կմնան իրենց տէրերու ձեռքին, եթէ նոցա վիճակ նոյն է մնացեր, ինչ որ էին իրենց տնաշինութեան ժամանակ: Տներու շինութեանց որպիսութենէ թող չափէ և հասկանայ ընթերցող քաղաքիս հայերու արանց և կանանց հագուստի տարազը և նիւթը և ապրուստի ելևէջ վիճակը, նիստ ու կացն, վարք ու վարմունք և կրթութիւնը:

Անցեալ ժամանակի մէջ օղիի գործածութիւն և արտահանելու պահանջ շատ է եղեր այստեղ, դորա համար տներուն կից եղած այգիներ 2/3 մասն թթենիներ կբռնէին, ապա մի մասն՝ խաղողի որթեր: Այն ժամանակ թթից քաշուած օղիի տեղական բաթման (լիտր, որ 16 ֆունտ է) մի մանէթ կծախուի եղեր, իսկ երբ որ տէրութեան կողմէ ակցիզ (մաքս) տրուեցաւ օղեհանութեան վրայ, այգետէրեր թթենիները կոտորեր են, որ կծառայէր և շերամապահութեան և նոցա տեղ գինեբեր որթեր տնկեր են: Հոգատար իշխանութիւն, մաքսի միջոցաւ, ժողովրդեան կենաց վնասակար օղին քիչցունել ցանկացեր է թէև, բայց ժողովուրդն էլ նոցա փոխարէն գինեբեր այգիներ գիտցեր է աւելի շատցունել: Օղեհանութիւն, խմելու վնասակարութենէ ի զատ, և՛ մահառիթ տենդի պատճառ եղեր է տեղական բնակչաց, զի թթի օղեհանութեան նիւթի մնացորդն՝ չէչն, իւրաքանչիւր օղիի գործարանատէր (ամէն տուն, որ թթենի ունեցեր է, ունեցեր է և՛ օղեհանութեան գործարան) անխտիր կերպով կթափէր իւր տան առաջ, փողոցի մէջ կամ պարտէզի մի անկիւն, որն որ արևի տաքութեամբ թթուելու և փտելու հոտն, բացի տենդէն և բազում տեսակ հիւանդութեանց, պատճառ եղեր է և մատաղ սերունդին դեղնութիւն, վատառողջութիւն և հալումաշ կեանք առթելու, և բազում գերեզմանաց էլ բնակիչներ է պատրաստել և գաղթեցուցեր: Գանձակեցիք կվկայեն, որ աճելութեան էլ վնասակար է եղեր այդ գարշահոտութիւն: Մեք, այս բաներ լսելով, արդէն գիտէինք, երբ այստեղ պաշտօն ունեցանք: Բայց մի տարիէն յետոյ փորձառութիւն ունեցանք եկեղեցւոյ պարտեզի մէջ, որոյ թթենեաց բերքէն օղեհանն մնացորդ չէչը քանի մը կոյտ դիզեր էր տեղւոյն գերեզմանաքարերու վրայ, որոնցմէ գոյացած գարշահոտութիւն իրաւ







Նմուշներ Գանձակի բնակելի տներից, ԺԷ-ԺԸ դդ.

անտանելի էր: Սորա հետ երևակայութեանս մէջ ծագեցաւ և առաջուց լսածս՝ գարշահոտութեան վնասակարութիւն, ուստի և անմիջապէս գլուխս պտոյտ եկաւ, այնպէ՜ս որ քիչ մնաց տապանաքարերու վրայ կործանուէի:

Տիգրանակերտու կողմանց պէս և՛ այստեղ կայ իլեարասը (տարեկան վէրք), որ մարդիկ սովորաբար կհանեն դէմքի ու ձեռաց վրայ: Բայց այժմ այն վէրք թէև կիսով չափ պակասած է, ի հարկէ չէչի անհետանալու և մաքրասիրութեան թագաւորելու պատճառաւ, ուստի կլիման այժմ վճիտ է, օդ՝ մաք-

ռուած, առողջութիւն՝ զօրացած, և բնակիչներ հետզհետէ, ինչպէս իրենք կըսեն, կգեղեցկանան: Բայց այժմ ևս երկու սեռն էլ գրեթէ ամբողջովին տգեղ են, ինչպէս որ վարժարանաց միջոցաւ կստուգուի: Մինչև ներկայ ժամանակս նոր սերունդի մէջ բաւական շատ թուով սոսկալի տգեղութեամբ ծաղկատարներ կան, այնպէս որ դէմքերնին բոլորովին այլանդակուած են: Այսպիսի վիճակի ենթարկուած օրիորդներուն մեծ մխիթարութիւն են ուսումն և ձեռագործութիւն, որոց համար եռանդով կաշխատեն յառաջ գնալու:

Գանձակու հայոց թաղեր խմելու ջրի կողմանէ[24] կարի աղքատ են: Աղբիւրով կամ ականահատութեամբ արտաբերուած «քահրիզի» ջուր չունեն, այն ինչ թուրքաց թաղեր չորս քեահրէզներ ունեն, նոյնպէս և քաղաքի ստորակողման տեղերէն ոմանք արդէն ականահատութեամբ ջուրը բերած են: Լաւ և առատ սառոյց էլ պակաս է այստեղ, որով կարողանային աղքատներ ամառնային տօթի ժամանակ մի փոքր մխիթարութիւն վայելել, որովհետև ձմեռն այնչափ ցուրտ չըներ, որ ամառուան համար սառոյց գոյացնէր: Եղած սառոյցներն էլ կեղտոտ, անպիտան են, զի նոցա շերտերու մէջեր լի են հողերով, աւազներով և հողմավար ծղօտիներով: Գետակի ջուր իւր գնացքի տեղը չի սառեր, այլ յարմար ժամանակին պիտի անցուներն գոգաւոր տափարակներու մէջ սառցնելու: Վասն որոյ հայեր միշտ գետակի տաք ու պղտոր ջրեր խմած են մինչև ասկէ քանի տարի առաջ: Այնուհետև պ. Վարդազար Բռիգալեանց (ընչաւէտութեամբ միջին կարգի մի երիտասարդ), ութ հազարաչափ ռուբլի ծախսելով, գետակի ջուրն ծածկեալ աւազաններու միջոցաւ զտել տուեր է և խողովակներով բաժաներ է հայոց գլխաւոր փողոցներու վրայ: Վասն որոյ այս երիտասարդն այնչափ պատիւ ունի ժողովրդեան առաջ, որ իրմէն հարուստներու ոսկւոյ փայլունութիւն կնսեմանայ սորա հանդէպ: Խրախճանական շատ ճաշերուն հրաւիրուած է, լինի նա տանտիրոջ բարեկամ կամ ոչ:

Առաջին կարգի հարուստներէն Նանասեան պ. Պետրոս այժմ սկսեր է քաղաքիս ջուրն աւելի ազնուացնել: Ինք, զաւակ չունենալով, մահկանացու զաւակի փոխարէն յիշատակաց արժանի մի անմահ զաւակ ստեղծագործելու ձեռք զարկած է. այն է՝ ականահատութեամբ քահրիզի ջուր բերել կուտայ հայոց քանի մի փողոցներու վրայ բաժանելու, որն մինչև առաջիկայ (1891 թ.) յուլիս ամսոյն դուրս բերուած կյուսացուեր, և որոյ վրայ արդէն քանի մը հազար ծախսեր է: Աղքատ դասակարգ ժողովուրդն էլ, որ ամարանոց երթալու միջոց չունի, քանի մը հազար բերաններով արդէն սկսեր է օրհնել այդ պարոնի եղբայրսիրութեան հոգին:

Մեք, յառաջ քան զՆանասեանն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջակայ երեք թաղերու բնակիչներէն ընկերութիւն կազմեցինք՝ բաժանորդագրութեամբ քեահրիզի ջուր բերել տալու: Եւ արդէն ինն հոգի իրաւասուներ ընտրած 7000 ռուբլիաչափ ստորագրել տուած և ձեռն ի գործ եղած էինք, բայց գործի գլուխ կանգնող անձանց շատութեան և գործն շատ բարակ և խոր խորհրդածութեանց ենթարկուելու պատճառաւ մինչ այս, մինչ այն խորհրդոց մէջ կալեծփէին մեր իրաւասուներն, պ. Պետրոս Նանասեանցն, միայնակ իւր ձեռնարկած գործի գլուխ անցնելով, քեահրիզի ջուր բերելու «անդրանկութիւն» յափշտակեց մեր ձեռքէն: Ահա «զարքայութիւն Աստուծոյ բռնաբարի և բռունք յափշտակին զնա» վարդապետութեան իմաստի գործնական պարզ մեկնաբանութիւնն է Նանասեանցի ըրածն: Բայց իրեն վրայ էլ խօ՛ արժան չնստեցաւ արքայութեան այդ նեղ և անձուկ ճանապարհն, զի փոքրոգի մարդկանց ոմանց նախանձ, ոչ միայն վնասներ և արգելքներ հասցնելու աշխատեց, այլև փորուած ու պեղուած ականներու և հորերու մէջ գետակի ջուր կապելով լեցուց, ամբողջ գործը աւրել և քանդել ջանալով, իսկապէս հոգեմաշ ըրաւ յուսահատութեան աստիճանի հասցնելու չափ: Այս մասին մեք եկեղեցւոյ ատեանի մէջ բարեմաղթեցինք և կբարեմաղթենք առ Աստուած, որ այդ նախանձով պարոններու կիրքը ի բարի նախանձ շրջէ «ի պատիւ մի զմիմեամբ ելանելոյ» Պօղոս առաքեալի քարոզածի պէս: Եւ ցոյց տուինք այդ չար ու նախանձ անձերուն բարենախանձութեամբ գործելու յիշատակաց արժանի այլ գործքերը և «անդրանկութիւն» վայելելու յարմար միջոցները: Օրինակ՝ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ օրիորդաց վարժարանի շէնք չունենալն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարժարանաց շէնքեր և գրադարան չունենալն, նոյն եկեղեցւոյ գմբէթ և զանգակատուն շինելու կարևորութիւնը, քաղաքիս Երևանցւոց և Նորաշէն թաղերու սակաւաթիւ և անձեռնհաս ժողովրդեան անշուք և խարխուլ եկեղեցեաց վերանորոգութեան պէտքն, ասոնց նման և այլ «անդրանկութիւն» վայելելու միջոցներ: Առ որս անշուշտ եմք, որ մի օր այդ սերմեր պիտի բուսցունէ Գանձակու պարարտասիրտ ժողովուրդ:

Է

Գանձակու այգեստանեայց պտղատու ծառեր և նոցա պտուղներու տեսակներ ու որպիսութիւններ

Խաղողի որթեր տնկուած են 1 1/2 արշին լայնութեամբ թումբերու երկու եզերքներու վրայ: Թումբեր աննշան (մի քիչ) բարձրութիւն ունեն, որթերու կոճղեր ծածկուած են նոցա մէջ: Վազերի հենման համար երեք հատ հաստ և երկար եղէգներ, եռոտանիի պէս վազի շուրջ տնկուած են և մէջտեղից կապուած: Վազի վրայի մի տարեկան հին ուսեր կթե-

24 Քաղաքի ջրամատակարարման մասին տե՛ս **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 38:

քեն կամարաձև և նոցա ծայրեր կխոնարհացնեն ու կկապեն եղէգներու վարի եռոտանիներու վրայ, որ խաղող շատ տան: Եւ արդարև, բոլոր պտղատու ծառերի թէք ընկած ճիւղերն աւելի առատաբեր են, իսկ նոր խաղողներ (վազի վրայ գարնան ծլած թարմ ուսը) կբարձրանան եղէգներու վերի ծայրի վրայ, փաթաթուելով կհովանաւորեն վազին: Իւրաքանչիւր վազաթումբերու մէջտեղ թումբի լայնութեամբ առուներ կթողուն, որուն տեղացիներ ածու կըսեն: Սակայն որթատունկերու կարգն շատ անկանոն ձևած են, առաջին՝ թումբեր և առուներ փոխանակ արևելքէն արևմուտք երկարացնելու, իհարկէ, ինչ տեղ որ կյարմարի, որպէսզի հարաւային արեգակն նոցա վերայ իյնար, շատ այգիներու առուներ և թումբեր հարաւէն հիւսիս երկարացուցեր են, որով ամբողջ վազերու ստուերներ, իրարու վրայ հովանաւորելով, զիրար կզրկեն արևու ջերմութենէն և կտկարանան աճման ու բերքի մէջ: Երկրորդ՝ մի թումբի վրայ երկու կարգ տնկուած վազեր իրարու դէմուդէմ են ուղիղ գծով, որ եռոտանի չեն կազմեր, որպէսզի իրարու արեգակ չխափանէին:

1. Խաղող ունի 13 տեսակ.

ա) *Չամչինի.* սպիտակ ու տեղին որակութեամբ, մանրապտուղ, կարի քաղցր, որոյ գինին ամենընտիր կլինի և թէ առանձին քամին շամպանեայի դէմ կմրցէ:

բ) *Լկենի.* սևորակ Գանձակու մեծաքանակ սև գինին գլխաւորապէս այս խաղողից կպատրաստեն:

գ) *Կուրծենի.* ըստ վրացւոց՝ խաղող, ասել է՝ ճիշտ նման երկրորդին թէ՛ որակութեամբ և թէ՛ համով, բայց սորա կաշին հաստ է, քան նորան:

դ) *Կարմրակենի.* մոյգ կարմիր, սորա պտուղներ մեծ են, քան թէ 2-րդ և 3-րդ տեսակներին: Սա թէ՛ գինի կտայ և թէ՛ երկար կապրի ձմեռ, որոյ միս պինդ և կաշին հաստ է:

ե) *Սպիտակենի.* ասորմէ թէ՛ սպիտակ գինի կպատրաստեն և թէ՛ ուտելու համար ձմեռ երկար կապրի:

զ) *Իծենի* (էծու պտկի ձև). սև, սա ամէն տեսակ խաղողէն դիմացկունն է ձմեռուայ համար, թէ՛ պահելու և թէ՛ թթու դնելու կպիտոյանայ:

է) *Հազրէնի.* այն է սպիտակ էծուպտուկ, որ 6-որդի յատկութիւններն ունի:

ը) *Աղագօրմազ* (աղան չի տեսնար). սպիտակագոյն, սա գրեթէ միևնոյն ուտելու համար է: Իւր անուն առած է շուտահասութեան համար, այսինքն՝ այգեպանն կուտէ, այգետիրոջ աչքեն չի հասցուներ: Մշոյ այգիներու մէջ սորա նման շուտահաս խաղողի մի տեսակ կայ, որուն վաղահաս անուն կուտան:

թ) *Թաւրիզենի* (թերևս Թաւրիզէն տեղափոխուած). սպիտակ, դեղնագոյն, երկարապտուղ, որից կպատրաստեն սպիտակ ազնիւ գինի: Կըսեն, որ ձմեռուան համար հայեր բաց օդի մէջ կպահեն այս տեսակ խաղող, որ շատ չի ապրիր, թուրքեր փակ օդի մէջ կպահեն, որ շատ կապրի և մեծ քանակութեամբ կարտահանեն զանազան քաղաքներ:

ժ) *Կախէթի խաղող.* մօտ անցեալի մէջ Կախէթէն փոխադրուած, թէ՛ տնկելով և թէ՛ պատուաստելով բաւական աճեցուցեր են: Տեղւոյս կլիման նորա յատկութիւնը չի փոխեր: Հարկ չկայ ասելու, որ պատուական գինի կուտայ:

ժա) *Մուշկատնի* (ռուսերէն). փոխադրուած է Խրիմէն, որ հնդկաընկոյզի հոտ ունի թէ՛ խաղողն և թէ՛ նորա պատուական գինին:

ժբ) *Կանաչկենի.* որակութիւնը միշտ կանաչ, չամչենիի նման քաղցր, մսոտ և կաշին պինդ, յորմէ գինի չեն քամեր, այլ ուտելու համար է:

ժգ) *Մարանդենի* (փոխադրուած է Հին Նախիջևանից). գոյնը սև է, ողկոյզը մեծ և ամէն խաղողապտուղի շուրջն լիքն է կորեկաչափ խաղողի չհաս հատիկներով: Կարի քաղցր է, յորմէ գինի կշինեն, բայց սակաւագիւտ է:

2. Նուռ. 5 տեսակ՝ քաղցր, թթու, թթուաշ, որոյ տեսակները կզանազանուեն իրենց կեղևի որպիսութեամբ: Մի փոքր տհաս ժամանակ քաղելով՝ կցամքեցնեն բացօդեայ տեղ, որ երկար ապրի, ուստի և հատիկներ այնչափ մսոտ չեն լիներ: Կուր գետի ափունքներու մացառներու մէջ անթիւ վայրենի նռներ կան, որոյ պտուղներ թէև փոքր, բայց առատ հիւթ կմատակարարին, յորմէ նռան թանձր «գինի» կշինեն: Սա խմելու չի պիտոյանար, այլ խորոված ձկներ, նորա մէջ թաթախելով, կհամեմեն, որոյ ֆունտն՝ 15 կոպէկի կծախուի, կարտահանեն ուրիշ քաղաքներ և կկոչուի նառ-շարաբի:

3. Թուզ. 3 տեսակ՝ սպիտակ, սև և *«օխտը բարանի»*, այսինքն՝ տարին եօթն անգամ բար (նախախայրիք) տուող:

4. Կիտրոն և նարինջ. նոր մշակուած, ջերմանոցներու մէջ տնկուած և փոխադրուող տակառներու մէջ: Կիտրոն կարի մեծ կլինի, բռնալիր, իսկ նարինջը, ընդհակառակն, փոքր, երկուքն ալ հաստակեղև և ոչ այնչափ բարեհամ և ազնիւ:

5. Դեղձ. չորս տեսակ.

ա) *Հիւլի* անունովը, որ ամէնէն պատուականագոյնն է, մէկ թուշը՝ դեղին, միւսը՝ կարմիր: Սոքա երկու տեսակ են՝ տապակուող և չտապակուող, այսինքն՝ կորիզից պճղուող և չպճղուող, համն անոյշ, բռնալիր և առանց աղուամազի:

բ) *Երևանի.* գոյնը դեղին, աղուամազով, չպճղուող, համն անոյշ, հոտը կինամոնի, ձուաձև՝ սագի ձուի մեծութեամբ և երկարակեաց:

գ) *Զրդ.* գոյնը սպիտակ, կարմրաթուշ, հաւկիթի մեծութեամբ, ըստ մեծի մասին կուտը հանելով կչորացնեն (չիր անել) ձմեռուան համար:

դ) *Թիւքսրզ (անմազ).* կեղևը՝ խնձորի նման նուրբ, մեծութիւնն՝ խոշոր ծիրանի չափ, բազմաբեր և բարեհամ:

6. Կեռաս՝ 5 տեսակ.

ա) *Աբլաղ.* վաղահաս, սպիտակ, փափլիկ, ջրոտ:

բ) *Աղ-գիլաս.* սպիտակ, սա առաջինից աւելի խոշոր է և քաղցր:

գ) *Ղարա-սաչաղ.* մոյգ կարմիր, երկրորդ տեսակի մեծութեամբ և անուշութեամբ:

դ) և ե) *Ղռիմի-գիլաս.* սպիտակ և մոյգ կարմիր, արքայակաղնի մեծութեամբ և պինդ միս ունեն:

7. Թթու-գիլաս, այն է՝ բալ (վիշնեա). ո՛չ այնչափ ազնիւ տեսակ, ինչպէս որ Կոստանդնուպօլսոյ արուարձաններու բերքն է: Գանձակեցիներ գրեթէ ամէն տեսակ պտուղներէն, կեռասից սկսած մինչև տհաս ընկոյզ, գիտեն բանդակ՝ «անոյշ»՝ ըստ պօլսեցւոց (մուրաբա) շինել և կարի շռայլութեամբ կգործածեն: Հարուստէն սկսեալ՝ մուտ գործեր է մինչև աղքատի տուն: Լի՜ք-լի՜ք անուշ-ամաններով քանի մը տեսակ կհանեն հիւրերու առաջ:

8. Ծիրան. 3 տեսակ՝ *Գեօգ-արիգ*՝ մեծ, ջրալի, անոյշ: Քաղցրակորիզ, ո՛չ այնչափ ազնիւ և ո՛չ Վանայ ծիրաններուն պէս բազմատեսակ:

9. Սալոր. 3 տեսակ՝ *Ալուչա.* դեղնագոյն, մեծ, ջրալի և զովարար: *Գեօգա սուլթան*՝ թթուաշ, սորա թէ՛ թարմ և թէ՛ չորացածը կերակուր համեմելու համար է: *Շլոր.* մանր և կարի թթու՝ միայն կերակուրներու համար:

10. Նեմեցի դամբուլ (դամոն). սև և սպիտակ, երկարաձև և կարի անոյշ:

11. Դամբուլ (սա դամոն չէ). բազմատեսակ ու սալորի ձևով (բարեհամ, թթուաշ և թթու), զանազան մեծութեամբ և ոմանք հաւի ձուի չափ, որոց ազնիւ տեսակների 5 հատն մի ֆունտ կկշռէ: Վանը, որ ծառապտուղներու մայրաքաղաքն է[25], որու մէջ 60 տեսակ տանձ և 40 տեսակ խնձոր կայ և այլ պտուղներ, այս տեսակ պտուղ չունի: Վերոյիշեալ դամբուլներու անուններն են՝ *ալբուխար*, *քաղցր դամբուլ*, *ջրո-դամբուլ*, *Ղռիմի դամբուլ* (քաղցր և թթու), էլի *դամբուլ*, *ծիրանի դամբուլ* և այլն:

12. Խնձոր. քանի մը տեսակ՝ *ղրդշիրի*, որ վաղահաս է, *շխշխկան*, որոյ միջի սերմ շարժական է: *Մուշկի*՝ բարեհամ և անուշահոտ, *Թթու խնձոր* և *Ղուզի-գօրան*: Վերջի երկուքը ձմեռնուկ են և երկարակեաց:

13. Տանձ. նոյնպէս քանի մը տեսակ, բայց ոչ ազնիւ և բարեհամ, որոց անուններն են՝ *Նառ արմուտի*, *Բլդիրչին բուդի* (լորամարգի ազդր), *Մարխոշո*, *Ձմեռնատանձ*, *Կորկատանձ*:

14. Սերկևիլ. առ հասարակ պատուական է: *Թթու-սերկևիլ*՝ գրեթէ մարդու գանգի մեծութեան չափ, *շաքար-հայուասի* (շաքարասերկևիլ)՝ տանձի ձև է և կարի քաղցր, *թթուաշ*՝ կերակուր համեմելու համար: *Թաւրիզենի*, որը երրորդի մեծութիւնն ունի, բայց համը քաղցրն է:

15. Թութ. սպիտակ և կարմիր, վերջնոյս խառթութ կըսեն տեղացիներ, որ հազուագիւտ է:

16. Կտողին (կաղին). երկու տեսակ՝ *Ղօզ փնտրգ* (ընկուզակաղին), փոքր ընկուզի մեծութեամբ, այն է՝ արքայակաղին և երկրորդն՝ մանր տեսակ:

17. Ճողոպուր (ընկոյզ), որոյ փութն 80 կօպէկից մինչև մի մանէթ կծախուի:

18. Հիւն (պարսկերէն՝ զօղալ-հուն կամ հոյն), երկու տեսակ՝ կարմիր և սպիտակ, որոյ հիւթ եփելով կթանձրացնեն, նռան գինիի հետ ձկնեղենաց գործածելու (հիւն-շարաբի):

19. Փշատ:

20. Ունաբ (յունաբ):

21. Ձկեռ. ըստ օսմանցւոց՝ մուշմուլա:

23. Մամուխ՝ սալորի տեսակի պտուղ, որ կարելի է անուանել սև սալոր, կերակուրի մէջ գործ կածեն:

24. Խուռնիկ-կարախուրմա:

25. Շմբալութ (շագանակ):

26. Հաղարճ կամ լեմսի խաղող, որոյ ծառ փոքր թփի չափ է, պտուղներ՝ խաղողի մեծութեամբ, գոյնը՝ սպիտակ, համը՝ թթուաշ:

27. Նուշ-դիւրաբեկ տեսակ (քեաղզ-բադէմի) հազուագիւտ:

28. Մոր (մորենի). ըստ ռուսաց՝ մալինա, որոյ տունկ փշոտ և փոքր թուփ է:

Գանձակու գաւառ կարտահանէ

1. Մեծ քանակութեամբ գինի, որ իւր շահեկանութեան գլխաւոր միջոցն է:

2. Երկրորդ տեղ կբռնեն արմտիք և իւղ, պանիր, բուրդ, տաւարեղենաց կաշի և ոչխարեղենաց սեկ:

3. Երրորդ տեղ կբռնէ թարմ միրգ:

4. Լուածաղիկ, մատուտակի արմատ (պիան, ըստ օսմանցւոց՝ միամբալի):

Գաւառիս ընտանի անասուններ չենք ուզեր մէջ բերել, զի Հայաստանի այլ գաւառներու սովորական անասուններէն աւելի ոչինչ չունի:

Ը

Թռչուններու տեսակներ

1. *Բազէ*: 2. *Ղիրղի*՝ վերնոյն տեսակէն, անորմէ փոքր - կընտանեցնեն լոր որսալու: 3. *Ցին*: 4. *Բու*: 5. *Հոպոպ.* ըստ վանեցւոց՝ պուպու: 6. *Գէջա-դուշի* (չղջիկ): 7. *Մրհաւ* (փասեան): 8. *Թուրաջ*: 9. *Կաքաւ*: 10. *Եղունիկ* (աղաւնի)՝ վայրի և ընտանի: 11. *Տետրակ* (տատրակ): 12. *Սալամբ*՝ կաքաւի մեծութեամբ, թագ ունի գլխին, սպիտակ փետուրով, խատուտիկ: 13. *Լոր*: 14. *Աբեղաձագ* (արտուտ): 15. *Կղկղիկ*՝ հոպոպի մեծութեամբ, թագ ունի գլխին: 16. *Սարեակ*: 17. *Ժէռ*՝ ծիծեռնակի մեծութեամբ, սևաթոյր: 18. *Ծիծեռնակ*: 19. *Մորեխաածիտ*՝ մարախ կոտորող: 20. *Ծիտ* (ճնճղուկ): 21. *Կռունկ*: 22. *Արագիլ*: 23. *Կաչաղակ* (անծեղ): 24. *Ագռաւ*: 25. *Ջլի-վիստրի*՝ բացագոյն դեղին, սարեակի մեծութեամբ, որ կձայնէ՝ պի՜տ, պի՜տ, պի՜տ: 26. *Բաբաջիստ*՝ մոխրագոյն, նոյնպէս սարեակի մեծութեամբ, որ կեռասներ փչացնելու համար տղաքներէ կհալածուի: 27. *Սասարք*՝ սպիտակ գոյնով, վայրի բաղի մեծութեամբ:

25 «Զանազանեալք ի պտուղս և ի տերևս և բազումս բազմաբերս (Խորենացի, գլուխ Ա, ԳԼ, ԺԶ)» (ծնթ.՝ հեղինակի):

28. *Սագ*՝ ընտանի և վայրի: 29. *Սոխակ*: 30. *Բաղ*՝ ընտանի և վայրի: 31. *Հնդկահաւ*: 32. *Ընտանի հաւ*: 33. *Միրամարգ*՝ հազուագիւտ: 34. *Սուլաշ* (սև ագռաւ): 35. *Կաքոլախ*. ըստ ոմանց՝ կանարէյկա: 36. *Սահակ թռչուն*: Ցերեկին սոցա ձայնը երբէք լսուած չէ և չէ տեսնուած, թէ ի՞նչ տեսակ է, մե՞ծ է արդեօք, թէ՞ փոքր: Երեկոյին՝ մութ կոխելուն պէս, գիշեր ամբողջ նոքա ողբաձայն (իրօք տխուր է) սհա՜կ կամ սա՜կ կձայնեն, ինչպէս մեզ կթուի՝ զիրար գտնալու: Իւրաքանչիւր ձայնելու միջոցը միաչափ է: Ամէն մի ձայնելու միջոցին մարդ, արագութեամբ համրելով, ճիշտ տասներկու կարող է համրել, ոչ երբէք տասնմէկ կամ տասներեք: Զարմանալի ճշտութեամբ կպահեն իրենց կոչելու «տաքտերն»: Սոքա թէ՛ սակաւաթիւ են, և թէ՛, ինչպէս մեզ կթուի, ընկերակցութեամբ չեն շրջեր, որովհետև եթէ մինն սհակ կոչելու լինի, հազիւ մի ուրիշն շատ հեռուէն նոյնը կպատասխանէ, դարձեալ միաչափ միջոցաւ: Իսկ երբ որ իրարու շատ մօտենան, որ հազիւ կպատահի, կսկսեն մի փոքր շուտ պատասխանել իրարու: Կթուի, թէ ուրախութիւն կզգան կամ կանեն, երբ իրարու կմօտենան:

Սոցա վերաբերութեամբ եղած աւանդութիւնը զանազանակերպ կպատմեն, թէպէտև ամէն կերպ զուրցուածի իմաստները միևնոյն են: Ոմանք կասեն երկու հոտաղներ կամ եղբայրներ, գիշերը իրենց արածեցուցած եզներէն մինը կորսնցնելով, մի եղբայրն կերթայ որոնելու, միւս եղբայրն, որ մնացած էր եզներու քով՝ պահպանութիւն անելու, շարունակ կձայնէ՝ Սհա՜կ, գտա՞ր, միւսն կպատասխանէ՝ ո՛չ: Յետոյ գնացող եղբայրն էլ կկորսուի: Վասն որոյ մնացեալ եղբայրն առ երկիւղի հօրն կամ տիրոջն չի վստահանար տուն վերադառնալ, և այդ տագնապի մէջ մոլորուած տարակուսած՝ յանկարծ թռչունի կփոխուի Աստուծոյ հրամանաւ և միշտ սհա՜կ, սհա՜կ կանչելով՝ կթափառի:

Իսկ ոմանք՝ թէ գառներ արածեցնող քոյր ու եղբայր եղած են: Եղբայրն, կորսուած քանի մը գառներ գտնալու հետամուտ լինելով, ինքն էլ կորսուեր է: Քոյրն սկսեր է Սհա՜կ, Սհա՜կ կանչել, ամբողջ գիշեր շրջեր է և չի կարացեր գտնալ, վասն որոյ եղբոր կորստեան վրայ սրտակէզ լինելու համար Աստուած թռչուն ըրեր է զայն, որ իւր եղբայր գտնայ: Առաջի կերպ աւանդութիւնն գիւղացիք կխօսին, իսկ վերջինն՝ քաղաքացիք:

Այս աւանդութիւնը նոյն իմաստով տարածուած է այս կողման թէ՛ հայոց և թէ՛ մահմեդականաց մէջ: Վերջիններս, իհարկէ, իրենց լեզուով:

Թ

Հին Գանձակ

Այս աւերակը Նոր Գանձակու ուղիղ հիւսիսային կողմը կգտնուի մէկ ու կէս ժամու հեռաւորութեամբ՝ Գեանջա-չայի երկու եզերքի վրայ շինուած: Նորա շինութիւններէն գրեթէ ոչինչ մնացորդներ չեն տեսնուեր՝ բացի բերդապարիսպներու հիմքերէն: Եւ այդպէս էլ պէտք է, որ լինէր, զի պարիսպներ և այլ շինութիւններ շինուած են գետակի փոքր ողորկ քարերէն՝ իրարու մածուցուած կրաշաղախով: Ինչպէս կթուի մեզ, քաղաքը միայն մի կողմէն պաշտպանուելու դիրք ունեցեր է: Արևելեան, հիւսիսային և արևմտեան կողմերէն պարիսպ չունի: Բերդապարիսպներ միայն հարաւակողման վրայ են՝ երկու կարգ: Նոցա մէջ խրամատ փորուած է՝ ջրով լեցնելու: Բերդապարսպի երկայնութիւն ու լայնութիւն վեց հարիւրական քայլաչափ են: Խօսքս միայն գետակի աջ ափի համար է, զի ձախ ափին այնչափ նշմարելի չեն: Բերդն քառակուսի եղած է: Եւ այդ քառակուսի մեծ հրապարակի մէջ խաչաձև պարիսպ դնելով՝ չորս քառակուսիի բաժնած են: Ներքին երկու քառակուսիներու (հուպ ընդ քաղաքն) մէջը մեծամեծ շինութիւններու աւերածոյք կտեսնուեն (թերևս զինուորանոցներ և մթերանոցներ եղած լինեն), իսկ արտաքին, այսինքն՝ հարաւակողման երկու քառակուսիներու մէջ ոչինչ շինութիւններ չեն եղեր: Զի կա՛մ զինակրթութեան ասպարէզ եղած են և կա՛մ քաղաքի պաշարման ժամանակը ժողովրդեան պատսպարանաց ծառայեր են: Զի ինչպէս ասինք, քաղաք երեք կողմէն անպաշտպանելի է: Գետակի աջ և ձախ ափանց պարիսպներ իրարու կցուած են՝ գետակի վրայէն կամուրջով, և նոյն աւերակ կամուրջի աչքերու առաջը տախտակամածով ջուրն արգելած են եղեր՝ պարսպաց միջի խրամատի մէջ լեցնելու:

Արտաքին պարսպի վրայ՝ ամէն յիսուն քայլի միջոցին, բուրջեր շինուած են՝ բոլորշի-բոլորշի, խորանի ձևով դուրս ընկած: Գետակի երկու ափանց քաղաքամասեր իրարու հետ հաղորդակցելու երեք կամուրջներու հետքեր կերևին: Միջի կամրջի երկու կողմանց աչքեր տակաւին կմնան իրենց կամարներով:

Քաղաքացւոց բնակութեան բնաւ մնացորդներ չկան, բացի գետնին հաւասարած հիմքերէն, որք նոյնպէս գետակի ողորկ քարերով շինուած են՝ առանց կրաշաղախի: Բնակչաց ոմանց բակերու մէջը՝ գետնի վրայ տարածուած կտեսնուեն թզի, նռան և թթենեաց ընձիւղներ:

Գետակի աջ ափի քաղաքամասին հիւսիսային կողման վրայ կգտնուի, ըստ հայոց՝ *Խոսրով նահատակ*[26] և ըստ թուրքաց՝ *Իմամ-զադէ* ուխտատեղին, որոյ մի քառակուսի սենեկի մեծութեամբ քարուկիր և կամարակապ շէնքի միջնավայր կայ յարգելի գերեզման, որ երկու արշին բարձրութեամբ և երկարութեամբ տախտակամածով ծածկուած է գերեզման՝ մարդկանց անտեսանելի: Սոյն քառակուսի փոքրիկ տաճար չորեքկուսէ դռներ ունի:

26 Խոսրով նահատակ մատուռի մասին մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, նշվ. աշխ., էջ 61-62:

Տաճարի վերայ կբարձրանայ ո՛չ սրածայր գմբէթ՝ կանաչ-կապոյտ գոյն յախճապակով ներկուած, որ այժմ քանի տեղէ ճեղքուած և խարխալուած է:

Տաճարին, նորա գաւթի և այլ շինութեանց մէջ մահմեդականաց երևելի մարդկանց գերեզմաններ և նոցա արձանագրութիւնք, որը՝ մարմարիոնի և որը՝ հասարակ քարի վերայ, և ոմանց վերայ ներկուած քարապատկերներ կտեսնուեն: Սոյն ուխտատեղին հասարակ պատերով քառակուսի շրջապատուած է: Իւրաքանչիւր պատն երկու հարիւր կանգուն երկայնութեամբ, որոց մէջ բազմաթիւ խիտ առ խիտ գերեզմաններ կան (զանազան քաղաքներէ և շրջակայքէն բերուած)՝ իրենց արձանագրութիւններով և քանի մը փոքրիկ գմբէթաւոր մահարձաններ: Սոյն ուխտատեղին կգնան քիչ հայեր և շատ մահմեդականներ: Գրեթէ ամէն օր անպակաս են շրջակայ գիւղերէն և Գանձակէն: Կյաճախէն մինչև անգամ զանազան քաղաքներէն:

Ուխտատեղւոյն պահապան մահմեդականն, որ իւր ընտանեօք սոյն տեղ կբնակի, ամէն ազգէն դիմողին տաճարին դուռը կբանայ՝ նուէրը ընդունելով: Գաւթի դրան մօտ երկու աչօք կոյր մի մօլլա, թաշկինակ բաց արած, նստած կերգէ (իհարկէ, հոգևոր երգ) և ամէն անցուդարձ անողին ջաննաթի (դրախտին) արժանանալ կբարեմաղթէ առ Աստուած՝ ստանալով իրեն տուած ողորմութիւնը:

Նոյն՝ մեր գնալու օրը, մահմեդական ուխտաւորաց հոծ բազմութիւն կար՝ կին, աղջիկներ, տղաքներ՝ խառն նստած, ամէնքն ի միասին բարձրաձայն կողբային, կուրծքերնին կծեծէին, ինչպէս կանեն իրենց Ալի մարգարէին սպանման տարեդարձին:

Հին Գանձակէն մինչև ի նորն՝ նոյն գետակի ձախ ափին, շինութեանց տերբուկներ յաճախ կտեսնուեն, իսկ աջ ափին քարուկրով թումբ շինած են՝ կա՛մ ջուրն ափունք չողողելու և կա՛մ արտաքին թշնամին ջուրն չկտրելու, այլուրեք չտանելու, որ բնակիչք ծարաւակոտոր չլինեն, զի ջուրն դիւրաւ կհանուի աջ ափի վերայ: Մոռացանք ասելու, որ հին Գանձակի մէջ հայոց ո՛չ եկեղեցւոյ և ո՛չ գերեզմանաց հետք չերևեր:

Ժ

Գանձակու վիճակի անձկութեան, նորա և այլ հոգևոր վիճակաց անկոպար բաժանման վրայ

Աշխարհի հետզհետէ յառաջադիմելու ապացոյց այն է, որ որդին իւր ծնողէն աւելի կսովրի և փորձառու կլինի (իհարկէ, որ պիտի սովրի և փորձ լինի), և աշակերտ իւր վարժապետէն աւելի (իհարկէ, ո՛չ ամէնք, այլ գէթ մեծագոյն մասն): Այդպիսով աշխարհ յառաջադիմութեան շաւղով յառաջ կընթանայ: Յառաջադիմութիւնը արհեստներ կկատարելագործէ, գիտութիւններն հետզհետէ աւելի կպարզաբանէ: Յառաջադիմութեամբ գերդաստանական զարգացումն կճոխանայ ուղիղ կենցաղավարելու, իշխանութիւններ կզօրանան և կկատարելագործուին բարւոք կառավարութեան համար, օրէնքներ կկատարելագործուին ի դիւրակեցութիւն մարդկանց, գրաւոր հեղինակութիւններ կսրբագրուին ուղիղ առաջնորդելու համար, դաստիարակութիւն, բնութեան տուած օրինակով, կուղղուի վարք ու բարքի շտկելու, որ մարդիկ իրենց սուրբ կոչման հասնեն:

Իսկ այն ամէն ազգերու իշխանութիւններ, որք իրենց եղած տեղ կանգ առեր են, մտքի պաշարմամբ յառաջադիմութեան ուղիի մէջ չեն ուզեր մտնալ: Նոքա հետզհետէ յետախաղացութեան կենթարկուեն: Մտքի պաշարում անզարգացման նշան է, ինքնուրոյն գործելու կարողութիւն չունենալն է: Այդպիսի իշխանութիւններ և ազգեր ո՛չ իրենց օգուտ կբերեն և ո՛չ իրենց ստորադրելոց և եղբարց:

Զարդիս, դրացի ազգին գործունէութիւն, ճոխութիւն և զարգացումն, անգործ և մտօք անզարգացեալ դրացի ազգին նուաճումն, աղքատութիւն, ապիկարութիւն, հետևապէս և կործանումն կբերէ, այն ինչ ընկերսիրական օրէնքով պիտի նորա ղեկավարը լինէր՝ աւետարանի քարոզած հոգւոյն համեմատ: Եւ այդպիսի յետադէմ ազգի և իշխանութեան պողովատիկ (պողպատ) խարիսխ կհալուի, կլուծուի հպատակաց գայթակղութեամբ՝ ի կործանումն երկոցունց: Ժամ է, վայրկեան է ապրելու, որոյ ճարտարապետը պիտի լինի մեր հոգևոր ծայրագոյն իշխանութիւն:

Մեր հոգևոր իշխանութեան պարտաւորութիւն համարուած մեծամեծ գործերէն մի փոքրիկ յառաջ բերենք, այն է՝ նորա վիճակներու անկոպար բաժանումն: Չի կայ այնպիսի՛ թեմ, որ իւր ընդարձակութեամբ, իւր բազմաթիւ գործերն ի գլուխ բերելու անձեռնհաս է: Այդպիսին, եթէ երկուքի բաժնուի, թէ՛ մի թեմական դպրոցը կաւելանայ, և թէ՛ ձեռնհասօրէն կկառավարուի: Սորա հակառակ կայ այնպիսի՛ թեմ, որ իւր փոքրկութեամբ թէ՛ մի թեմական դպրոց կառավարելու անձեռնհաս է և թէ՛ ի չգոյէ գործոյ դատարկ մնացած, նստակեցութեան դատապարտուած է: Պարզենք՝ *Թիֆլիզի թեմ* կարելի էր երկուքի բաժանել, որով թէ՛ մի այլ թեմական դպրոց կբացուէր և կկառավարուէր Ախլցխայի մէջ՝ իւր ունեցած հաստատուն աղբիւրներով, և թէ՛ գործերը ձեռնհասութեամբ կկատարուէին:

Շուշիի թեմի ընդարձակութիւնը *Շամախւոյ թեմի* անձկութիւնը կրնար ընդարձակել, որով և կունենար մի լրացեալ թեմական դպրոց: Այսպէս են և հոգևոր կառավարութեանց ոմանց բաժանումներ: Օրինակ՝ Աղէքսանդրապոլ քաղաքի վրայ կայ 125 գիւղ, իսկ Կարսի վիճակ այնչափ փոքր է, որ բոլոր հայերը Աղէքսանդրապոլ քաղաքի հայոց թուէն ալ պակաս են: *Աղէքսանդրապոլու հոգ. կառավարու-*

թիւն տարին 3000 համարէն աւելի գիր կարձակէ, իսկ *Կարսինը* և *Գանձակինը*՝ թերևս հազարէն էլ պակաս: *Գանձակու հոգ. կառավարութեան* վիճակ կբաղկանայ միայն 23 գիւղերէ, բոլորն էլ՝ գրեթէ քաղաքի շուրջը, իսկ Շուշուոյ թեմի *Իգիրմիդօրթ ատուած վիճակի* գործակալութիւն կբաղկանայ 24 գիւղէ, որ Գանձակ քաղաքէն 2 1/2-3 ժամ, իսկ Շուշիէն 2 1/2-3 աւուր ճամփայ հեռաւորութիւն ունին: Չյիշենք, որ ձմեռը շատ անգամ հաղորդակցութիւնը կընդհատուի:

Յիշեալ Իգիրմիդօրթի գործակալութեան գիւղեր *Գանձակու Գետաշէնու գործակալութեան* գիւղերէն, ըստ ամենայն պարագայից, այնչափ կտարբերուին իրարմէ, ինչպէս գիշեր ցորեկէն: Իգիրմիդօրթի գործակալութիւն նսեմացած է, իհարկէ, իւր կենտրոնէն հեռու լինելու համար, մինչև անգամ այստեղի նորակառոյց եկեղեցին երկու տարի առանց օծելու կմնայ: Վարժարան չունին, հովուի այցելութենէ զուրկ են: 1824 թուականէն մինչև 1890 Իգիրմիդօրթ գաւառակին ոչ ոք այցելութիւն ընող չէ եղեր Շուշուայ առաջնորդներէն, բացի գեր. Արիստակէս վարդապետ Սեդրակեանէն: Իսկ այլ հովուական պարտաւորութեանց պակասութիւնք կմնան ըստ իւրեանց սորասի:

Թիֆլիզու թեմի *Շամշադնոյ գործակալութիւն* Թիֆլիզէն որչափ աւուր ճանապարհ հեռու է, այնչափ ժամուայ ճանապարհաւ մօտ է Գանձակէն: Շամշադնոյ և Իգիրմիդօրթի գործակալութեան գիւղերի բնակիչներ ի լրոյ գիտեն, թէ Թիֆլիզ և Շուշին ինչ են, իսկ Գանձակ ամէն օր կտեսնան: Շուշիի կօնսիստորիայն իւր՝ Իգիրմիդօրթի գործակալութեան գնալիք գրեր կխրկէ Գանձակու հոգ. կառավարութեան վրայ, որ «առաքէ ըստ պատկանելոյն»: Թիֆլիզի թեմի Շամշադնոյ գործակալութեան վիճակի 17 գիւղերու ծնելոց, պսակելոց և ննջեցելոց տարեկան վիճակագրութեան տեղեկագիրը այդ երկու գործակալութենէն կուղարկուեն Գանձակու հոգ. կառավարութեան, որ հաղորդէ մարմնաւոր իշխանութեան: Վերոյգրեալ երկոքին գործակալութեան զինուորակոչութեան վիճակահանութիւնը Գանձակու գաւառի մէջ կլինի, և նոցա առուտուրը՝ գանձակեցւոց հետ:

Թերևս ոմանք զմեզ անհաշուագէտներու կարգին դնեն, որ չենք իմանար, թէ՝ եթէ Թիֆլիզի թեմ երկուքի բաժնուի, ծախուցն էլ երկու դուռն կբացուի: Այո՛, բայց ի՞նչ անենք, որ որչափ հոգի առաւել է, քան զմարմին, նոյնչափ ևս ժողովրդեան բարոյական շինութեան առաւել է, քան զնիւթական հաշիւն: Անոյ մայր եկեղեցւոյ և նորա կաթուղիկոսարանին ճրագալոյս ո՞վ պիտի անի, քանի որ այնտեղ ժողովուրդ չկայ: Տարակոյս չկայ, որ մեզ հետ և շատեր գիտեն, եթէ թեմերու թիւն աւելանալու լինի, մեզի բաժին չիյնար: Այո՛, մեք գիտենք թափուր մնացած թեմերու փորձերէն, բայց մեր որոնածն այն է, որ Գանձակու և յաջորդութիւններու գործունէութեան ասպարէզ չկաշկանդուի անձուկ վիճակի մէջ: Թո՛ղ վիճակիս գիւղերն աւելնան Շամշադնոյ և Իգիրմիդօրթի գործակալութեանց քանի մի գիւղերով, որոյ համար քանիցս անգամ խնդիր տուած են ներկայ վեհափառ ծայրապետին թէ՛ նորա Տփխիսոյ վիճակաւորութեան և թէ՛ արդի աստուածարեալ օծելութեան միջոցին, բայց լուծումն չէ ստացուել: Երանի կլինէր, որ լուծումն ստացուէր, և այդ ժողովուրդ իւր մերձաւոր հովուի ձայն լսէր և առաջնորդուէր դէպի լոյս:

Շատ կարևոր է Հայաստանի գիւղերուն ռէս լինել, որպիսիք կպակասին այնտեղ, քան Գաղղիոյ փռէնս լինել, ուր շատ կան: Անարդարութիւն է չխոստովանել, որ թափուր վիճակաց համար յաջորդ վարդապետ չկայ և ոմանց թեմերուն՝ եպիսկոպոս, զի պատրաստող բերան չկայ:

Շարունակելի

ԳՅԱՎՐԵՆՋԻ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՎԵՑԽՈՐԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Աշոտ Հակոբյան

Վեցխորան եկեղեցին, որի պատմական անվանումը մոռացվել է, գտնվում է Կարնո նահանգի Դերջան գավառի համանուն քաղաքից 25 կմ հարավ-արևմուտք՝ Գյավրենջի /Կեվրենճի/ (այժմ՝ Օղուլվերեն) գյուղի արևելյան եզրին (տեղադրությունն է՝ N 39 38 25.97, E 040 36 48.49, ծ. մ.՝ 1700 մ):

Բնակավայրն արդեն ԺԹ դարի վերջերին մտնում էր Գոմձոր գյուղախմբի մեջ: 1888 թ., մարդահամարի տվյալների համաձայն, զուտ քրդաբնակ էր[1]:

Կառույցը ճարտարապետական հորինվածքով պատկանում է վեցխորան եկեղեցիների տիպին: Մինչ այսօր մեզ հայտնի նմանատիպ շինությունները տասնմեկն են, որոնցից ինը գտնվում են պատմական Մեծ Հայքի, իսկ երկուսը՝ բուն Վրաստանի տարածքում (տե՛ս գծագիր 1)[2]:

Սույն հոդվածով ներկայացնում ենք 2008 թ. մեր արշավախմբի[3] կողմից տեղում բազմակողմանի ուսումնասիրած և վեցխորան եկեղեցիների շարքում հորինվածքով եզակի ու գիտական աշխարհին առ այսօր անծանոթ Գյավրենջիի եկեղեցին:

Այն 14,3 մ տրամագծով, շրջանաձև, բարձր գետնախարսխով, ներքուստ վեցխորան, արտաքուստ տասներկունիստանի, կենտրոնագմբեթ հորինվածքով, սրբատաշ շարվածքով կառույց է (գծ. 2, նկար 1): Խորանների առանցքային վեց արտաքին նիստերում բացված են երկու մուտքերը և ութ լուսամուտները, իսկ անկյունային վեց նիստերից յուրաքանչյուրում առկա է եռանկյունի մեկական խորշ (նկ. 2): Դրանք ամփոփված են եղել փոքր կամարաձև ակոսների ռիթմով զարդարված կոնաձև կամարապսակներով (նկ. 3): Եկեղեցու նիստերի անկյուններում զետեղված են դեկորատիվ կիսաշրջան զույգ որմնասյուներ, որոնց կապող կամարները պսակել են նիստերը:

Կառույցի հորինվածքային գլխավոր առանձնահատկությունը, որով տարբերվում է վեցխորան մյուս եկեղեցիներից, խորանների ոչ միաչափությունն է. հյուսիսային (1,17 մ) և հարավային (1,12 մ) երկու զույգ խորանների տրամագծերը արևելյանից

Նկար *1*. եկեղեցին հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)



Գծագիր *1* (վեցխորան եկեղեցիներ). 1. Արագածավանի Գրիգորաշեն, 2. Բագարանի Ծուշանավանքի, 3. Բանակի, 4. Գոգյուբայի Սբ. Գևորգ, 5. Անիի Աբուղամրենց Սբ. Գրիգոր, 6. Անիի միջնաբերդի Բազմախորան, 7. Բոժորմիի, 8. Օլթիի բերդի, 9. Բագնայրի վանքի, 10. Կացխիի և 11. Անիի Բեխենց (Կուսանաց) վանքի եկեղեցիները

և արևմտյանից (1,96 մ) գրեթե կրկնակի փոքր են (նկ. 4): Դրա շնորհիվ եկեղեցու գմբեթը հենված է եղել ոչ թե վեց խորանների անկյունային որմնամույթերից սկիզբ առնող վեց, այլ արևելյան և արևմտյան խորանների եզրային որմնամույթերը միմյանց կապող չորս կամարներին: Իսկ հյուսիսային և հարավային երկուական խորանների անկյունային որմնասյուները կապող չորս կամարները դուրս են մնացել գմբեթատակ քառակուսուց, այսինքն՝ Գյավրենջիի եկեղեցին վեցխորանների նոր տարատեսակ է իր հորինվածքով, որի գմբեթը հենվել է ոչ թե վեցանկյուն գմբեթակիր կամարների, այլ չորս կամարներով գմբեթատակ քառակուսու վրա (գծ. 3):

1 **Колюбакин А.**, Материалы для военно-статистическаго обозрения Азиятской Турции, том I, часть I, Тифлис, 1888, ст. 317. Ըստ հեղինակի՝ գյուղաբնակ քրդերը ղզլբաշներ էին (նույն տեղում), այժմ՝ ալևի զազաներ:

2 **Նալբանդյան Գ.**, **Հարությունյան Ա.**, **Հակոբյան Ա.**, Բագարանի Ծուշանավանքը, Երևան, 2021, էջ 44-45:

3 ՀՃՈՒ հիմնադրամի արշավախումբը հուշարձանագետ Սամվել Կարապետյանի գլխավորությամբ:



Գծագիր *2* և *3* (չափ.՝ հոդվածագրի)

Արևելյան և արևմտյան խորաններն ունեն կիսաշրջան, իսկ հյուսիսային և հարավային երկուական խորանները՝ պայտաձև հատակագիծ: Վերջիններիս միջև որմնասյուներն ունեն պարզ ուղղանկյուն, իսկ արևելյան և արևմտյան խորանների եզրային որմնամույթերը՝ եռամաս բարդ հատակագիծ, որոնք գմբեթակիր որմնամույթերն են: Դրանք ավարտվում են զարգացած միջնադարին բնորոշ քիվերով:

Կիսաշրջան հատակագծով արևելյան ավագ խորանն ունի ցածր բեմ (առավելագույնը՝ 0,45 մ բարձրությամբ), որից պահպանվել է միայն ճակատը, և լուսավորված է արևելյան պատի կենտրոնում բացված զույգ նեղ և նրանցից վեր կենտրոնական մեկ լուսամուտով (նկ. 5): Ավագ խորանի հյուսիսային և հարավային կիսաբոլոր պատերի մեջ առկա է ուղղանկյուն, կամարակապ մեկական փոքր խորշ (նկ. 6), իսկ ուղիղ հատվածներում բացված են հյուսիսային և հարավային ավանդատների մուտքերը (նկ. 7):

Ավանդատներն ունեն նեղ ձգված, դեպի արևելք փոքր-ինչ լայնացող անկանոն հատակագիծ, որոնց երկայնական առանցքներն արևելք-արևմուտք ուղղությունից շեղված են 56 աստիճանով: Ծածկված են կորավուն տափակ առաստաղով և լուսավորված արևելյան երկայնական պատի մեջ զետեղված մեկական նեղ լուսամուտով, որոնք բացվում են արևելյան եռանկյունի խորշերից յուրաքանչյուրի կողային պատի մեջ (նկ. 8):

Եկեղեցու մուտքերը երկուսն են՝ բացված արևմտյան և հարավարևմտյան խորանների կենտրոնական որմերից: Արտաքուստ զարդարված են շքամուտքային լուծումներով. ունեն սլաքաձև կամարներ և երիզված են զույգ կիսաշրջան դեկորատիվ որմնասյուն-կամարներից բաղկացած շրջանակներով: Արևմտյան շքամուտքը զուրկ է հարդարանքի տարրերից, որի բարավորը կազմված է երկկտոր քարերից (նկ. 9): Հարավարևմտյան շքամուտքի կամարը մշակված է երկարավուն խաղողի ողկույզների և պարզ կլոր տերևաքանդակների ռիթմով, իսկ բարավորը բաղկացած է միմյանց հենվող սեպաձև յոթ քարերից: Շքամուտքի որմնասյուներ

Նկար *2*. Եկեղեցին հարավ-արևելքից. *3*. Եռանկյունաձև խորշի կամարապսակը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.). *4*. Եկեղեցու ներքին տեսքը դեպի հարավ (լուս.՝ Զ. Սարգսյանի, 2014 թ.)

ների խոյակները հարդարված են պարզ տերևաքանդակներով (նկ. 10):

Եկեղեցու՝ հիմնականում զուսպ հարդարանքի գլխավոր առանցքային քանդակն արևելյան զույգ լուսամուտները պսակող կամարակապ քարի մակերեսին պատկերված հարթաքանդակն է՝ Դանիելը առյուծների գրում (նկ. 11): Հարդարանքի մյուս

Նկար *5.* **Արևելյան ավագ խորանը.** *6.* **Ավագ խորանի հարավային խորշը.** *7.* **Հարավային ավանդատան մուտքը.** *8.* **Հյուսիսային ավանդատունը ներքուստ.** *9.* **Արևմտյան շքամուտքը.** *10.* **Հարավարևմտյան շքամուտքը.** *11.* **Արևելյան ճակատի պատկերաքանդակը (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.).** *12.* **Եկեղեցու գետնախարիսխը (լուս.՝ Ձ. Սարգսյանի, 2014 թ.)**

տարրերն են եռանկյունի խորշերի ակոսավոր կամարապսակները և շրջանաձև նախշազարդ գետնախարսխի զարդաքանդակները: Գետնախարիսխը բաղկացած է հորիզոնական հինգ գոտուց. առաջին շարքի աստիճանի վրա՝ միաշար քարի մակերեսին, փորագրված են իրար հերթագայող կամարաձև և սուրանկյուն կրկնվող զարդանախշեր, որից վեր՝ նիստավոր գոտուն հաջորդում է ոլորահյուս զույգ պարանագոտին: Գոտիաշարն ավարտվում է պարզ կլոր մեդալիոնների շարքով (նկ. 12):

Եկեղեցին ներկայումս կիսավեր է: Պահպանվել է պատերի հիմնական մասը, իսկ խորանների գմբեթարդները և կամարները, ինչպես նաև գմբեթն[4] ամբողջությամբ գոյություն չունեն: Տարածքում նույնիսկ առկա չեն դրանց բեկորները, որի պատճառով գմբեթատակ քառակուսուց անցումը գմբեթի շրջանաձև հիմքին անհայտ է, թե ինչ լուծում է ունեցել՝ տրոմպայի՞ն, թե՞ առագաստային: Անհայտ է նաև հյուսիսային և հարավային գմբեթակիր կամարների և երկուական զույգ խորանների միջև եղած եռանկյունաձև առաստաղների ձևը՝ կոնաձև՞, տափակ թաղածա՞ծկ, թե՞ այլ:

Եկեղեցու մերձակայքում պահպանվել են Ժ-ԺԱ դարերին բնորոշ մի քանի խաչքարեր, որոնք, գործածվելով որպես շինաքար, 2008 թ. տեղադրված էին գյուղամիջյան աղբյուրի վերնամասում և տների որմերում (նկ. 13 և 14):

Ելնելով վերոշարադրյալից՝ կարող ենք եզրակացնել, որ եկեղեցու ճարտարապետական հորինվածքը նման է Ժ-ԺԱ դարերի վեցխորան եկեղեցիներին և բացառիկ ենթատեսակ է, իսկ զարդաքանդակները՝ Տայքի Ժ-ԺԱ դդ. հայ քաղկեդոնական, հատկապես Իշխանի, Օշկվանքի եկեղեցիների հարդարանքի այդօրինակ լուծումներին (նկ. 15-20):

Եկեղեցու թվագրումը որոշելու համար հարկ ենք համարում նաև անդրադառնալ Դերջան գավառի

4 Տեղաբնակ զազաների կողմից մեր թարգմանչին՝ Ռ. Քորքոշյանին փոխանցված տեղեկությունների համաձայն՝ եկեղեցին երկար ժամանակ գործածվել է որպես խոտանոց: Գմբեթը պայթել և փլուզվել է ներսում կուտակված դեզերի հրդեհից, որի հետքերն առ այսօր նշմարելի են: Պետք է նշել, որ գյավրենջցիները մինչ օրս երկյուղածությամբ են վերաբերվում եկեղեցուն՝ քարերը համարելով սուրբ, իսկ դրանց տեղափոխելն ու վնասելը՝ մեղք: Ըստ նրանց վկայությունների՝ տարիներ առաջ հարևան գյուղի բնակիչներից մեկը պոկել և տարել է եկեղեցու քարերից, որի հետևանքով էլ ամբողջ ընտանիքը մահացել է: Հակառակ իրենց ասության՝ հուշարձանի փլատակ քարերն ամբողջությամբ յուրացվել են և անհետացվել:

Նկար *13*. Աղբյուրի խաչքարը. *14*. Բնակելի տան հիմքում տեղադրված խաչքարեր
Նկար *15*. Գյավրենջիի եկեղեցու գետնախարսխի զարդարանքները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

Նկար *16 և 17*. Իշխանի եկեղեցու սյան խարիսխը (լուս.՝ Ժ-Մ. Թիերրիի, 1973 թ.) և շքամուտքը (լուս.՝ Զ. Սարգսյանի, 2008 թ.)
Նկար *18*. Գյավրենջիի հարավարևմտյան շքամուտքի զարդարանքները (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2008 թ.)

պատմությանը զարգացած միջնադարում, որի համաձայն՝ Թ դարի վերջերին այն ընդգրկվել է Բագրատունյաց թագավորության կազմում, իսկ Ժ դարի կեսերին գավառը վերստին զավթել է Բյուզանդիան:

Հիմք ընդունելով եկեղեցու ցածր բեմը, զարդաքանդակների առնչությունները Տայքի հայ քաղկեդոնական եկեղեցիների հետ, Ժ դարի կեսից Բյուզանդիայի կազմի մեջ մտնելը՝ գալիս ենք այն եզրակացության, որ Գյավրենջիի վեցխորան եկեղեցին Ժ-ԺԱ դարերի հայ քաղկեդոնական կառույց է:

Նկար *19*. Օշկվանքի եկեղեցու սյան խոյակը (լուս.՝ Ժ-Կ. և Շ. Հոթելիեների, 2006 թ.)

Նկար *20*. Օշկվանքի եկեղեցու սյան խարիսխը (լուս.՝ Ժ-Կ. և Շ. Հոթելիեների, 2006 թ.)

ՇԱՀ ԱԲԱՍ Ա-ի ՀԱԿԱՕՍՄԱՆԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Շահէն Յովսէփեան

Իրանի Սպահան քաղաքի հայկական Նոր Ջուղայի թաղամասում՝ առաջնորդանիստ Սբ. Ամենափրկիչ վանքում է գտնուում Նոր Ջուղայի եւ ժամանակին[1] իրանահայ համայնքների Մայր տաճարը՝ Սբ. Յովսէփ Արեմաթացի եկեղեցին, որի կառուցումն աւելի քան 50 տարի արգելուած է եղել Շահ Աբաս Ա-ի հակաօսմանեան քաղաքականութեան հետեւանքով:

ԺԶ դարից սկսած՝ շուրջ 220 տարի տեւած թուրք-պարսկական պատերազմների հիմնական թատերաբեմը Հայկական լեռնաշխարհն էր:

Շահ Աբաս Ա Սեֆեան (1587-1629) թագաւորը, նպատակ ունենալով վերականգնելու այն տարածքները, որ կորցրել էր Շահ Իսմայիլ Ա-ն (1501-1524)՝ օսմանեան բանակներից պարտութիւն կրելով Չալդրանի ճակատամարտում 1514 թւականի օգոստոսի 23-ին, խախտելով հաշտութեան դաշինքը, 1603 թ. մեծ արշաւանք է սկսում դէպի Հայաստան եւ Վրաստան: Շահ Աբասը սկսում է նահանջել, երբ օսմանեան գլխաւոր բանակը հասնում է Հայաստան: Որպէսզի թոյլ չտայ, որ օսմանեան բանակն անցնի Արաքս գետը, գործադրում է տարածքներն ամայացնելու քաղաքականութիւնը՝ բռնի գաղթեցնելով հատկապես Նախիջեւանի եւ Արարատեան դաշտի բնակչութեանը դէպի Պարսկաստանի խորքերը:

Արաքս գետի ափին գտնուող Հին Ջուղայի բնակչութեան հետ Երեւան, Կարս, Նախիջեւան եւ Թաւրիզ քաղաքների հայ արհեստաւորներին եւ վաճառականներին բնակեցնում է Սպահան մայրաքաղաքից հոսող Զայենդէ-ռուդ գետի հարաւային ափերին: Իսկ եօթը տարի յետոյ, նպատակ ունենալով հայերին մէկընդմիշտ պահել մայրաքաղաքում, նրանց է յանձնում գետի եւ Սոֆա լեռան միջեւ ընկած 223 հեկտար[2] տարածքը, որտեղ էլ հայերը հիմնում են Նոր Ջուղա քաղաքը[3]:

Շահ Աբասը նպատակ ունէր ոչ միայն պարտութեան մատնել Օսմանեան կայսրութեանը, այլեւ

Սբ. Յովսէփ Արեմաթացի եկեղեցին հիւսիս-արեւմուտքից (լուս.՝ հոդ-ւածագրի)

ցանկանում էր ամբողջովին ոչնչացնել նրան, ուստի նպատակն իրագործելու համար դաշնակիցների կարիք ունէր:

Չկարողանալով տարածաշրջանում դաշնակից գտնել՝ ուշադրութիւնը սեւեռում է դէպի Եւրոպա եւ ըստ այդմ՝ մշակում երկարատեւ մի ծրագիր:

Եւրոպացիներին սիրաշահելու համար ԺԷ դարի սկզբից թոյլ է տալիս, որ կաթոլիկ քարոզիչներն իրենց աշխատանքը սկսեն ոչ մուսուլմանական շրջաններում[4], իսկ նպատակին աւելի արագ հասնելու համար 1614 թւականին մի հրաման է արձակում, ըստ որի՝ պիտի քանդէին Սբ. Էջմիածնի Մայր տաճարը և քարերը տեղափոխելով Սպահան՝ Նոր Ջուղայի արեւելքում գտնուող Բաղ-է-Զերեշք վայրում[5] վերակառուցէին սոյն եկեղեցին: Դրանից յետոյ այն պիտի յանձնէին Հռոմի պապի ներկայացուցչին, որտեղ նա պիտի զբաղուէր երկրի քրիստոնեայների (մեծ մասը հայ էր) կրօնական գործերով:

Շահ Աբաս Ա-ի՝ հիջրի 1023 (1614 թ.) թւակիր հրամանի[6] մի մասում գրուած է հետեւեալը. «...ցանկանում եմ մայրաքաղաքում քրիստոնեայ ժողովրդի համար մի շքեղ եւ հոյակապ եկեղեցի կառուցել, որը լինի նրանց տաճարը, եւ քրիստոնեայ ժողովուրդը, ըստ իր հաւատքի, երկրպագութիւն կատարի: Ուստի մարդ կուղարկեմ Սուրբ պապի մօտ, որ քահանայ կամ քրիստոնեայ ժողովրդի ղե-

1 Մինչեւ 1945 թ. Իրանում եղել է Էջմիածնի կաթողիկոսութեան ենթակայ երկու թեմ՝ Ատրպատականի եւ Նոր Ջուղայի, իսկ սոյն թւականից յետոյ Իրանի Թեհրանի հայ համայնքը, Նոր Ջուղայի թեմից անջատուելով, կազմել է իր թեմը: Առաջին թեմակալն է եղել Էջմիածնի կաթողիկոսութեան կողմից նշանակուած Վահան եպիսկոպոս Կոստանդեանը:

2 **Ghougassian V.**, The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century, Pennsylvania, 1998, p. 35.

3 **Տէր-Յովհաննեան Յ.**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Բ, Նոր Ջուղա, 1881, էջ 1:

4 **Ghougassian V.**, p. 84.

5 Վայրը ճշտուել է ըստ Շահ Աբաս Ա-ի՝ հիջրի 1023 թւականի հրամանի:

6 Հրամանի ամբողջական թարգմանութիւնն անգլերէնով տե՛ս **Ghougassian V.**, p. 204-205.

կավարներից մեկը գնա Սպահան մայրաքաղաք եւ նրա եկեղեցում երկրպագութիւն կատարի, բոլոր քրիստոնեայներին երկրպագութեան եւ հնազանդութեան քարոզ կարդա, որից մենք եւս մեր նպաստը կը ստանանք: Նկատի ունենալով, որ մի քանի օրհնւած քարեր կան Երեւանի Ուչ Քիլիսայում[7], եւ այն շենքն ամբողջովին աւերւած է եւ արժանի չէ նորոգման, իսկ նրա քահանան եւս այնտեղ թաղւած մարգարէների ոսկորները հանել ու վաճառել է Նեստորականներին ու Թարսաներին[8], որի պատճառով էլ կորցրել է իր սրբութիւնը ու պատիւը, ուստի հրամայում եմ նրա քարերը հանել այնտեղից եւ ուղարկել Սպահան մայրաքաղաք, որտեղ կը կառուցի շքեղ եկեղեցի...»:

Էջմիածնի Մայր տաճարը, սակայն, ինչո՞ւ պիտի տեղափոխւեր Սպահան, մինչդեռ առանց այդ քարերի էլ Շահ Աբասը կարող էր իր մայրաքաղաքում հոյակապ մի եկեղեցի կառուցել: Նա քաջատեղեակ էր, որ Էջմիածնի Մայր տաճարը հայերի համար սուրբ վայր էր, որի մասին իր հրամանում այսպէս է յիշատակել. «...մի քանի օրհնւած քարեր կան Երեւանի Ուչ քիլիսայում...», եւ հրամանի շարունակութեան մէջ այդ մօտեցումն աւելի է շեշտում՝ ասելով. «...երբ քարերն այստեղ կը բերեն, բոլոր քրիստոնեայներին կը հաւաքէք, որոնք խոնարհ ու յարգալից կը գնան դիմաւորելու...»:

Նա շատ լաւ էր հասկանում հայերի մեծ դերն Իրանի միջազգային վաճառականութեան, արուեստի եւ արհեստի, անգամ գիւղատնտեսութեան բնագաւառում եւ չէր ցանկանում՝ նրանք վերադառնան իրենց հայրենիք, ուստի Սբ. Էջմիածնի Մայր տաճարը տեղափոխելով Սպահան՝ ցանկանում էր թէ՛ հայերին կապել իրենց նոր գաղթօջախի հետ եւ թէ՛ իրականացնել իր ծրագիրը Հռոմի պապի մօտ:

Իսկ որպես Սբ. Էջմիածնի Մայր Տաճարը քանդելու պատրւակ՝ իր հրամանում շեշտում է, որ կաթողիկոսը եկեղեցուց հանել եւ վաճառել է սուրբ մասունքները Նեստորականներին եւ այլ քրիստոնեայներին, ուստի եկեղեցին կորցրել է իր սուրբ յատկութիւնը:

Շահ Աբասի ծրագիրն իրականանալու դէպքում նախ ամբողջովին կաւերւեր Էջմիածնի Մայր տաճարը, ապա իրանահայերը պարտադիր պիտի ընդունէին կաթոլիկ դաւանանքը, որից յետոյ այն կը տարածւեր Իրանի հսկողութեան տակ գտնւող Արեւելեան Հայաստանում, եւ այսպիսով՝ Հայ Առաքելական եկեղեցին կը կորցնէր իր անկախութիւնը եւ կը դառնար կաթոլիկ եկեղեցու ենթակայ կառոյց:

Բայց Շահ Աբասին չէին հետաքրքրում դաւանաբանական խնդիրները, եւ նրա հրամանի դրդապատճառը զուտ քաղաքական էր: Նպատակին



Շահ Աբաս Ա-ի՝ հիջրի 1023 թւականի (1614 թ.) հրամանը (լուս.՝ հոդւածագրի)

հասնելու համար նա անգամ թոյլ չէր տալիս՝ Նոր Ջուղայի հայերն իրենց առաջնորդանիստ Սբ. Ամենափրկիչ վանքում պատշաճ մի եկեղեցի կառուցեն:

Շահ Աբասը, ընդդէմ Օսմանեան կայսրութեան, եւրոպական պետութիւններն իր հետ միաւորելու համար սկսում է քաղաքական ու տնտեսական լայն կապեր հաստատել նրանց հետ[9], իսկ Հռոմի պապի համագործակցութիւնը ստանալու համար թոյլ է տալիս՝ կաթոլիկ քարոզիչներն ազատ գործունէութիւն ծաւալեն ոչ մուսուլմանական, այսինքն՝ Իրանի հայկական, զրադաշտական, ասորական եւ հրեական համայնքներում: Այն մեծ սիրով է ընդունւում Հռոմի պապի կողմից, եւ Սպահան գոր-

7 Օտարներն այդպէս են անուանել Էջմիածնի վանքը՝ նկատի ունենալով վանքը և Հռիփսիմէ ու Գայանէ եկեղեցիները:

8 Իրանի մուսուլմանները քրիստոնեայներին անուանում էին թարսա, այսինքն՝ վախեցած:

9 **علی دهباشی**، سفرنامه برادران شرلی، تهران، ۱۳۸۶، ۱۶۱.

ծուղած պատուիրակութիւնների մէջ մաս էին կազմում նաեւ քարոզիչները: Պապի՝ Սպահան ժամանած ամենավստահելի գործակալներից էին Ռոբերտ եւ Անտուան Շերլի[10] եղբայրները:

1608 թ. փետրուար ամսին Շահ Աբասի լիազոր դեսպան Հոսէյն Ալի Բէյկը մի խումբ պալատականների եւ Ռոբերտ Շերլիի ընկերակցութեամբ մեկնում է Հռոմի պապի մօտ՝ Օսմանեան կայսրութեան դէմ պատերազմ սկսելու հարկ եղած բանակցութիւնները վարելու համար: 1609 թ. սեպտեմբերի 28-ին պատուիրակութիւնը հանդիպում է Հռոմի պապ Պողոս V-ին (1605-1621): Ռ. Շերլին, փոխանցելով Շահ Աբասի պատգամը, տեղեկացնում է, որ Հռոմի պապը կարող է նաեւ իր հոգեւորականներին[11] ուղարկել Հայաստանի երեք գլխաւոր եկեղեցիները[12]: Առաջարկութիւնն ընդունւում է Պողոս V-ի կողմից[13]:

Պատուիրակութիւնը հանդիպում է նաեւ Եւրոպայի ամենահզոր գահակալներից մէկին՝ Իսպանիայի թագաւոր Ֆիլիպ III-ին (1578-1621): Վերջինս մի նամակով Շահ Աբասին խոստանում է, որ, եթէ Հռոմի պապը պատերազմի հրաման արձակի, ինքը կարշաւի Օսմանեան կայսրութեան վրայ[14], իսկ շահից պահանջում է պորտուգալացիներին հեռացնել Պարսից ծոցից եւ Իսպանիային[15] յանձնել նրանց ամրոցները, Գամբրուն նաւահանգիստը[16] եւ Բահրէյն կղզին:

Հռոմի պապը, ինչպէս նաեւ եւրոպական պետութիւնները խոստումներից այն կողմ չեն անցնում եւ սահմանափակւում են միայն վաճառականներ ու քարոզիչներ ուղարկելով, ուստի Շահ Աբասը 1624 թ. Նադդ Ալի Բէյկին եւ Մուսա Բէյկին՝ որպէս լիազոր դեսպաններ, ուղարկում է Եւրոպա՝ յիշեցնելու իրենց պայմանաւորուածութիւնը: Պարսից շահը զուր յոյսեր էր կապել Հռոմի պապի եւ եւրոպական պետութիւնների հետ, մինչդեռ նրանք ոչ մի քայլ չեն ձեռնարկում այդ կապակցութեամբ. ԺԶ դարից սկսւում են Իրանա-օսմանական երկարատեւ պատերազմները, եւ Օսմանեան կայսրութիւնը, Արեւելքում զբաղուած լինելով, նւազ վտանգ էր ներկայացնում Եւրոպայի համար: Ի դեպ, 1683 թ. սեպտեմբերի 11-ին Վիեննայի ճակատամարտի հաղթանակով վերջ է դրվում Օսմանեան կայսրութեան՝ դէպի Եւրոպա արշաւանքներին:

Բանակցութիւնների տարիներին Ռոբերտ Շերլիի եւ նրա կնոջ անմիջական հովանաւորութեամբ, որոնք վայելում էին Շահ Աբասի վստահութիւնը, Նոր Ջուղայում քարոզչական մեծ աշխատանք են սկսում կաթոլիկ եկեղեցու կարմելիտ հայրերը[17], որոնց յաջողւում է Նոր Ջուղայում կառուցել Սբ. Աւետիք եկեղեցին[18]: Իսկ տեղի Հայ առաքելական եկեղեցու առաջնորդները[19] հայ խոջաների օգնութեամբ փորձում էին կասեցնել կաթոլիկ քարոզիչների գործունէութիւնը, որոնց հովանաւորում էր արքունիքը: Այս ամէնի հետեւանքով երկու եկեղեցիների հետեւորդների մէջ անախորժ դեպքեր էին տեղի ունենում:

Չնայած հայերը, հաստատւելով Սպահանում, Շահ Աբասի թոյլտուութեամբ կառուցել էին մի քանի շքեղ եկեղեցիներ[20], բայց թագաւորի հրամանը եւ կաթոլիկ քարոզիչների գործունէութիւնն արգելք էին դարձել Նոր Ջուղայում կառուցելու Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդանիստ Մայր տաճարը:

Պապ Ուրբանոս VIII-ը (1623-1644) կաթոլիկ եկեղեցու նպատակների իրականացումն արագացնելու յոյսով (այն է՝ Շահ Աբասի հրամանով Հայոց եկեղեցին վերջնականապէս առնել Հռոմի պապի հսկողութեան ներքոյ) Իրան է ուղարկում Կապուչին[21] աղանդից երկու հոգեւորականների՝ Գաբրիէլին[22] եւ Պասիֆիկին[23], որոնք 1628 թ. հասնում են Ղազին քաղաք: Շահ Աբասի հրամանով Պասիֆիկը վերադառնում է Հռոմի պապի մօտ՝ յիշեցնելու նրա խոստումը, իսկ միւսը Նոր Ջուղայում սկսում է իր գործունէութիւնը: Այն աւելի է սրում դաւանաբանական խնդիրներն իրանահայ համայնքում: Դրանք սկսում են մեղմանալ միայն 1636 թ., երբ Պասիֆիկը վերադառնում է Ֆրանսիա[24]:

Շահ Աբասի հրամանը եւ Հռոմի պապին տուած խոստումները մեծ պատուհաս էին դարձել Իրանի հայ համայնքի համար: Կար նաեւ այն վտանգը, որ դրանք իրականանալու դէպքում թագաւորը մի նոր հրամանով ամբողջ Արեւելեան Հայաստանի հայկական եկեղեցին կյանձներ Հռոմի պապին: Ուստի Նոր Ջուղայի հայ համայնքը հոգեւորականների եւ խոջաների գլխաւորութեամբ ջանում էր կասեցնել

10 Անտուան (1565-1635) եւ Ռոբերտ (1581-1628) եղբայրներն անգլիացի ճանապարհորդներ էին (Anthony եւ Robert Shirley կամ Sherley):

11 **Ալի Դէհրամշի**, նշվ. աշխ., էջ 161:

12 Անունները չեն յիշատակւել: Դրանք Էջմիածնում գտնւող եկեղեցիներն են, որտեղ ամփոփուած են երեք սուրբ կոյսերը:

13 **Ghougassian V.**, p. 131.

14 **Ալի Դէհրամշի**, նշվ. աշխ., էջ 175:

15 Նշվ. աշխ., էջ 179: Իսպանիայի պահանջը չի կատարւում, եւ Շահ Աբասն անգլիական նաւատորմի օգնութեամբ է Պարսից ծոցից հեռացնում պորտուգալացիներին:

16 Ներկայիս Բանդար Աբասն է:

17 Կարմելիտ ուղղութիւնը (Carmelites) հիմնւել է 1214 թ. եւ Իրանում իր գործունէութիւնը սկսել 1607 թ.:

18 **Rudi Matthee**, The Safavids under Western Eyes: Seventeenth-Century European Travelers to Iran, "Journal of Early Modern History", volume 13, issue 2, 2009, p. 138.

19 Մովսես եպիսկոպոս (1605-1620), Խաչատուր Կեսարացի (1620-1646), Յակոբ Ջուղայեցի (1646-1655):

20 Շահ Աբաս Ա-ի ժամանակ կառուցւում են Սբ. Յակոբ (1607), Սբ. Սարգիս (1609), Սբ. Գեւորգ եւ Սբ. Նազարէթ (1611), Սբ. Գրիգոր (1612), Սբ. Ստեփանոս (1614), Սբ. Յովհաննէս (1621), Սբ. Կատարինէ (1623) եւ Սբ. Բեթղեհեմ (1627) եկեղեցիները:

21 Քրիստոնեական Կապուչին ուղղութիւնը հիմնւել է 1520 թ.:

22 Father Gabriel of Paris (1595-1641).

23 Father Pacifique of Provins (1588-1648).

24 www.iranicaonline.org

սոյն հրամանը, որի հետեւանքով հասարակութեան մէջ տեղի էին ունենում դաւանաբանական վեճեր եւ բախումներ, իսկ պալատում մրցակցութիւն էր հայ խոջաների եւ եւրոպացի ներկայացուցիչների միջեւ[25]:

Արքունիքում մեծ հեղինակութիւն ունէր հայ վաճառական Խոջա Նազար Վելիջանեանը[26]: Չնայած նրան չէր յաջողուել բեկանել թագաւորի հրամանը, բայց նա կարողացաւ դիմադրել եւրոպացի վաճառականների եւ Հռոմի պապի ներկայացուցիչների ճնշումներին եւ թոյլ չտուեց, որ գործը քարոզչական աշխատանքից անցնի հրամանի իրագործմանը: Իհարկէ, այս ամէնին օգնութեան հասան Էջմիածնի Մայր տաճարի տեղափոխման ծրագրի մեծ ծախսերը:

Չնայած Մայր տաճարն աւերուել էր, եւ նրա քարերի մի մասը տեղափոխուել էր Իրան, որոնցից 15 կտորը մինչ օրս, որպէս սրբութիւն, պահպանւում է Նոր Ջուղայի Սբ. Գեւորգ եկեղեցու գաւթում, բայց դաղարում է նրա՝ հիմնայատակ քանդելը:

Ուրբանոս VIII պապը, Շահ Աբասի մահից յետոյ նրա ժառանգին յիշեցնելով հրամանի մասին, 1640 թ. մի նամակ է ուղարկում Շահ Սաֆիին (1629-1642)[27]: Սակայն շահը, հաշուի առնելով, որ Հռոմի պապը չէր կատարել տուած խոստումները, չի ընդառաջում: Սրանից օգտուելով՝ հայ համայնքը դիմում է թագաւորին՝ բեկանելու Շահ Աբասի հրամանը, որը, ի յարգանս շահի, չի ընդունում:

Երբ գահ է բարձրանում Շահ Աբաս Բ-ն (1642-1666), Նոր Ջուղայի հայ համայնքը նորեն դիմում է թագաւորին՝ չեղեալ յայտարարելու Շահ Աբաս Ա-ի հրամանը, ինչպէս նաեւ արգելելու կաթոլիկ քարոզիչների գործունէութիւնը հայ համայնքում: Թագաւորը, ի յարգանս Հռոմի պապի, չի ընդունում[28]: Սակայն նրա օրօք տեղի է ունենում հայ համայնքի համար կարեւոր երկու իրադարձութիւն:

Նրա համար պարզ էր, որ եւրոպացիները չեն կատարելու իրենց խոստումները, ուստի առանց բեկանելու իր պապի հրամանը՝ հայ խոջաների դիմումների շնորհիւ 1654 թ. նոր հրաման է արձակում՝ կասեցնել Հռոմի պապի համար կառուցելիք կաթոլիկ եկեղեցու որոշումը, ինչպէս նաեւ դադարեցնել արքունիքի հովանաւորութիւնը կաթոլիկ քարոզիչներին:

Շահ Աբաս Բ-ի՝ հիջրի 1064 (1654 թ.) թւակիր հրամանում[29] գրուած է հետեւեալը. «...եւ այսպէս, մայրաքաղաքում բնակուած հայ ռամիկները տեղեկացրել են, որ սոյն եկեղեցու կառուցումը նրանց մէջ երկպառակութիւն է առաջացնում, որի պատճառով հեռանում են օտար երկրներ, ուստի եկեղեցու կառուցումն այս ժամանակ արգելում ենք...»:



Շահ Աբաս Բ-ի՝ հիջրի 1064 թվականի (1654 թ.) հրամանը (լուս.՝ հոդուածագրի)

Միւս կարեւոր իրադարձութիւնը թագաւորի՝ 1655 թ. արձակած հրամանն էր, ըստ որի՝ Սպահանում բնակւող հայերը պարտադիր լքում են իրենց տներն ու վեց եկեղեցիները եւ տեղափոխւում Նոր Ջուղայի տարածք[30]:

Կաթոլիկ եկեղեցու կառուցման որոշման դադարեցնելը Նոր Ջուղայի հայ համայնքի համար լաւագոյն առիթ էր հիմնելու իրենց առաջնորդանիստ Մայր տաճարը: Առաջնորդ Դաւիթ եպիսկոպոսի նախաձեռնութեամբ եւ Նոր Ջուղայի բնակչութեան նիւթական օժանդակութեամբ Մէյդան-է-Բոզորգ[31] թաղամասում գտնւող Սբ. Ամէնափրկիչ վանքի անշուք եւ փոքր եկեղեցին քանդում են եւ 1655 թ. տեղում սկսում են կառուցել Սբ. Յովսէփ Արեմաթացի շքեղ եկեղեցին, որի շինարարութիւնն աւարտւում է 1664 թ.:

Շինարարական արձանագրութիւնը զետեղված է արեւմտեան մուտքի վերնամասում.

Հիմնարկեցաւ Ամենափրկչի վանքս ի թվ(ի)ն ՌՃԴ (1655) ի թ(ա)գ(աւո)ր(ո)ւթե(ան) Երկրորդ

25 **Ghougassian V.**, p. 128.

26 Նոր Ջուղայի կառավարիչ եւ Սբ. Բեթղեհեմ եկեղեցու կառուցողը:

27 **Ghougassian V.**, p. 137.

28 **Roger M. Savory**, Relation Between the Safavid State and its Non-Muslim Minorities, "Islam and Christian-Muslim relations", volume 14, Issue 4, 2003, p. 443.

29 Հրամանի ամբողջական թարգմանութիւնն անգլերէնով տե՛ս **Ghougassian V.**, p. 278.

30 **Սինասեան Լ.**, Նոր Ջուղայի եկեղեցիները, Նոր Ջուղա, 1992, էջ 9-10:

31 Մեծ հրապարակ:

Շահ (Ա)բ(ա)սին եւ կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սո(ւ)թե(ան) տ(եառ)ն Փիլիպոսի ի ձեռն ս(ուր)ք ուխտիս ա-ռ(ա)ջն(ո)րդ Դաւիթ վ(ա)ղղ(ա)պ(ե)տի կամ(ա)կ-ց(ո)ւթ(եամ)ք | եւ տրօք Ջուղ(ա)յու ժողովրդ(ա)ց եւ աւարտեց(ա)ւ ՌՃԺԳ (1664) ամի: Որքան պ(ա)-տ(ա)ղագ եւ պ(ա)շտօնք, որ ի սմայ կատարի՝ լիցի մասն ե(ւ) ի բաժին հ(ա)մ(ա)կ կենդ(ա)նե(ա)ց եւ ննջե(ցե)լոց:

Հրատ. **Տէր-Յովհաննեան Յ.**, նշվ. աշխ., էջ 3:

Սբ. Յովսէփ Արեմաթացի եկեղեցու արեւմտեան մուտքը և շինարարական արձանագրութիւնը (լուս.՝ Ա. Հախնազարեանի, 1975 թ.)

ՀԱՅԱԶԳԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ ԲԱՔՎԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԴԻՄԱԳԾԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Նարեկ Սարգսյան
ՀՀ վաստակավոր ճարտարապետ

Այս նյութը ներկայացնելու դրդապատճառը 2021 թ. սկզբին լրատվական կայքերում տեղ գտած Շուշիում Ադրբեջանի նախագահի կողմից ծագումով ադրբեջանցի մշակութային գործիչների՝ գեղագիտական կասկածելի որակի արձանների բացման արարողությունն էր: Ցավոք, նշված փաստը չլուսաբանվեց, և հանրությունն անտեղյակ մնաց թե՛ այդ դեմքերի ինքնությանը և թե՛ Շուշիի մշակութային կենսագրությանը:

Սակայն կատարվածն ակամայից հուշում է, որ Ադրբեջանի նախագահն օգնության կարիք ունի շուշիաբնակ իր հայրենակիցներից նշանավոր դեմքեր փնտրելու և պեղելու հարցում:

Հայ անվանի կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի որդին՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Էդմոնդ Տիգրանյանը (1911-1994), հրատարակել է «Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում. XIX դարի վերջ - XX դարի սկիզբ» (Երևան, 2000) աշխատությունը: Ուսումնառությունը ստանալով Պետերբուրգում՝ աշխատել է Թբիլիսիում՝ ականավոր ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելովի արվեստանոցում, այնուհետև 1940 թ.-ից՝ Երևանում: Էդմոնդ Տիգրանյանը Երևանում և Թբիլիսիում կառուցված նշանակալի և հասարակական մի շարք շենքերի (Երևանի երկաթուղային կայարանի, Պետական համալսարանի, Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի համալիրների, Արևմտյան օդանավակայանի և այլն), ինչպես նաև 100-ից ավելի գիտական աշխատությունների հեղինակ է:

Ես պատիվ եմ ունեցել աշխատելու նրա հետ, լինելու նրա մտերիմ սաներից մեկը, ինչպես նաև մի քանի գործընկերների հետ միասին օժանդակելու նրան այդ նյութերի հավաքման, մշակման և հետագայում նաև հրատարակման հարցում, ինչի մասին հեղինակը հիշատակում է իր գրքում:

Նշված գիտական աշխատության մեջ առանձին գլխով քննության են ենթարկվում XIX-XX դարերի Բաքվի՝ քաղաքաշինական կերպարի ձևավորմանն առնչվող խնդիրները: Միևնույն ժամանակ այն արժևորվում է հիշյալ տարածաշրջանի հայոց կյանքի տարբեր կողմերը դիտարկելու տեսանկյունից: Կարևոր է նաև նշել, որ Բաքվի զարգացմանը նպաստել են հայազգի մեծահարուստներ Ա. Մանթաշյանի, Պ. Տեր-Ղուկասյանի, Մ. Արամյանցի, Բուդաղյան եղբայրների, Ադամյանների և այլոց դրամական ահռելի ներդրումները:

Ստորև ներկայացնում ենք հայազգի, այդ թվում՝ նաև ծնունդով շուշեցի (Ռուսաստանում մասնագիտական կրթություն ստացած) մի շարք ճարտարապետների, որոնց ստեղծագործական մտքի և կարողության շնորհիվ Բաքուն գավառական քաղաքից վերածվել է Անդրկովկասի վարչական և արդյունաբերական խոշոր կենտրոնի:

1. ***Գաբրիել Միքայելի Տեր-Միքելյան*** (Տեր-Միքելով, 16.04.1874, Ստավրոպոլ-14.01.1949, Թբիլիսի). սերում է Արցախից: 1893-1899 թվականներին սովորել և ավարտել է Պետերբուրգի Քաղաքացիական ճարտարապետների ինստիտուտը՝ ստանալով քաղաքացիական ճարտարագետ-ճարտարապետի որակավորում: 1899 թ. մեկնում է Բաքու, որտեղ աշխատում է մինչև 1912 թ.:

Ճարտարապետի հեղինակած աշխատանքներից են.

- Բաքվի մեծահարուստ Յուզբաշյանի կառուցած երկհարկանի բնակելի առանձնատունը (1900-1901 թթ.), որտեղ հաշվի են առնված հայկական կենցաղի առանձնահատկություններն Անդրկովկաս մուտք գործած բնակարանաշինության եվրոպականացման ձգտումների զուգակցմամբ.
- Թիֆլիսի առևտրային դրամատան՝ Բաքվի բաժանմունքի շենքը (1901 թ.) ճարտարապետ Ա. Կալգինի հետ համատեղ.
- Ադամյան եղբայրների բնակելի շենքը (1908-1909 թթ.) Բարաթինսկայա[1] փողոցում.
- Թաղիև եղբայրների եկամտաբեր տները (1909-1911 թթ.)
- Սաղիխովների եկամտաբեր բնակելի տունը (1909-1912 թթ.), որի ճարտարապետական լուծումները հիմք դարձան հետագայում Ադրբեջանի խորհրդային շրջանի ճարտարապետության կազմավորման ժամանակ.

1 Տեքստում հիշատակված փողոցների անվանումները վերաբերում են նախախորհրդային շրջանին:

Լուսանկար *1-2.* **Բաքվի հասարակական հավաքույթի ամառային ակումբը.** *3.* **Սադիխովների եկամտաբեր բնակելի տունը.** *4.* **Ֆիզիոթերապևտիկ ինստիտուտի համակառույցը.** *5.* **Թաղիև եղբայրների եկամտաբեր բնակելի տունը.** *6.* **Թիֆլիսի առևտրային դրամատան՝ Բաքվի բաժանմունքի շենքը.** *7.* **Պետական դրամատան աշխատակիցների բնակելի տունը**

- Առևտրային ուսումնարանի շենքը (1904 թ.).
- Բաքվի հասարակական հավաքույթի ամառային ակումբը (1910-1912 թթ.), այժմ՝ Ադրբեջանի ֆիլհարմոնիայի շենքը.
- Պետական դրամատան համալիրը և դրամատան աշխատակիցների բնակելի տունը (1926 թ.).
- Պետհրատի շենքը.
- Ֆիզիոթերապևտիկ ինստիտուտի համակառույցը (1928-1935 թթ.)՝ պոլիկլինիկա, ջրաբուժարան, հիվանդանոց: Այն 1937 թ. Փարիզի միջազգային ցուցահանդեսում արժանացել է Մեծ մրցանակի («Գրան պրի») և ոսկե մեդալի[2]:

2. ***Վարդան Ստեփանի Սարգսյան*** (08.03.1875, Շուշի-29.03.1955, Բաքու). Ծննդավայրում՝ Շուշի քաղաքում ստանալով միջնակարգ կրթություն՝ 1894 թ. ընդունվում է Պետերբուրգի Քաղաքացիական ճարտարապետների ինստիտուտի ճարտարապետական բաժինը, որն ավարտում է 1901 թ.՝ ձեռք բերելով քաղաքացիական ճարտարապետի մասնագիտություն: Հետո մեկնում է

2 **Տիգրանյան Է.**, Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում. XIX դարի վերջ - XX դարի սկիզբ, Երևան, 2000, էջ 73-101:

Լուսանկար *1-2.* **Միրզաբեկյան եղբայրների յոթհարկանի եկամտաբեր տունը.** *3-4.* **Տիգրան Մելիքովի առանձնատունը.** *5.* **Ադրբեջանի հանքարդյունաբերողների միության տունը.** *6.* **Չորսհարկանի բնակելի տուն Կրասնովոդսկայա փողոցում.** *7.* **Համբարձում Մելիքովի տունը**

Մոսկվա՝ արվեստանոցներից մեկում բնակելի և հասարակական շենքերի նախագծման աշխատանքներին մասնակցելու նպատակով: 1907 թ. տեղափոխվում է Բաքու և որպես արդեն փորձված մասնագետ՝ ստանում է բազմաթիվ պատվերներ: Այստեղ է սկսվում նրա նախագծային գործունեության առաջին՝ նախահեղափոխական փուլը (1907-1917 թթ.): Ճարտարապետի նախագծերով կառուցված առաջին իսկ շենքերը գրավում են Բաքվի գործարար շրջանների ուշադրությունը: Այն որոշիչ դեր է ունենում՝ նպաստելով պետական պատվերների ավելացմանը:

Վ. Սարգսյանի հեղինակած շենքերից են.

- Չորսհարկանի բնակելի տունը (1908 թ.) Կրասնովոդսկայա փողոցի անկյունում.
- Միրզաբեկյան եղբայրների յոթհարկանի եկամտաբեր տունը (1908 թ.) Բաքվի կենտրոնական՝ Նիկոլաևսկայա փողոցում: Այն ճարտարապետի լավագույն ստեղծագործություններից է՝ Նիկոլաևսկայա փողոցի կառուցապատման գեղարվեստական կերպարի կազմավորման շեշտերից մեկը.
- Միրզաբեկյան եղբայրների քառահարկ շենքը (1911 թ.) ծովափնյա պուրակի հարևանությամբ գտնվող հրապարակում.
- Տիգրան Մելիքովի առանձնատունը (Մոլոկանսկայա փողոց, 1922 թ.-ից՝ Ադրբեջանի հանքարդյունաբերողների միության տուն, այնուհետև՝ Պիոներների պալատ)՝ կառուցված նեոկլասիցիզմի ոճով.
- Համբարձում Մելիքովի բնակելի տունը (1910-1915 թթ., Մոլոկանսկայա փողոց).
- Նավթարդյունաբերողների հանգստի տան շենքը (1930 թ.) Մարդակյան ավանում.
- Կոմպոզիտորների տունը.

- Արական գիմնազիայի եռահարկ շենքը (Կրասնովոդսկայա փող.), բնակելի և հասարակական նշանակության մի շարք այլ շենքեր:

- Մասնակցել է «Իսմայիլի» շենքի վերակառուցման աշխատանքներին (այրվել է 1918 թ. մարտին)[3]:

3. ***Նիկողայոս Գեորգի Բաև*** (12.09.1875, Աստրախան-1949 կամ 1950). տեղի գիմնազիան ավարտելուց հետո՝ 1896 թ., մեկնում է Պետերբուրգ և ընդունվում Քաղաքացիական ճարտարապետների ինստիտուտ, որն ավարտում է 1901 թ.: Որպես ճարտարագետ-ճարտարապետ՝ տեղափոխվում է Բաքու և սկսում զբաղվել մասնավոր գործունեությամբ: 1911-1918 թթ. Բաևը Բաքվի գլխավոր ճարտարապետն էր: Նրա նախագծերով կառուցվել են 100-ից ավելի շենքեր:

Ն. Բաևի հեղինակած աշխատանքներից են.

- Հյուսիսային դրամատան երկհարկանի շենքը՝ կառուցված մոդեռն ոճով.

- Մայիլյան եղբայրների պատվերով կառուցված Թատրոնի շենքը՝ 2110 հանդիսատեսի համար (1910-1911 թթ.), որը մինչ օրս էլ գործում է:

- Քաղաքային հիվանդանոցի համակառույցի վիրաբուժական բաժանմունքի մասնաշենքը (Մ. Նագիև-Սեմաշկոյի անվ. հիվանդանոց, 1914-1916 թթ.).

- Ծովափնյա համալիրը (1911-1914 թթ.)՝ լողավազաններով, բնակելի համարներով, առողջապահական և ժամանցային միջոցառումների համար նախատեսված շենքերով: 1950-ականներին քանդվել է.

- Ռուս-պարսկական տոնավաճառի համակառույցը (1925 թ.), որը ներքին բակերի շուրջը զետեղված բազմաթիվ մասնաշենքերի համակարգ է: Ելնելով դրա բովանդակությունից՝ ճակատային լուծումներում ճարտարապետն օգտագործել է Արևելքի մուսուլմանական ճարտարապետության ավանդույթները.

- Երկաթգծի «Սաբունչի» կայարանի շենքը (1925 թ.).

- Շերեմետևների և Սելիմհանովների եկամտաբեր տները.

- Բնակելի թաղամաս Արմենիքենդում և այլ շենքեր:

Բացի հասարակական խոշոր շենքերից՝ Ն. Բաևը կառուցել է նաև մի շարք բնակելի տներ, ինչպես նաև ուսումնական հաստատությունների շենքեր, ո-

Լուսանկար *1.* **Ծովափնյա լողավազանի համալիրը.** *2.* **Ախունդովի անվան Օպերայի և բալետի թատրոնը.** *3.* **Երկաթգծի «Սաբունչի» կայարանը.** *4.* **Ռուս-պարսկական տոնավաճառի համակառույցը.** *5.* **Հյուսիսային դրամատան երկհարկանի շենքը**

3 Նշվ. աշխ., էջ 197-209:

ռոնք մինչ օրս էլ զարդարում են հին Բաքվի թաղամասերը[4]:

4. ***Հովհաննես Մաթևոսի Քաջազնունի*** (Տեր-Հովհաննիսյան, 01.02.1868, Ախալքալաք-1938, Երևան). ծնվել է հոգևորականի ընտանիքում: 1887 թ. մեկնում է Պետերբուրգ և ընդունվում Քաղաքացիական ճարտարապետների ինստիտուտ, որը 1893 թ. ավարտում է գերազանցության դիպլոմով: 1893-1895 թվականներին աշխատում է Բաքվի նահանգային վարչության շինարարության բաժնում, 1899-1906 թթ.՝ Նավթարդյունաբերողների համագումարի խորհրդում՝ որպես ավագ ճարտարագետ:

1918 թվականին դառնում է Հայաստանի Առաջին հանրապետության առաջին վարչապետը:

Հ. Քաջազնունու հեղինակած աշխատանքներից են.

- Բաքվի նավթահանքերի շրջաններում (Բալախան, Բիբի-Էյբաթ, Սաբունչի) հիվանդանոցի շենքը, բնակելի տներ.

Բաքվի Սբ. Թադեոս և Սբ. Բարդուղիմեոս հայկական եկեղեցին

- Հյուրանոց Բալախան քաղաքատիպ ավանում.
- Բաքվի Սբ. Թադեոս և Բարդուղիմեոս հայկական եկեղեցին (1909 թ.), որի շինարարությունն ավարտել է Բանը: Քանդել են 1937 թ.: Հետագայում եկեղեցու խաչաձև հիմքերի վրա կառուցվել է Պետական կոնսերվատորիայի շենքը[5]:

5. ***Ֆրեյդուն Հակոբի Աղալյան*** (1876-1944). ծնվել է Շուշիում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Պետերբուրգի Քաղաքացիական ճարտարագետների կայսերական ինստիտուտի ճարտարապետական բաժինը, որն ավարտել է 1903 թ. և տեղափոխվել Բաքու: 1903-1911 թթ. Ֆ. Աղալյանը զբաղեցնում էր Բաքվի քաղաքային ճարտարագետի տեղակալի պաշտոնը: 1920 թ. Պոլիտեխնիկական ինստիտուտի առողջապահական տեխնոլոգիաների բաժնի վարիչն էր: 1917-1921 թթ. դասավանդել է Բաքվի արդյունաբերական տեխնիկումում և Պոլիտեխնիկական ինստիտուտում: 1903-1921 թվականներին Բաքվում և Կովկասի այլ քաղաքներում կառուցված մի շարք շենքերի հեղինակ է: 1921 թվականին Ֆ. Աղալյանը տեղափոխվում է Երևան: 1930-1936 թթ. գլխավորում էր Քանաքեռշինի ճարտարապետական բաժինը: Քանաքեռ հէկի և Երևանի մի շարք շենքերի հեղինակ է:

Բաքվում Ֆ. Աղալյանի հիմնական աշխատանքներն են.

- Բնակելի թաղամասի կառուցապատում Նագորնի շրջանում.
- Գանձապետարանի և գանձապետական պալատի շենքերը.
- Ծննդատան շենքը (այժմ՝ քաղաքային հիվանդանոց).
- Գիմնազիայի շենքը.
- Բանվորների տան շենքը.
- Երկաթուղային կամուրջ:

6. ***Աննա Սարգսի Օլթեցյան***. ծնվել է Բաքվում 1917 թ.: 1935 թվականին ընդունվել է տեղի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը, որը գերազանցությամբ ավարտել է 1941 թ.՝ ստանալով ճարտարապետ-ճարտարագետի որակավորում: Միաժամանակ սովորել է Գեղարվեստի դպրոցում: Ավարտել է 1945 թ.՝ ձեռք բերելով թատրոնի բեմանկարչի մասնագիտությունը: 1945-1990 թվականներին աշխատել է «Ազգոսպրոյեկտ» նախագծային ինստիտուտում՝ ակադեմիկոս Միքայել Ուսեյնովի արհեստանոցում: 1990 թվականին տեղափոխվել է Մոսկվա:

Աննա Օլթեցյանը Բաքվում և հանրապետության այլ քաղաքներում կառուցված բնակելի և հասարակական նշանակության բազմաթիվ շենքերի հեղինակ է: Նրա աշխատանքներից են.

- Վեցհարկանի բնակելի շենքեր Նեֆտյանիկների և Կիրովի պողոտաներում.
- Ադրբեջանի պետական կոնսերվատորիայի օպերային ստուդիայի շենքը.
- 500 տեղանոց հյուրանոցի շենք՝ Կասպից ծովի ափին՝ Նաբրան քաղաքում (նախագիծ).

Աննա Օլթեցյանը Մ. Ուսեյնովի համահեղինակությամբ նախագծել է մի շարք բնակելի և հասարակական շենքեր.

4 Նշվ. աշխ., էջ 210-222:
5 Նշվ. աշխ., էջ 236-241:

Լուսանկար *1-2*. Բնակելի շենքեր Նեֆտյանիկների պողոտայում. *3*. Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի շենքերի համալիրը

- Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի շենքերի համալիրը.
- Բնակելի շենքեր Նիզամի փողոցում և Լենինի հրապարակում.
- Արհմիությունների «Ափշերոն» (գտնվում է Լենինի հրապարակում) և «Ինտուրիստ-Ազերբայջան» հյուրանոցները:

Այստեղ հարկ ենք համարում նշել ծնունդով շուշեցի հայ մեծանուն այլ ճարտարապետների.

1. ***Սիմոն Տեր-Հակոբյանց***. Շուշիի ամենահայտնի ճարտարապետներից էր, բազմաթիվ շենքերի հեղինակ, որոնցից ամենանշանավորը Սբ. Ամենափրկիչ Ղազանչեցոց Հայ առաքելական եկեղեցին է (1868-1887 թթ.).

2. ***Ղազարոս Հակոբի Մարգսյան*** (18.03.1874-29.11.1960, Երևան). ճարտարապետական գործունեություն է ծավալել հիմնականում Թիֆլիսում, այնուհետև՝ Գյումրիում[6]:

3. ***Պողոս Ալեքսանդրի Զուրաբյան*** (27.01.1874-21.02.1942, Թիֆլիս). ճարտարապետական գործունեություն է ծավալել Մոսկվայում, ապա Թիֆլիսում և Երևանում[7]:

4. ***Քրիստափոր Բոգդանի Տեր-Մարգսյան*** (20.09.1875-30.04.1917, Թիֆլիս). ճարտարապետական գործունեություն է ծավալել Թիֆլիսում[8]:

5. ***Սամվել Առաքելի Սաֆարյան*** (1902-1969). ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, վաստակավոր ճարտարապետ, ԽՍՀՄ ճարտարապետական ակադեմիայի ակադեմիկոս: Հեղինակ է բազմաթիվ նշանակալի շենքերի, ինչպիսիք են՝ Հայկական ԽՍՀ տաղավարը Մոսկվայի Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում (1939 թ. Կ. Հալաբյանի հետ համատեղ), Հայկական ԽՍՀ Կառավարության երկրորդ տունը (ՀՀ արտաքին գործերի նախարարության նախկին շենք), Բժշկական և Գյուղատնտեսական ինստիտուտների շենքերը, ՀՀ առաջին շենքերի համակառույցը և մի շարք այլ կառույցներ ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ այլ քաղաքներում:

Հուսով եմ՝ Իլհամ Ալիևը, որի տիկինը՝ Մեհրիբան Ալիևան, դեռևս 2004 թվականից ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպանն է, վերոնշյալ հայազգի անվանի ճարտարապետների արձանները նույնպես կտեղադրի Շուշիում՝ որպես երկու ժողովուրդների միջև միջմշակութային երկխոսության ու համակեցության ներդրման առաջին քայլ:

Համոզված եմ նաև, որ նշված շարքը կլրացնեն մշակույթի, գիտական և քաղաքական ոլորտների մասնագետները՝ ներկայացնելով իրենց ասպարեզում Շուշիում ծնված հայ ժողովրդի մեծանուն զավակներին: Դրանով իսկ վերջ կդրվի վերացական և անիմաստ այն խոսակցություններին, թե ժողովուրդներից ով և որքանով է նպաստել ոչ միայն Շուշիի և Արցախի, այլ նաև ողջ Անդրկովկասի մշակութային, կրթական և գիտական զարգացմանը:

6 Նշվ. աշխ., էջ 126-147:
7 Նշվ. աշխ., էջ 157-182:
8 Նշվ. աշխ., էջ 148-156:

ԹԱՂՈՏ ԳՅՈՒՂԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Էմմա Աբրահամյան

Սույն հոդվածով ներկայացնում ենք Արցախի Հանրապետության՝ 2020 թ. հոկտեմբերի վերջերից Ադրբեջանի Հանրապետության հսկողության ներքո անցած Հադրութի շրջանի Թաղոտ գյուղի պատմաճարտարապետական հուշարձանները, որոնք ուսումնասիրել ենք երջանկահիշատակ Սամվել Կարապետյանի և քաղաքագետ Ալեքսանդր Քանանյանի հետ համատեղ դեռևս 2001 թ.:

Տեղադրություն. Թաղոտը գտնվում է Հադրութ քաղաքից 8 կմ հյուսիս-արևմուտք: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը 845 մ է:

Անվանում. գյուղանվան ծագմանը վերաբերող մեկնաբանություններից մեկի համաձայն՝ այն նախ կոչվել է Թեղուտ՝ նկատի ունենալով մերձակայքի թեղի ծառերի բազմաքանակությունը, ապա ժամանակի ընթացքում հնչյունափոխվելով՝ ստացել ներկայիս անունը[1]:

Հայտնի է եղել նաև Աթաղոտ, Թաղուտ անվանաձևերով:

Բնակչություն. ավանդաբար վկայվել է, որ թաղոտցիները սերում են 1703 թ. Սյունյաց աշխարհի Դարբաս գյուղից փոխադրված Գալուստի, Գրիգորի և Յաղուբի ընտանիքներից (տե՛ս արձանագրություն *ա*), սակայն գյուղի մերձակայքում պահպանվել են առնվազն ԺԲ դարից մեզ հասած հուշարձաններ:

Թաղոտի բնակչության թվաքանակին առնչվող ԺԹ-Ի դարերի վիճակագրական տվյալները փաստում են, որ այն իր մարդաշատությամբ գավառակի զուտ հայաբնակ մեծ գյուղերից էր:

տարեթիվ	տուն	արական	իգական	միասին
1841[2]	21	36	40	76
1886[3]	65	233	206	439
1889[4]	70	256	219	475
1893[5]	65			
1897[6]	61			

Տեսարան Թաղոտ գյուղից (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2018 թ.)

1901[7]		490	219	709
1907[8]				500
1909[9]		542	261	803
1912[10]		1053	804	1857
1914[11]				440
1922[12]	100	240	260	500
1987[13]	71			198
2018[14]	56			203

Պատմական հուշարձաններ. Թաղոտում և նրա մերձակայքում առկա են նյութական մշակույթի տարաբնույթ հուշարձաններ: Ներկայացնում ենք միայն նրանք (աղբյուր, բնակելի հին տներ, եկեղեցի, գերեզմանոց, ուխտատեղի), որոնք թվագրվում են՝ սկսած զարգացած միջնադարից և հասնում մինչև ԺԹ դարի վերջ: Դրանց քննությունը սկսում ենք գյուղամիջի բնակելի տներից: Հարկ է նշել, որ ստորև տրվող բոլոր արձանագրությունները, բացի երկուսից, հրատարակվում են առաջին անգամ: Ի դեպ, գյուղի վիմագրական ժառանգության ընդօրինակման կարևոր գործի առաջին նախաձեռնողն է Խաչիկ վրդ. Դաղյանը, որը դեռևս Ի դարի սկզբին ընթերցել է երեք վիմագիր (առ այսօր անտիպ էին):

1 **Մելքումյան Ս.**, Լեռնային Դարաբաղ, Երևան, 1990, էջ 269:
2 Հայաստանի ազգային դիվան (այսուհետ՝ ՀԱԴ), ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 45:
3 "Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа", Тифлис, 1888, с. 184-185.
4 **Բարխուտարեանց Մ.**, Արցախ, Բագու, 1895, էջ 73: Ի դեպ, նույն թվականին վերաբերող վավերագրերից մեկում բնակչության թիվը նշված է 388 շունչ, որից 225-ը՝ ար., իսկ 163-ը՝ իգ. (ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8583, թ. 43-44):
5 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 8889, թ. 157 շրջ.:
6 **Ա-Դօ**, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.), Երևան, 1907, էջ 172:
7 ՀԱԴ, ֆ. 56, ց. 14, գ. 205, թ. 238-239:
8 ՀԱԴ, ֆ. 56, ց. 18, գ. 764, թ. 239-240:
9 "Кавказский календарь на 1910 г.", Тифлис, 1909, с. 188.
10 ՀԱԴ, ֆ. 56, ց. 1, գ. 11608, թ. 326-327:
11 "Кавказский календарь на 1915 г.", Тифлис, с. 92.
12 ՀԱԴ, ֆ. 57, ց. 3, գ. 492, թ. 1-2: Տե՛ս նաև Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, Երեւան, 2001, էջ 759:
13 **Բալայան Վ.**, Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Երևան, 2020, էջ 202:
14 Նույն տեղում:

Բաղդասար Հայրապետյան-Ավագյանի հայրական տունը (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2016 թ.)

Բնակելի տներ

Թաղոտում պահպանվել են ԺԸ-ԺԹ դարերում կառուցված երկհարկանի մի քանի տներ[15], որոնք ունեն շինարարական արձանագրություններ: Ներկայացնում ենք դրանցից մի քանիսը (նախապես հրատարակված է եղել միայն համար *բ*).

ա Գյուղամիջում՝ թաղակապ տան որմին՝ երկու առանձին բեկորների վրա.

[Ի վայելումն դարաբասցի ողորմած հոգի Բաղդասարի որդի խօջա Ղազարին. նախ պապս՝ ո-ղո[ղման հոգի Գալուստ, հօրեղբար]ս իմ՝ ողո[ղման հոգի Եաղուբ, և ողորմած] հոգի Գրիգոր, [թվ(ին) ՌՃՀ (1721), ողորմած հոգի հօրեղբարց]ս հետ ե-կինք Դուզաղ[ի գիւղն Թաղօտ, թվ(ին) ՌՃԾԲ (1703): Մեծ հօրեղբարս իմ՝ Եաղուբն, առ ա(ստուա)ծ փոխեցաւ թվ(ին) ՌՃԾԷ (1708), փոքր հօրեղբարս իմ՝ Գրիգորն, առ ա(ստուա)ծ փոխեցաւ թվ(ին) ՌՃՁԸ (1739)]: Ա(ստուծո)վ ըսգսա շինել, ա(ստուա)ծ բարի աջողում դացէ, ամէն:

Ծանոթ. չպահպանված հատվածները լրացրել ենք ըստ վիմագրի առաջին ընդօրինակող Խաչիկ վրդ. Դաղյանի (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 27):

բ Գյուղի կենտրոնական մասում՝ դպրոցին կից շինության (2004 թ.՝ արհեստանոց) մուտքի ճակատակալ քարին, 9 տող.

Ի վայելումն / ողորմած հոգի Բաղդասարի / որդի խօջա Ղազարին, թվին ՌՃՁԷ (1738): / Ա(ստուծո)վ ըսկսա շինել, որ տ(է)ր ա(ստուա)ծ բարի աջ/ողում դացի ի յամի հայրապետութե(ա)ն / տ(եառ)ն Աղվանից Ներսէս կաթողիկոս(ի)ն եւ / ի թագաւորութ(եա)ն պարսից Շահ Նադ(ի)րին, իշխան / երկրիս ս(ա)հապ Եկանն էր, որդի մէլիք Արամ բէկին, / ա(ստուա)ծ սոցա կարողութ(ի)ն դացի, ամէն:

Հրատ. **Աքայան Գ.**, Տող բերդաքաղաքի պատմություն, Երևան, 2010, էջ 33:

Ծանոթ. վիմագրի առաջին ընդօրինակողն է Խաչիկ վրդ. Դաղյանը (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 27):

Հրատարակչի մոտ *ս(ա)հապ Եկանն էր*-ի փոխարեն՝ *և կապ Եկանն էր*, իսկ *Արամ բէկին*-ի փոխարեն՝ *Արամին Էկեն*:

15 Դեռևս 2016 թ. կիսավեր պահպանվում էր Բաքվի 26 կոմիսարներից պարետ (1918 թ.) Բաղդասար Հայրապետյան-Ավագյանի (1883-1918) հայրական տունը:





Արձանագրություն *ա* և *բ* (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2021 թ.)

գ Գյուղամիջում՝ բնակելի տան ճակատակալ քարին (113 x 63 x 18 սմ), 4 տող.

Այս է դունը գ/ամ օթեան, որ է ուսդա / Յակոբ Սաղիեան, կին նորա՝ Թա/քուի Արզուման, 1846-ին:

Արձանագրություն գ (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ.)

1844 թ. տունը և արձանագրությունը՝ *դ* (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2016 թ.)

դ Գյուղամիջում՝ բնակելի տան ճակատակալ քարին, սվաղի շերտով ծածկված արձանագրությունից երևում է 2 տող.

...այ... | ուստին, թվ(ի)ն 1844-ին:

ե Գյուղամիջում՝ դպրոցի մոտ՝ բնակելի տան տեղահանված ճակատակալ քարին (112 x 55 x 18 սմ), 4 տող.

Ի վայելումն ողորմ/ած հոգի Արզուման | բէկ Ղազարբէկեանց(ին), | թվին 1850-ին:

զ Գյուղամիջում՝ բնակելի տներից մեկի պատին, լուսամուտին կից առկա վիմագրից պահպանվել է հետևյալը.

...ճիւր Յակոբին, | Օվանէ[ս]:

Ծանոթ. ժամանակը՝ ԺԹ դ.:

է Գյուղամիջում՝ Սբ. Հովհաննես եկեղեցուց արևելք ընկած կամարակապ քարին (130 x 29 x 13 սմ), 4 տող վիմագրից պահպանվել է հետևյալը.

Այս է օթաղըս ըՍ/տեփան, որ Սարգիսին | ... 185... |...:

Արձանագրություն *ե* (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ.), *զ* (լուս.՝ Ս. Դանիելյանի, 2001 թ.) և *է* (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ.)

Սբ. Հովհաննես եկեղեցին հարավ-արևուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ.)

Սբ. Հովհաննես եկեղեցի

Գտնվում է գյուղի հյուսիսային եզրին (N 39°34′26.93″, E 046°57′44.26″; ծ. մ.՝ 835 մ): Կառուցման ստույգ տարեթիվը հայտնի չէ: Գրավոր աղբյուրներում հիշվում է տակավին 1841 թ.-ից:

Ունի միանավ բազիլիկ հորինվածք (արտաքին չափերն են՝ 13,98 x 8,0 մ): Երկլանջ ծածկի ներքո առնված տանիքը հենված է հյուսիսային և հարավային պատերին: Արևելյան կողմում կիսաշրջան եզրագծով խորանն է՝ կից ավանդատներով: Ավանդական տեղում է մկրտության խորշը՝ ավազանով հանդերձ: Մուտքը բացված է հարավից: Լուսավորությունն ապահովում են 6 լուսամուտները, որոնցից 3-ը բացված են արևելյան, 1-ական՝ մյուս ճակատներից: Կառուցված է անմշակ, կիսամշակ և սրբատաշ քարով կրաշաղախի համակցությամբ: Վերջինս կիրառված է կառույցի առավել պատասխանատու հատվածներում (մուտքի և լուսամուտների եզրաքարեր, անկյունաքարեր, որմնակամար): Հարավային ճակատին ագուցված է նվիրատվական բնույթի արձանագրություն, իսկ նույն պատի մոտ պահպանված երկու տապանաքարերից մեկը կերտվել է գյուղի ծխատեր քահանայի՝ տեր Մելիքսեթի որդու՝ տեր Գասպարի հիշատակին: Ի դեպ, Թաղոտում քահանայագործած հոգևոր հովիվներից հայտնի են նաև Մելիքսեթ Տեր-Հարությունյան Մովսես-Վարդանյանցի (1817-1844)[16], Հակոբ Արզումանբեկյան-Ղազարբեկյանցի (1848-1893)[17] և Մովսես Ղազարբեկյանցի (1909-1910) անունները[18]:

Ներկայացնում ենք եկեղեցու որմին առկա 1 և կից գտնվող 2 տապանաքարի արձանագրություն.

16 **Թօփճեան Յ.**, Յուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900, էջ 21, 23: Նաև՝ ՀԱԴ, ֆ. 56, ց. 12, գ. 531, 532, 533:

17 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 165, 207: Նաև՝ ՀԱԴ, **ֆ. 56**, ց. 18, գ. 542; ց. 1, գ. 8889, թ. 157 շրջ.-158; **ֆ. 93**, ց. 1, գ. 384, թ. 449 շրջ.-450 (1893 թ. հիշվում է հանգուցյալ):

18 ՀԱԴ, **ֆ. 56**, ց. 18, գ. 764, թ. 260-261; ց. 1, գ. 11608, թ. 360 շրջ.; **ֆ. 57**, ց. 3, գ. 44, թ. 71-72:



Սբ. Հովհաննես եկեղեցու հատակագիծը (չափ.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ.)

ա Արձանագիր քար. Սբ. Հովհաննես եկեղեցու հարավային ճակատին՝ մուտքից վեր, 4 տող.

Հիշատակ է այս ... ընծա(յ)/եց Սուրբ Հովհաննէս եկեղեցի Թաղոդ գեղջ. / Յովակիմի Անդոնե(ա)ն Կարապետեանց, / 1886:

բ Տապանաքար. ուղղանկյունաձև (145 x 48 x 24 սմ), Սբ. Հովհաննես եկեղեցու հարավային պատի մոտ, արձանագրությունը՝ 1 տող.

[Այս] է տ(ա)պ(ա)ն Եղիազարի որդի Հախնազարին, թվ(ին) ՌՃՁ (1731):

Արձանագրություն *ա, բ* և *գ* (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2021 թ.)

գ Տապանաքար. ուղղանկյունաձև (189 x 41 x 30 սմ), Սբ. Հովհաննես եկեղեցու հարավային պատի մոտ, արձանագրությունը՝ 1 տող.

Այս է տապան տ(է)ր Միլիքսէթ(ի) որդ(ի) տ(է)ր Քասպարին, թվ(ին) ՌՃՂ (1741):

Գերեզմանոց

Տարածվում է Թաղոտի հարավարևմտյան մասում (N 39°34′17.94″, E 046°57′45.39″; ծ. մ.՝ 900 մ): Պահպանված մի քանի տասնյակ տապանաքարերը թվագրվում են ԺԶ-Ի դարերով: Ստորև ներկայացնում ենք հնավայրից ընդօրինակված ԺԶ-ԺԹ դարերին վերաբերող տապանագրերն ըստ ժամանակագրական հաջորդականության (հրատարակվում են առաջին անգամ).

ա Տապանաքար. ուղղանկյունաձև (156 x 47 x 30 սմ), արձանագրությունը՝ 2 տող.

Այս է տապան Օվանեսին՝ որդի Օմարունին (՞), / թվ(ին) Ռ (1551):

բ Տապանաքար. ուղղանկյունաձև (146 x 41-47 x 30 սմ), արձանագրությունը՝ 4 տող.

Այս է տապան վաջառական Գրիքոր[ին], որ է որդի / Գալուստին, օվ հանտիպող գերեզմանիս միա/բէրան հար մեղայիս, որ է երկիրէն Ղափանցի / ի գեղջէն դարայբազցի, թվ(ին) ՌՃՁԵ (1736):

Արձանագրություն *բ* և *դ* (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2021 թ.)

գ Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ հարավային երեսին, 3 տող.

Այս է տապան դափան/ցի Մկ(ոտ)չի կողակից / Իրինին, թվ(ին) ՌՃՂԱ (1742):

դ Տապանաքար. ուղղանկյունաձև (112 x 32 x 23 սմ), արձանագրությունը՝ 4 տող.

Այս է տապան խոճայ / Ղազարի որդի Սիմայ/ոնին, որ փոխեցաւ առ / ա(ստուա)ծ, թվին ՌՃՂԴ (1745):

ե Տապանաքար. ուղղանկյունաձև (164 x 40 x 36 սմ), արձանագրությունը՝ 4 տող.

Այս է տապան դափանեցի Պաղդասարի / որդի վաճառական խոճայ Ղազարին, / իւր կողագից Խաքուն(ին), / թվ(ին) ՌՄԶ (1757), որ փոխ/եցաւ առ ա(ստուա)ծ, որ կարթայ, մէկ բերան ողորմի ասէ:

զ Տապանաքար. ուղղանկյունաձև (155 x 42 x 28 սմ), արձանագրությունը՝ 4 տող.

Այս է տապան դափանեցի խոճայ [Ղա]/զարի եւ իւր կողագից Խաքուն(ին), առ ա(ստուա)ծ փ/ոխեցաւ, օվ որ կարդա, մէկ բերան ողորմի / ասայ, թվ(ին) ՌՄԹ (1760):

է Տապանաքար. ուղղանկյունաձև (144 x 34 x 24 սմ), արձանագրությունը՝ 2 տող.

Այս է տապան քաղութցի Այլայվէրտին / էր կողակիցն Թավարին, թո(ւ){վ}ին Ռ{Ճ}ՄԲ (1773):



Արձանագրություն *ե, զ* և *է* (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2021 թ.)

ը Տապանաքար. ուղղանկյունաձև (188 x 57 x 36 սմ), արձանագրությունը՝ հյուսիսային երեսին, 3 տող.

Այս է տապան խոճայ Ղազարի(ն) Ուրալի (՞) որդի Բաղ/տայսարին, իւր կողակից Մափէրին, թո(ւ)ին ՌՄ/ՃԼԶ (1787):

թ Տապանաքար. ուղղանկյունաձև (133,5 x 42 x 25 սմ), արձանագրությունը՝ 5 տող.

Այս է տապան Բաղտասարին՝ / որդի Բապուն, Անտարին(՞), որ / Աղայ Մահմատ խան եկ/աւ, հոգին առ ա(ստուա)ծ փոխեցաւ, / ով գարդայ, ողորմի ասէ:

Ծանոթ. տապանաքարի կերտման ժամանակը ճշտվում է Աղա Մահմադ խանի արշավանքով, այն է՝ 1795 թ.:

ժ Տապանաքար. ուղղանկյունաձև (169 x 58 սմ), արձանագրությունը՝ 2 տող.

Այս է տապան Ոյանճանին, որ է որդի / խոճա Ղազարին, թվ(ին) ՌՄԽԹ (1800)-(ի)ն:

ժա Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան քաղօտեցի Մարքարէին՝ / որդի Ապրէսին, որ առ ա(ստուա)ծ փոխեցաւ, / թվ(ին) ՌՄԽԹ (1800) էր:

Արձանագրություն *ը, թ, ժ* և *ժա* (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2001 թ., գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2021 թ.)

ժբ Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան Այտինի որդի | քաղուտեցի Պետրոսին, | ա(ստուա)ծ ոգին | լուսաւորցէ, ամէն, թ(վ)ին ՌՄԽԹ (1800)-(ի)ն:

ժգ Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 1 տող.

Այս է տապան դալաք աքաղուտեցի Գալուստին, թվ(ին) ՌՄԾ (1801) էր:

ժդ Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան խոճայ Ղազարի որդի | Բաղտասար քօխին, որ փոխեցաւ | առ ա(ստուա)ծ, թվ(ին) ՌՄԾԴ (1805):

ժե Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան լուսահոգի Թունի որդի | Քսականց Գրիգորին, թվ(ին) ՌՄՀԲ (1823), | ոք որ կարդա, միաբերան ողորմի ասէ:

ժզ Տապանաքար. ուղղանկյունաձև, արձանագրությունը՝ 3 տող.

Այս է տապան լուսահոգի | աշխատաւոր Յակոբճանին, որ է որդի | Գարապետին, օվ կարդա, ա(ստուա)ծ ողո(ր)մի ասէ), թվ(ին) 1869:

Աղբյուր

Գյուղամիջում պահպանվել է 1738 թ. Սյունյաց աշխարհի Աղվերձ գյուղից (այժմ՝ Սյունիքի մարզ, գ. Դարբաս) սերող թաղոտաբնակ խոջա Ղազարի կառուցած, սակայն վաղուց ի վեր խափանված կամարակապ աղբյուրը, որի ճակատին 7 տողով արձանագրված է.

Այս է աղբուրս ղափանեցի | եւ Աղվէրծու խօճայ Ղազարի|ն, որ եկ ի Դզաղ՝ Թաղօտ գեղն, Ռ/ՃԿԸ (1719) էր: Շինեց ի յիշատակն ննջ|եցելոց իմոց ազգականաց Ղազ|արին, մայր իւր՝ Մարեանին, սոքայ | են աշխատաւորքն, թվ(ի)ն ՌՃՁԷ (1738):

Հրատ. **Մկրտչյան Շ.**, Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 117: Տե՛ս նաև **Աքայան Գ.**, նշվ. աշխ., էջ 33:

Ծանոթ. վիմագրի առաջին ընդօրինակողն է Խաչիկ վրդ. Դաղյանը (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 107, թ. 27):

Աքայանի մոտ *ՌՃՁԷ*-ի փոխարեն՝ սխալմամբ *ՌՃՁԲ*:

Ճվավանք ուխտատեղի

Գտնվում է գյուղից մոտ 800 մ հարավ-արևմուտք՝ բարձունքի վրա (N 39°34′01.20″, E 046°57′21.13″; ծ. մ.՝ 1123 մ):

1922 թ. հիշատակվում է Ճառավանք անվամբ[19]: Ուխտատեղին քանդել են խորհրդային տարիներին: Տեղում պահպանվել են տարբեր շինությունների մնացորդներ:

Շրջակայքում տարածված գերեզմանոցից 2001 թ. դեռևս առկա էին միայն ԺԲ-ԺԳ դարերի գեղաքանդակ և պատկերաքանդակներով հարդարված 8 խաչքար (երեքն արձանագիր են և հրատարակվում են առաջին անգամ) և խաչքարերի բեկորներ.

19 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, էջ 759:

Աղբյուրը և արձանագրությունը (լուս. և գրչ.՝ Ս. Դանիելյանի, 2016, 2021 թթ.)

ա Խաչքար (66 x 35 x 12 սմ), արձանագրությունը՝ ստորին մասում՝ պատկերաքանդակի երկու կողմում, 10 կարճ տող.

Ա(ստուա)ծ | ողո|ր(մ)|ի Հ/ուր|մս|իմ/ա, | (թվին) Ո/Գ (1154):

բ Խաչքար (52 x 32 x 13 սմ). արձանագրությունը՝ կողին, 15 կարճ տող.

Թվ(ին) | ՈԴ (1155), | ես՝ Մ/իրում/ի՞, յաղ/աւթս | յիշե/ցեք ի | Ք(րիստո)ս: Զգ/ործողս | Շահո/ւմո յաղ/աւթս | յիշեց/եք ի Ք(րիստո)ս:

գ Խաչքար (55 x 32 x 24 սմ). վերնամասը ջարդոտված է, կողին փորագիր արձանագրությունից պահպանվել է հետևյալը.

...[կ]/ան[գնե]/ցի զխ/աչս յա/ւր իմո | Խաչա/տուր/այ:

Խաչքարեր (լուս.՝ Ս. Կ.-ի, 2001 թ., գրչ.՝ Ս. Դ.-ի, 2021 թ.)



ՀՃՈՒՇ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն գրքույկում ներկայացնում ենք ԺԷ-Ի դդ. պատկանող 77 առավել ակնառու նմուշ, որոնց շնորհիվ կարելի է պատկերացում կազմել Սիրիայում գտնվող հայ արվեստի գանձերի մասին:



2021 Թ.
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՆ
ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԳՐՔԱՇԱՐԻ

ԽՆՈՒՍ
ԵՎ
ՊԱՐՍՊԱՏՈՒՆԻՔ

ՀԱՏՈՐՆԵՐԸ

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ
ՅՈՎԱՆԱՎՈՐ
ԳԱԼՈՒՍՏ
ԿՈՒԼՊԷՆԿԵԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԱԵՏԱՍՏԱՆԹԵՐԻ
ՅՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ

ՀՀ ԿԳՍՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,

RAA-USA ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

RAA

ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՏ

RESEARCH ON ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2021

ISBN 1829-2003